

Հավելված
ՀՀ կառավարության 2026 թվականի
փետրվարի 26-ի N 226 - Ա որոշման

Ջ Ե Կ ՈՒ Յ Ց

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ
(2021-2026 ԹԹ.) 2025 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՅՔԻ ԵՎ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

2025 թվականը ՀՀ անկախությունից ի վեր առաջին օրացուցային տարին է, երբ Հայաստանի և Ադրբեջանի միջև փոխհրաձգության հետևանքով զոհեր կամ վիրավորներ չեն եղել: Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև 2025 թվականի օգոստոսի 8-ին խաղաղություն է հաստատվել: 2025 թվականն անկախությունից ի վեր առաջին տարին է, երբ Հայաստանի Հանրապետությունից ՀՀ քաղաքացիների արտագաղթը փոխարինվել է ներգաղթով: 2025 թվականին արձանագրվել է բարձր տնտեսական աճ (7,2%), ինչի արդյունքում 2021-2025 թթ. ՀՆԱ միջին տարեկան աճը կազմել է 7,9%, իսկ 2017-2025 թթ. կտրվածքով՝ 5,8% (2017 թվականի համեմատ կուտակային աճը կազմել է 53,9%):

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

2025 թվականի արդյունքներով **պետական բյուջեի եկամուտները** կազմել են 2 տրլն 886,5 մլրդ ՀՀ դրամ, ինչը նախորդ տարվա ցուցանիշից ավելի է շուրջ 307,3 մլրդ ՀՀ դրամով կամ 11,9%-ով, իսկ 2017 թվականի ցուցանիշից ավելի է 2,3 անգամ կամ 1 տրլն 648,8 մլրդ ՀՀ դրամով: Այսպիսով, ապահովվել է ՀՀ Կառավարության (այսուհետ՝ Կառավարություն) կողմից ճշտված ծրագրի 101,3% կատարողական՝ նախորդ տարվա համեմատ արձանագրելով 5,5 տոկոսային կետով բարելավում:

Ընդհանուրի մեջ **հարկային եկամուտները և պետական տուրքերը** կազմել են 2 տրլն 725,2 մլրդ ՀՀ դրամ՝ ապահովելով ճշտված ծրագրի 100,3% կատարողական և 7,6 տոկոսային կետով բարելավում՝ նախորդ տարվա համեմատ: 2025 թվականին պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը նախորդ տարվա համեմատ գրանցել են շուրջ 14% աճ կամ հավելյալ 334,3 մլրդ ՀՀ դրամի եկամուտ, իսկ 2017 թվականի համեմատ գրանցել են շուրջ 2,4 անգամ աճ կամ հավելյալ 1 տրլն 567,8 մլրդ ՀՀ դրամի եկամուտ: Ընդ որում, նախորդ տարվա նկատմամբ էական աճ է արձանագրվել հետևյալ հարկատեսակներով՝

- ԱԱՀ աճը՝ շուրջ 158,5 մլրդ ՀՀ դրամ կամ 21%.
- ակցիզային հարկի աճը՝ շուրջ 17,8 մլրդ ՀՀ դրամ կամ 12,1%.
- շահութահարկի աճը՝ շուրջ 65,8 մլրդ ՀՀ դրամ կամ 19,6%.
- եկամտային հարկի աճը՝ շուրջ 76,8 մլրդ ՀՀ դրամ կամ 11,8%.
- շրջանառության հարկի աճը՝ շուրջ 18,3 մլրդ ՀՀ դրամ կամ 30,1%:

Պետական բյուջեի ծախսերը 2025 թվականին կազմել են 3 տրլն 305,3 մլրդ ՀՀ դրամ՝ 2024 թվականի համեմատ աճելով 11,8%-ով կամ 350 մլրդ ՀՀ դրամով, իսկ 2017 թվականի համեմատ աճելով շուրջ 2,2 անգամ կամ 1 տրլն 800,5 մլրդ ՀՀ դրամով: Ծախսերի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 95,8%՝ նախորդ տարվա համեմատ բարելավվելով շուրջ 2 տոկոսային կետով:

2025 թվականին Կառավարության ծրագրային նպատակներն իրագործելու կարևոր գրավականներից մեկը շարունակել է մնալ **կապիտալ ծախսերի** զգալի աճը: Նախորդ

տարվա համեմատ կապիտալ ծախսերն ավելացել են 144,8 մլրդ ՀՀ դրամով կամ 26%-ով՝ կազմելով ավելի քան 702,5 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2017 թվականի համեմատ ծախսերն ավելացել են 464,2 մլրդ ՀՀ դրամով կամ ավելի քան 2,9 անգամ: 2025 թվականին կապիտալ ծախսերի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 89,6%՝ նախորդ տարվա համեմատ բարելավվելով 4,9 տոկոսային կետով:

Հաշվետու տարում շարունակել են աճել տնտեսական և սոցիալական ոլորտներում կատարված կապիտալ ծախսերը՝ կազմելով շուրջ 255,4 մլրդ ՀՀ դրամ՝ 2024 թվականի նկատմամբ արձանագրելով 35,3% աճ, իսկ համայնքային ներդրումային ծրագրերի համաֆինանսավորման նպատակով հատկացված սուբվենցիաների ներառմամբ՝ շուրջ 293 մլրդ ՀՀ դրամ՝ 2024 թվականի նկատմամբ արձանագրելով 31,6% աճ: Վերջին տարիներին արձանագրված բարձր աճի արդյունքում տնտեսական և սոցիալական ոլորտներում 2025 թվականի ընթացքում կապիտալ ծախսերի մակարդակը (ներառյալ սուբվենցիաների մասը) 2018 թվականի համեմատ ավելի քան եռապատկվել է (ավելացել է 3,5 անգամ), իսկ 2017 թվականի համեմատ ավելացել է 2,9 անգամ:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի օգոստոսի 8-ին Վաշինգտոնում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ԱՀ նախագահ Իլիան Ալիևի և ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հանդիպման արդյունքում ստորագրվել է համատեղ հռչակագիր, որով Հայաստանի և Ադրբեյջանի միջև խաղաղություն է հաստատվել: Նույն օրը ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը և ԱՀ ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովը նախաստորագրել են Խաղաղության համաձայնագիրը, ինչպես նաև ստորագրել ԵԱՀԿ-ին ուղղված համատեղ դիմումը՝ Մինսկի գործընթացի և կից կառուցակարգերի լուծարման վերաբերյալ:

Էկոնոմիկայի և խաղաղության ինստիտուտի Խաղաղության համաշխարհային ցուցիչում, որն աշխարհում խաղաղության մակարդակի գնահատման կարևոր ցուցանիշ է և հաշվի է առնում հակամարտությունները, ռազմական ծախսերը և երկրներում բռնությունների մակարդակը, 163 երկրի շարքում Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ ՀՀ կամ Հայաստան) զբաղեցնում է 58-րդ հորիզոնականը՝ նախորդ տարվա համեմատ բարելավվելով դիրքը 18 հորիզոնականով: Հայաստանում խաղաղության վիճակն առաջին անգամ գնահատվել է «բարձր»: Այս ցուցանիշով ՀՀ-ն առաջատարն է հարավկովկասյան տարածաշրջանում:

Կառավարությունը շարունակել է իր որդեգրած հավասարակշռված և հավասարակշռման արտաքին քաղաքականությունը, որը նպատակ ունի, ամրապնդելով Հայաստանի Հանրապետության անկախությունը, ինքնիշխանությունը, անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը, առաջ մղելու խաղաղության և կայուն զարգացման օրակարգերը:

Ադրբեջան – 2025 թվականին տեղի է ունեցել ՀՀ վարչապետի և Ադրբեջանի Հանրապետության (այսուհետ՝ ԱՀ) նախագահի 5, Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի 3 հանդիպում (որոնցից մեկը՝ Ադրբեջանի Գաբալա քաղաքում), արտաքին գործերի նախարարների 2 հանդիպում, ՀՀ ԱԱԾ տնօրենի և ԱՀ ՊԱԾ պետի 1 հանդիպում (ԱՀ մայրաքաղաք Բաքվում):

Մարտին ավարտին են հասցվել Ադրբեջանի հետ «Խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին» համաձայնագրի շուրջ բանակցությունները: Խաղաղության հաստատումից հետո՝ հոկտեմբերի 21-ին, ԱՀ նախագահ Իլհամ Ալիևը հայտարարել է, որ Վաշինգտոնում ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ Ադրբեջանը վերացրել է իր տարածքով դեպի Հայաստան բեռների տարանցման համար բոլոր սահմանափակումները: Նոյեմբերին Ռուսաստանից և Ղազախստանից Ադրբեջանի ու Վրաստանի տարածքով երկաթուղով Հայաստան են ներմուծվել ցորենի առաջին խմբաքանակները: Դեկտեմբերին Ադրբեջանից Հայաստան է ներմուծվել շուրջ 1 200 տոննա նավթամթերք:

Իրանի Իսլամական Հանրապետություն (այսուհետ՝ ԻԻՀ) – 2025 թվականի օգոստոսի 18-19-ը պաշտոնական այցով ՀՀ է ժամանել ԻԻՀ նախագահ Մասուդ Փեզեշքիանը և հանդիպել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ: 2025 թվականի ընթացքում կայացել է ՀՀ վարչապետի և ԻԻՀ նախագահի 4 հեռախոսազրույց: 2025 թվականի ընթացքում պաշտոնական այցերով Հայաստանում են գտնվել ԻԻՀ ԱԳ նախարար Սեյեդ Աբբաս Արադչին և ԻԻՀ պաշտպանության և զինված ուժերի աջակցման նախարար, բրիգադի գեներալ Ազիզ Նասիրզադեն: 2025 թվականի ընթացքում կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և ԻԻՀ ԱԳ նախարար Սեյեդ Աբբաս Արադչիի 3 հանդիպում: ԻԻՀ աշխատանքային այցով մեկնել են ՀՀ անվտանգության խորհրդի (այսուհետ՝ ԱԽ) քարտուղարը և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարը, ում այցի շրջանակում ստորագրվել է երկու փոխըմբռնման հուշագիր: ԻԻՀ են այցելել նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահը և ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարը: Պերսեպոլիսի պատմական հուշարձան-համալիրի տարածքում տեղի է ունեցել Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հիմնադրման 100-ամյակին նվիրված համերգ: ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը մասնակցել է «Թեհրանյան երկխոսություն» համաժողովին:

Տեղի են ունեցել ԻԻՀ արդարադատության նախարարի և ԻԻՀ ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղարի աշխատանքային այցերը Հայաստան: ԻԻՀ-ից ՀՀ են ժամանել նաև ԻԻՀ ճանապարհների և քաղաքաշինության նախարարը, ԻԻՀ արդյունաբերության, հանքերի և առևտրի նախարարը (ԻԻՀ նախագահի այցի շրջանակներում), ԻԻՀ տնտեսական հարցերի և ֆինանսների նախարարի տեղակալ, ԻԻՀ մաքսային ծառայության ղեկավարը:

Ստորագրվել է զբոսաշրջության ոլորտում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր:

2025 թվականի արդյունքներով Հայաստանի և Իրանի միջև առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 768 մլն ԱՄՆ դոլար՝ 2024 թվականի համեմատ աճելով 4,2%-ով:

Վրաստան - Հունվարի 29-30-ը Երևանում կայացել է ՀՀ և Վրաստանի վարչապետների գլխավորությամբ Հայաստանի և Վրաստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 14-րդ նիստը: Հոկտեմբերի 21-22-ը տեղի է ունեցել ՀՀ վարչապետի այցը Վրաստան՝ Թբիլիսիի «Մետաքսի ճանապարհ» 4-րդ միջազգային համաժողովին մասնակցելու նպատակով:

Հայաստանի և Վրաստանի ֆուտբոլի ազգային հավաքականների հանդիպումը դիտելու նպատակով փոխադարձ ոչ պաշտոնական այցեր են ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն:

Տեղի են ունեցել Վրաստանի նախագահի պաշտոնական և Վրաստանի առաջին փոխվարչապետ, Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարի, Վրաստանի ԱԳ նախարարի, Մշակույթի նախարարի, Կրթության, գիտության և երիտասարդության նախարարի, Պաշտպանության նախարարի այցերը Հայաստան:

Պաշտոնական այցով Վրաստան են այցելել ՀՀ ԱԳ նախարարը, աշխատանքային այցերով ՀՀ ԿԳՄՍ նախարարը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարը (այսուհետ՝ ՏԿԵ նախարար), ՀՀ ներքին գործերի նախարարը, ՀՀ արդարադատության նախարարը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը և Երևանի քաղաքապետը:

Հունիսի 5-7-ը Երևանում տեղի են ունեցել Վրաստանի մշակույթի օրերը: Մայիսի 6-ին Երևանում անցկացվել է Հայաստան-Վրաստան գործարար համաժողովը:

Օգոստոսի 20-22-ը Երևանում Հայաստանի և Վրաստանի ԱԳ նախարարությունների միջև անցկացվել են քաղաքական խորհրդակցություններ:

2025 թվականի ընթացքում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի և Վրաստանի զբոսաշրջության ազգային ադմինիստրացիայի միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության ճանապարհային քարտեզը:

2025 թվականին Հայաստանի և Վրաստանի միջև առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 279 մլն ԱՄՆ դոլար՝ 2024 թվականի համեմատ նվազելով 16,2%-ով:

Թուրքիա (այսուհետ նաև՝ ԹՀ) – 2025 թվականի ընթացքում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ԹՀ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի 2 հանդիպում, որից մեկը՝ ՀՀ վարչապետի Թուրքիա կատարած աշխատանքային այցի շրջանակներում: ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և ԹՀ ԱԳ նախարար Հաքան Ֆիդանի միջև տեղի է ունեցել հանդիպում Անթալիայի դիվանագիտական ֆորումի շրջանակներում: Սեպտեմբերի 12-ին Երևանում տեղի է

ունեցել Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացի հատուկ ներկայացուցիչներ, ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանի և դեսպան Սերգար Բըլըչի 6-րդ հանդիպումը:

2025 թվականի ընթացքում կայացել են նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի և ԹՀ ընտանիքի և սոցիալական ծառայությունների նախարարի, ՀՀ էկոնոմիկայի նախարարի և ԹՀ գյուղատնտեսության և անտառտնտեսության նախարարի, ՀՀ ՏԿԵ նախարարի և ԹՀ տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարարի ու Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի միջև մեկական հանդիպում:

Ապրիլի 9-ին Ստամբուլում տեղի է ունեցել Անիի կամրջի վերականգնման հարցերով համատեղ միջգերատեսչական աշխատանքային խմբի առաջին հանդիպումը: Նոյեմբերի 28-ին ՀՀ-ԹՀ սահմանին և Գյումրի քաղաքում տեղի է ունեցել Գյումրի-Կարս երկաթգծի վերականգնման հարցերով միջգերատեսչական աշխատանքային խմբի հանդիպումը:

Համաձայն հատուկ ներկայացուցիչների միջև ձեռք բերված պայմանավորվածության՝ Հայաստանն ու Թուրքիան որոշում են կայացրել 2026 թվականի հունվարի 1-ից ապահովելու երկու երկրների դիվանագիտական, ծառայողական և հատուկ անձնագիր կրող անձանց համար անվճար էլեկտրոնային վիզա (e-visa) ստանալու հնարավորությունը: ՀՀ Կառավարության համապատասխան որոշումն ընդունվել է 2025 թվականի դեկտեմբերի 29-ին:

Ռուսաստանի Դաշնություն (այսուհետ՝ ՌԴ) - 2025 թվականի ընթացքում շարունակվել է ՌԴ-ի հետ բարձրագույն և բարձր մակարդակներով երկխոսությունը: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի միջև կայացել են 4 հանդիպում և 5 հեռախոսազրույց: ՀՀ վարչապետը Մոսկվայում մասնակցել է Հայրենական Մեծ Պատերազմում հաղթանակին նվիրված միջոցառումներին: 2025 թվականի հուլիսի 24-ին անցկացված Բնության և շրջակա միջավայրի պաշտպանությանը նվիրված միջազգային համաժողովի շրջանակում Ալթայի Հանրապետությունում տեղի է ունեցել ՀՀ վարչապետի և ՌԴ կառավարության նախագահ Միխայիլ Միշուստինի հանդիպումը: 2025 թվականի սեպտեմբերի 25-ին Մոսկվայում ՀՀ վարչապետը մասնակցել է «Համաշխարհային ատոմային շաբաթ» խորագրով համաժողովին: 2025 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի և ՌԴ փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկի համանախագահությամբ Երևանում կայացել է ՀՀ-ՌԴ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական՝ 24-րդ նիստը: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և ՌԴ բնական ռեսուրսների ու էկոլոգիայի նախարարության միջև ստորագրվել է հուշագիր՝ 2026-2028 թթ. բնապահպանական համագործակցության ծրագրի վերաբերյալ: Հայաստանը և Ռուսաստանն ակտիվ գործակցել են ԵԱՏՄ և ԱՊՀ շրջանակներում:

2025 թվականին ՀՀ և ՌԴ միջև առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 7,7 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2024 թվականի համեմատ նվազելով շուրջ 38,3%-ով:

Ամերիկայի Միացյալ Նահանգներ (այսուհետ՝ ԱՄՆ) – 2025 թվականի ընթացքում Հայաստան-ԱՄՆ հարաբերությունները բարձրացվել են ռազմավարական գործընկերության մակարդակի, շարունակվել են աշխատանքները փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում համագործակցության խորացման ուղղությամբ: Հունվարի 14-ին Վաշինգտոնում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը և ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենն ստորագրել են ՀՀ-ԱՄՆ ռազմավարական գործընկերության կանոնադրությունը: Փետրվարի 3-5-ը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Վաշինգտոնում մասնակցել է Միջազգային կրոնական ազատության գազաթնաժողովին և Ազգային աղոթքի նախաճաշին, հանդիպում է ունեցել ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի հետ:

Օգոստոսի 8-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կողմից Սպիտակ տանն ստորագրվել են ՀՀ և ԱՄՆ կառավարությունների միջև «Խաղաղության խաչմերուկ» նախագծի կարողությունների զարգացման ոլորտում գործընկերության, Արհեստական բանականության և կիսահաղորդիչների ոլորտում նորարարական գործընկերության, Էներգետիկ անվտանգության ոլորտում գործընկերության մասին փոխըմբռնման հուշագրերը:

ՀՀ են այցելել մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ ԱՄՆ պետքարտուղարի քաղաքական հարցերով տեղակալ Էլիսան Հուքերը, պետքարտուղարի փոխտեղակալ Ջոշուա Հաքը: ԱՄՆ պետքարտուղարության Եվրոպայի և Եվրասիայի հարցերով բյուրոյի ավագ պաշտոնյա Բրենդան Հանրահանը Հայաստան այցի շրջանակներում հայտարարել է TRIPP ծրագրի իրականացման նպատակով 145 մլն դոլարի փաթեթի մասին:

Կայացել է ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորած պատվիրակության այցն ԱՄՆ:

Հունվարի 14-ին հայտարարված՝ միջուկային էներգիայի խաղաղ օգտագործման ոլորտում ՀՀ-ԱՄՆ համագործակցության մասին «123 համաձայնագրի» շուրջ բանակցությունների մեկնարկին հետևել է ՀՀ և ԱՄՆ իրավասու մարմինների ներկայացուցիչների առցանց բանակցությունների երեք փուլ, որոնց ընթացքում կողմերը համաձայնեցրել են համաձայնագրի գրեթե բոլոր կետերը:

2025 թվականին Հայաստանի և ԱՄՆ-ի միջև առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 348 մլն ԱՄՆ դոլար՝ 2024 թվականի համեմատ նվազելով 15,2%-ով:

Եվրոպական միություն (այսուհետ՝ ԵՄ) – 2025 թվականին ՀՀ ԱԺ-ն ընդունել է «Եվրոպական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» օրենքը:

ՀՀ վարչապետը մասնակցել է «Եվրոպական քաղաքական համայնք»-ի 6-րդ և 7-րդ գազաթնաժողովներին, «Համաշխարհային դարպաս» 2-րդ համաժողովին, երկկողմ այցեր են իրականացվել դեպի Բրյուսել և հանդիպումներ են կայացել ԵՄ բարձրաստիճան գործընկերների հետ, այդ թվում՝ ԵԽ նախագահ Անտոնիու Կոշտայի և ԵՀ նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի հետ: Որոշում է կայացվել 2026

թվականին Հայաստանում անցկացնել Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովը, ինչպես նաև ՀՀ-ԵՄ առաջին գագաթնաժողովը:

ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը և ԵՄ հանձնակատար Մարթա Կոսը հանդես են եկել հայտարարություններով՝ ազդարարելով բարձր մակարդակի քաղաքականության երկխոսության մեկնարկի մասին:

ՀՀ ԱԳ նախարարը երկկողմ հանդիպումներ է ունեցել ԵՄ ԱԳԱԲ հարցերով բարձր ներկայացուցիչ Կայա Կալասի և ընդլայնման հարցերով ԵՄ հանձնակատար Մարթա Կոսի հետ: Միաժամանակ տեղի են ունեցել վերջիններիս այցերը Երևան:

Տեղի են ունեցել ՀՀ-ԵՄ հետևյալ կանոնադրային մարմինների նիստերը՝ գործընկերության խորհուրդ, գործընկերության կոմիտե, առևտրի հարցերով գործընկերության կոմիտե, աշխարհագրական նշումների և մաքսային հարցերով ենթակոմիտեներ, ՀՀ-ԵՄ մուտքի արտոնագրերի դյուրացման և հետընդունման հարցերով համատեղ կոմիտեներ, մարդկանց միջև շփումների, արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով ենթակոմիտեներ և մարդու իրավունքների շուրջ երկխոսություն: Հունիսի 30-ին տրվել է ՀՀ-ԵՄ անվտանգության և պաշտպանության երկխոսության մեկնարկը:

Ստորագրվել և վավերացվել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Եվրոպական միության ճգնաժամային կառավարման գործողություններում Հայաստանի Հանրապետության մասնակցության շրջանակը սահմանելու մասին» համաձայնագիրը: Հայաստանում ԵՄ քաղաքացիական առաքելության մանդատը երկարաձգվել է ևս 2 տարով:

ՀՀ-ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ երկխոսության շրջանակում նոյեմբերի 5-ին հայկական կողմին է փոխանցվել մուտքի արտոնագրերի ազատականացման գործողության ծրագիրը, իսկ դեկտեմբերին կայացել է առաջին գնահատողական այցը Երևան:

Հաստատվել է ՀՀ և ԵՄ և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու նրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային նոր քարտեզը: Դեկտեմբերին Բրյուսելում ընդունվել է «ՀՀ-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգ» փաստաթուղթը: Նույն ամսին ՀՀ ԱԳ նախարարը Բրյուսելում մասնակցել է ԵՄ ԱԳ նախարարների խորհրդի շրջանակներում կայացած աշխատանքային նախաճաշին:

Տնտեսական և ներդրումային պլանի շրջանակներում 2021-2025 թթ. փաստացի իրականացվող, ինչպես նաև ստորագրված, հաստատված և առաջիկայում մեկնարկող ծրագրերի հանրագումարը կազմել է շուրջ 900 մլն եվրո, մասնավորապես՝

Ուղենիշ 1-ի ներքո (աջակցություն կայուն, նորարար և մրցակցային տնտեսությանը) կնքվել են շուրջ 170 մլն եվրոյի համաձայնագրեր:

Ուղենիշ 2-ի ներքո (Հյուսիս-հարավ ճանապարհի կառուցման աշխատանքներ) հաստատվել են շուրջ 473 մլն եվրոյի համաձայնագրեր:

Ուղենիշ 3-ի ներքո (ներդրումներ թվային վերափոխման և տեխնոլոգիաների ոլորտում) կնքվել են շուրջ 51 մլն եվրոյի համաձայնագրեր:

Ուղենիշ 4-ի ներքո (աջակցություն հարավային շրջանների դիմակայունության ամրապնդմանը) կնքվել և հաստատվել են շուրջ 82 մլն եվրոյի համաձայնագրեր:

Ուղենիշ 5-ի ներքո (ներդրումներ Երևանում, խելացի և կանաչ Երևան) կնքվել են շուրջ 106 մլն եվրոյի համաձայնագրեր:

Հավելյալ, 2025 թվականի վերջի դրությամբ ՀՀ ֆինանսական կազմակերպությունների հետ ավելի քան 1 մլրդ եվրոյի վարկային համաձայնագրեր են կնքվել:

2025 թվականին Հայաստանի և ԵՄ երկրների միջև առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 2,5 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2024 թվականի համեմատ աճելով 7,2%-ով:

Եվրոպական երկրներ

Ֆրանսիայի հետ ռազմավարական բնույթի հարաբերությունները 2025 թվականի ընթացքում շարունակել են ընդլայնվել և խորանալ տարբեր ոլորտներում: Հաշվետու տարվա ընթացքում Ֆրանսիայի իշխանությունները, օրենսդիր և գործադիր մարմիններն ամենատարբեր հարթակներում և ամենաբարձր մակարդակով լիակատար աջակցություն են հայտնել ՀՀ-ին: 2025 թվականի ընթացքում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի 3 այց Ֆրանսիա: Ընդհանուր առմամբ հաշվետու տարում տեղի է ունեցել վարչապետ Փաշինյանի և նախագահ Մակրոնի 5 հանդիպում: 2025 թվականի ընթացքում պաշտոնական այցով ՀՀ է այցելել Ֆրանսիայի՝ Եվրոպայի և արտաքին գործերի նախարար Ժան-Նոել Բարոն: Տարվա ընթացքում կայացել է ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի և Ֆրանսիայի՝ Եվրոպայի և արտաքին գործերի նախարար Ժան-Նոել Բարոնի 3 հանդիպում: Հունիսին Գորիսում կայացել է Հայաստան-Ֆրանսիա ապակենտրոնացված համագործակցության 5-րդ համաժողովը, որին մասնակցել է շուրջ 500 պատվիրակ Հայաստանից և Ֆրանսիայից: Գորիսում կայացել է Ֆրանսիայի պատվավոր հյուպատոսի գրասենյակի բացումը: Շարունակվել է ընդլայնվել Հայաստան-Ֆրանսիա պաշտպանական համագործակցությունը: Տեղի են ունեցել բազմաթիվ խորհրդարանական, տարածաշրջանային և այլ պատվիրակությունների փոխայցելություններ:

2025 թվականին Հայաստանի և Ֆրանսիայի միջև առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 210 մլն ԱՄՆ դոլար՝ 2024 թվականի համեմատ աճելով 33%-ով:

2025 թվականին շարունակվել է **Գերմանիայի** հետ բարձր մակարդակի քաղաքական երկխոսությունը: Դեկտեմբերի 9-10-ը տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի պաշտոնական այցը ԳԴՀ: Ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև երկկողմ գործընկերության ռազմավարական օրակարգի վերաբերյալ» համատեղ հռչակագիրը: ՀՀ վարչապետը հանդիպումներ է ունեցել ԳԴՀ դաշնային նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի, դաշնային կանցլերներ Ֆրիդրիխ Մերցի, Օլաֆ Շոլցի, Բունդեսթագի Գերմանիա-Հարավային Կովկաս բարեկամական խմբի

նախագահ Յոհան Վադեֆուլի հետ: Տեղի է ունեցել ԱԳՆ նախարարի 2 հանդիպում ԳԴՀ արտաքին գործերի դաշնային նախարարի հետ: Գերմանիայում աշխատանքային այցով գտնվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարը և ՀՀ պաշտպանության նախարարը: Գերմանիայի դաշնային նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը պաշտոնական այց է կատարել ՀՀ: Տեղի է ունեցել ՀՀ և ԳԴՀ ֆինանսական և տեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի նիստ:

2025 թվականին շարունակվել են բարձրագույն և բարձր մակարդակում ակտիվ շփումները ՀՀ-ի և եվրոպական մյուս երկրների հետ: Ապրիլի 27-ին կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի պաշտոնական այցն Էստոնիա: Մայիսի 15-16-ը ՀՀ վարչապետն աշխատանքային այցով գտնվել է Ալբանիայում՝ մասնակցելու Եվրոպական քաղաքական համայնքի 6-րդ, իսկ հոկտեմբերի 2-ին՝ Դանիայում՝ ԵԲՀ 7-րդ գագաթնաժողովներին: Դրանց շրջանակներում ՀՀ վարչապետը երկկողմ հանդիպումներ է ունեցել եվրոպական մի շարք առաջնորդների հետ: Հունիսի 13-ին ՀՀ վարչապետը մասնակցել է Պրահայում կայացած «GLOBSEC Forum 2025» համաժողովին: Հուլիսի 14-ին Բելգիա կատարած աշխատանքային այցի շրջանակներում ՀՀ վարչապետը հանդիպում է ունեցել Բելգիայի վարչապետ Բարտ դը Վերթի հետ: Հոկտեմբերի 19-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Վատիկանում ներկա է գտնվել արք. Իգնատիոս Մալոյանի և ևս վեց Երանելիների սրբադասման արարողությանը: Հոկտեմբերի 20-ին ՀՀ վարչապետը հանդիպում է ունեցել Հռոմի Պապ Նորին Սրբություն Լևոն XIV-ի և Սուրբ Աթոռի պետքարտուղար, կարդինալ Պիետրո Պարոլինիի հետ: Սուրբ Աթոռ այցի շրջանակներում վարչապետ Փաշինյանը կարճատև շփում է ունեցել նաև Իտալիայի Հանրապետության նախագահ Սերջիո Մատարելլայի հետ:

Մայիսի 25-26-ը կայացել է Սլովակիայի վարչապետ Ռոբերտ Ֆիցոյի պաշտոնական այցը Հայաստան: Հոկտեմբերի 13-16-ը ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների պաշտպանի կարգավիճակում Հայաստան է այցելել Բելգիայի թագուհի Մաթիլդը, ով հանդիպում է ունեցել ՀՀ վարչապետի հետ:

Ռազմավարական գործընկերություն է հաստատվել Նիդերլանդների և Լյուքսեմբուրգի հետ, հարաբերությունների ռազմավարական գործընկերության բարձրացման մասին պայմանավորվածություն է ձեռք բերվել Միացյալ Թագավորության հետ: Ձևավորվել է Հայաստան-Նորդիկ-Բալթիան երկրներ քաղաքական երկխոսության ձևաչափ: Տեղի է ունեցել Բենիյուքսի երկրների ԱԳ նախարարությունների քաղաքական տնօրենների այցը Հայաստան:

2025 թվականին Կիպրոսի և Հունգարիայի հետ փոխադարձության սկզբունքով հիմնվել են ռեզիդենտ դեսպանություններ:

Հնդկաստան - 2025 թվականին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի 2 հանդիպում Հնդկաստանի ԱԳ նախարար Սուբրամանյամ Ջայանկարի հետ: Հնդկաստան են այցելել պաշտոնական այցով՝ ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը, աշխատանքային այցով՝ ՀՀ ՊՆ Սուրեն

Պապիկյանը, ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը և ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը:

Նոյեմբերի 4-6-ը առաջին անգամ կայացել է «Cooperation Armenia Military Technology - India» միջոցառումը: Նոյեմբերի 6-ին Երևանում անցկացվել է Հայաստան-Հնդկաստան գործարար համաժողով:

2025 թվականին Հայաստանի և Հնդկաստանի միջև առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 311 մլն ԱՄՆ դոլար՝ 2024 թվականի համեմատ նվազելով 15,1%-ով:

Չինաստան (այսուհետ՝ ՉԺՀ) – Օգոստոսի 30-ից սեպտեմբերի 3-ը կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորած պատվիրակության աշխատանքային այցը ՉԺՀ՝ մասնակցելու Շանհայի համագործակցության կազմակերպության 2025 թվականի գագաթնաժողովի «ՇՀԿ+» ձևաչափի հանդիպմանը: Այցի ընթացքում ՀՀ վարչապետը հանդիպումներ է ունեցել ՉԺՀ նախագահ Սի Ծինփինի, ՉԺՀ փոխնախագահ Հան Ճենի, Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի նախագահ և տնօրենների խորհրդի նախագահ Ծին Լիցզյունի հետ:

Օգոստոսի 31-ին ՀՀ վարչապետի և ՉԺՀ նախագահի միջև կայացած հանդիպման արդյունքներով կողմերը հայտարարել են Հայաստանի և ՉԺՀ-ի միջև ռազմավարական գործընկերության հաստատման մասին, ինչի մասին ընդունվել է համատեղ հայտարարություն:

Հունիսի 25-27-ը կայացել է ՀՀ ԱԳՆ Արարատ Միրզոյանի պաշտոնական այցը ՉԺՀ: Հունիսի 11-12-ը «Concours Mondial de Bruxelles» մրցույթին մասնակցելու նպատակով աշխատանքային այցով Յինչուան է այցելել ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը, ով մասնակցել է մրցույթի խորհրդանշանը ՀՀ-ին փոխանցելու հանդիսավոր արարողությանը: ՉԺՀ աշխատանքային այցով մեկնել է նաև ՀՀ պաշտպանության նախարարը: Նոյեմբերի 5-10-ը ՀՀ-ն մասնակցել է ՉԺՀ Շանհայ քաղաքում անցկացված Չինաստանի ներմուծման 8-րդ միջազգային ցուցահանդեսին:

2025 թվականին Հայաստանի և Չինաստանի միջև առևտրաշրջանառությունը կազմել է շուրջ 2,6 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2024 թվականի համեմատ նվազելով 6,5%-ով:

Ճապոնիա - Սեպտեմբերի 4-5-ը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորած պատվիրակությունը երկօրյա աշխատանքային այց է կատարել Ճապոնիա: Տոկիոյում տեղի է ունեցել ՀՀ վարչապետի և Ճապոնիայի վարչապետ Շիգերու Իշիբայի հանդիպումը:

Փետրվարին գործարկվել է Հայաստան-Ճապոնիա ներդրումների միջավայրի բարելավման ցանցը: Ստորագրվել է համաձայնագիր, որով Ճապոնիայի Կառավարությունը ՀՀ-ին տրամադրում է շուրջ 1,7 մլն ԱՄՆ դոլար, որը կուղղվի ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող օդի որակի մոնիթորինգի կայանների արդիականացմանը:

Համագործակցությունը գործընկեր այլ պետությունների հետ – Նոյեմբերի 20-21-ը կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի պաշտոնական այցը Ղազախստանի Հանրապետություն (այսուհետ՝ ՂՀ), որի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել

ՂՀ նախագահի, վարչապետի և Մեծիլիսի նախագահի հետ: ՀՀ վարչապետի և ՂՀ նախագահի կողմից ստորագրվել է ռազմավարական գործընկերության մասին հայտարարություն: Տեղի է ունեցել նաև ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի պաշտոնական այցը Ղազախստան, ինչպես նաև նրա երկու հանդիպումները Ղազախստանի փոխվարչապետ, ԱԳ նախարարի հետ:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպումներ է ունեցել Վիեննամի վարչապետի, Թաիլանդի վարչապետի, Մոնղոլիայի փոխվարչապետի հետ:

2025 թվականին ՀՀ վարչապետը Շարմ Էլ Շեյխում մասնակցել է Մերձավոր Արևելքի Խաղաղության գագաթնաժողովին, ինչպես նաև աշխատանքային այց է կատարել ԱՄԷ, որի ընթացքում հանդիպում է ունեցել ԱՄԷ նախագահ, շեյխ Մուհամմադ բին Ջայեդ Ալ Նահյանի հետ: Բարձրագույն և բարձր մակարդակում երկկողմ շփումներ են տեղի ունեցել Օմանի, Հորդանանի, Սիրիայի, ԱՄԷ-ի, Մարոկոյի, Կատարի, Լիբանանի, Սաուդյան Արաբիայի, Պաղեստինի ներկայացուցիչների հետ:

Գրողատանի Հանրապետության Ժողովուրդի Քենեշի նախագահ Նուրլանբեկ Թուրգունբեկ Ուլուին աշխատանքային այցով գտնվել է Հայաստանում և հանդիպում ունեցել ՀՀ վարչապետի հետ:

Տեսակապի ձևաչափով կայացել է ՀՀ և Ղազախստանի Հանրապետության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 11-րդ նիստը՝ ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի և ՂՀ փոխվարչապետ Սերիկ Ժումանգաբինի համանախագահությամբ:

2025 թվականին կայացել է ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի պաշտոնական այցը Բրազիլ: Տեղի են ունեցել ՀՀ ԱԳ նախարարի հանդիպումները Անգոլայի և Ուգանդայի ԱԳ նախարարների հետ:

2025 թվականի օգոստոսից Մասկատում սկսել է գործել ՀՀ դեսպանությունը: Ստորագրվել է Հայաստանի և Պակիստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին համատեղ կոմյունիկեն: 2025 թվականին դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել նաև ՀՀ և Լեւոթոյի Թագավորության միջև: Հայաստանն առաջին անգամ դեսպան է հավատարմագրել Էրիթրեայում և Գանայում (ստավայրը՝ Կահիրե): Մինգապուրում կայացել է Հայաստանի պատվավոր հյուպատոսության պաշտոնական բացման արարողությունը:

Եվրասիական տնտեսական միություն - ԵԱՏՄ շրջանակներում փոխշահավետ տնտեսական համագործակցության ապահովումը շարունակում է մնալ Հայաստանի՝ կազմակերպությունում առաջնահերթությունների շարքում: 2025 թվականի ընթացքում կայացել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2 նիստ, Միջկառավարական խորհրդի 4 նիստ, Եվրասիական հանձնաժողովի խորհրդի 11 նիստ, որոնց շրջանակներում ընդունվել են շուրջ 150 որոշում և 70 կարգադրություն: ԵԱՏՄ անդամ պետությունների ղեկավարների կողմից հաստատվել է «Մինչև 2030 և 2045 թթ. Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ինտեգրացիոն

գործընթացների հետագա զարգացման վերաբերյալ» հոչակագրի միջոցառումների ծրագիրը:

ԱՊՀ - Հայաստանը մասնակցել է ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի 1, կառավարությունների ղեկավարների խորհրդի 2, ԱԳ նախարարների 2, Տնտեսական խորհրդի 4 նիստի, որոնց արդյունքում հաստատվել է շուրջ 150 փաստաթուղթ:

ՄԱԿ – ՀՀ վարչապետի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 80-րդ նստաշրջանի բարձրաստիճան հատվածին, որի ընթացքում ՀՀ վարչապետը հանդիպել է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հետ: ՀՀ ԱԳ նախարարը ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի բարձրաստիճան շաբաթվա շրջանակներում ունեցել է երեք տասնյակ երկկողմ հանդիպում, մասնակցել է Մեծ քսանյակի նախարարական հանդիպմանը:

Մշակվել է 2026-2030 թթ. Հայաստան-ՄԱԿ կայուն զարգացման համագործակցության շրջանակային փաստաթուղթը: Համաձայնեցվել և ընդունվել են նաև ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ ՀՀ համագործակցության 5-ամյա ծրագրերը և ԱՀԿ-ի հետ համագործակցության հնգամյա ռազմավարությունը: Առողջապահության համաշխարհային կազմակերպության Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիայի կողմերի 11-րդ համաժողովի ընթացքում Հայաստանն ընտրվել է որպես հաջորդ համաժողովը հյուրընկալող երկիր:

Սեպտեմբերի 5-ին ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի կողմից ՀՀ ներկայացմամբ ընդունվել է բանաձև, որի համաձայն՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում դեկտեմբերի 9-ին անցկացվել է Յեղասպանության հանցագործության գոհերի հիշատակի և արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օրվա տասնամյակին նվիրված բարձրաստիճան հանդիպում, որի նախօրյակին ՀՀ-ի կողմից Նյու Յորքում կազմակերպվել է վաղ նախագաղափարային թեմայով հարակից միջոցառում: ՀՀ-ի նախաձեռնությամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում ընդունվել է երկու բանաձև: Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի» աշխատությունը գրանցվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Աշխարհի հիշողության միջազգային ռեգիստրում:

Ֆրանկոֆոնիա - ՀՀ-ն մասնակցել է Կիզալիում կայացած Ֆրանկոֆոնիայի նախարարական 46-րդ հանդիպմանը: Ֆրանկոֆոնիայի մշակույթի նախարարների համաժողովի շրջանակներում որոշում է կայացվել, որ հաջորդ համաժողովը կայանա Երևանում՝ 2027 թվականին:

ԵԱՀԿ – Մարտի 26-ին ՀՀ նախաձեռնությամբ հրավիրվել է ԵԱՀԿ մշտական խորհրդի հատուկ նիստ՝ նվիրված Հայաստանի և Ադրբեյջանի միջև խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին համաձայնագրի վերջնականացմանը: Ապրիլին ՀՀ է այցելել ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Ֆերիդուն Մինիրլիօղլուն: Օգոստոսի 8-ին Վաշինգտոնի խաղաղության գագաթնաժողովին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը և ԱՀ ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովն ստորագրել են ԵԱՀԿ-ին ուղղված համատեղ դիմում՝ Մինսկի գործընթացի և կից կառուցակարգերի լուծարման վերաբերյալ, որի առնչությամբ ԵԱՀԿ ՆԿ

համապատասխան որոշումն ընդունվել է 2025 թվականի սեպտեմբերի 1-ին: Հոկտեմբերին տեղի է ունեցել ԵԱՀԿ գործող նախագահի այցելությունը ՀՀ: Դեկտեմբերին ԱԳ նախարարը Վիեննայում մասնակցել է ԵԱՀԿ նախարարական խորհրդի 32-րդ հանդիպմանը:

Եվրոպայի խորհուրդ – Սեպտեմբերի 28-30-ին ԵՄ աշխատանքային այցի շրջանակներում ՀՀ վարչապետը հանդիպել է ԵՄ գլխավոր քարտուղարի, ԵՄԽՎ նախագահի, ՄԻԵԴ նախագահի, ԵՄ մարդու իրավունքների հանձնակատարի, ԵՄԽՎ Մոնիթորինգի հանձնաժողովում Հայաստանի պարտավորությունների հարցով համազեկուցողների հետ, հանդես եկել ելույթով ԵՄԽՎ աշխատանքային նստաշրջանին: 2025 թվականի ընթացքում աշխատանքային այցով ԵՄ են այցելել ՀՀ արդարադատության նախարարն ու ՀՀ ԿԳՄՍ նախարարը: 2025 թվականին կայացել են Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵՄԽՎ) նախագահի, ԵՄ գլխավոր քարտուղարի և ԵՄ Տեղական իշխանությունների Կոնգրեսի նախագահի այցերը ՀՀ: Մայիսի 13-14-ը ԱԳ նախարարը Լյուքսեմբուրգում մասնակցել է ԵՄ տարեկան նախարարական համաժողովին:

ԵՄ Նախարարների կոմիտեի (ԵՄ ՆԿ) 134-րդ նստաշրջանում ընդունված որոշումներում ողջունվում է Հայաստանի և Ադրբեյջանի միջև խաղաղության համաձայնագրի շուրջ բանակցությունների ավարտը. կոչ է արվում արագ ստորագրել և վավերացնել համաձայնագիրը՝ երկու երկրների ինքնիշխանության, տարածքային ամբողջականության լիարժեք երաշխավորմամբ: Մայիսի 23-ին ՀՀ-ն ԵՄ-ի հետ «Չիրագովը և այլք ընդդեմ Հայաստանի» ՄԻԵԴ վճռի շրջանակներում արդարացի փոխհատուցման վճարման մասին փոխըմբռնման հուշագիր են ստորագրել: Նոյեմբերի 11-ին Երևանում տեղի է ունեցել Ղարաբաղից փախստականների ինտեգրմանն ուղղված ԵՄ համապարփակ արձագանքման փաթեթի կատարողականի միջգերատեսչական եզրափակիչ նիստը:

ՆԱՏՕ - 2025 թվականի հունվարին ՀՀ վարչապետը հանդիպում է ունեցել ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Մարկ Ռյուտեի հետ: Սեպտեմբերի 11-12-ը տեղի է ունեցել ՆԱՏՕ-ում հավատարմագրված դեսպանների այցը Հայաստան: Սեպտեմբերի 22-23-ը Երևանում կայացել է ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովի 108-րդ «Ռոուզ-Ռոթ» սեմինարը, որի շրջանակներում ՀՀ է այցելել ՆԱՏՕ-ի գործողությունների հարցերով գլխավոր քարտուղարի փոխտեղակալ Բուրչու Սանը: Դեկտեմբերի 18-ին Հայաստան է այցելել ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ռադմիլա Շեկերինսկան: Դեկտեմբերի 12-ին Բրյուսելում տեղի է ունեցել ՆԱՏՕ-ի Գործընկերությունների և համագործակցության անվտանգության կոմիտեի նիստը, որտեղ հավանության է արժանացել «ՀՀ-ՆԱՏՕ պլանավորման և դիտարկման գործընթացի 2024 թվականի գնահատման» փաստաթուղթը, որն այնուհետև հաստատվել է Դաշինքի երկրների կողմից: ՆԱՏՕ-ի հետ համագործակցության շրջանակներում ՀՀ ԶՈՒ ներկայացուցիչները մասնակցել են շուրջ 100 միջոցառման:

Բազմակողմ համագործակցություն ասիական տարածաշրջանում - 2025 թվականի ընթացքում Հայաստանը Շանհայի համագործակցության կազմակերպությանն անդամակցության հայտադիմում է ներկայացրել: Հայաստանն ավարտել է

Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկին (ԵՆԱԲ) ՀՀ անդամակցության համար նախատեսված բոլոր ներպետական ընթացակարգերն ու դարձել է անդամ: ՀՀ վարչապետը հանդիպում է ունեցել ԵՆԱԲ նախագահ Ծին Լիցզյունի հետ:

Կազմակերպված միջոցառումներ – 2025 թվականի մայիսի 26-27-ը տեղի է ունեցել «Երևանյան երկխոսություն» երկրորդ միջազգային համաժողովը:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին պարտադիր ժամկետային զինծառայողների ծառայության սահմանված ժամկետը (24 ամիս) կրճատվել է 18 ամսի՝ 2026 թվականի հունվարի 1-ից գորակոչված քաղաքացիների համար, ավելացվել են շարքային կազմի պարտադիր ժամկետային զինծառայողների արձակուրդի օրերը (21-ից մինչև 30 օր): Մինչև 2025 թվական, զինվորական երդման արարողությունից հետո պարտադիր ժամկետային զինծառայողներին տրամադրվելու է 2 օր արձակուրդ:

2025 թվականին 2024 թվականի համեմատ պարտադիր ժամկետային ծառայության գորակոչվածների թիվն աճել է 7%-ով:

Ռազմատեխնիկական համագործակցության ուղղությունների բազմազանեցման արդյունքում կնքված պայմանագրերով շարունակվել են սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման և նոր նմուշների ձեռքբերման աշխատանքները:

«Global Firepower» միջազգային վերլուծական ընկերության Ռազմական հզորության վարկանիշում 145 երկրների շարքում Հայաստանն զբաղեցնում է 91-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ արձանագրելով առաջընթաց 11 հորիզոնականով:

Շարունակվել են գործառնության ստորաբաժանումների տեղաբաշխման վայրերում տիպային մոդուլային զինավանդակների, ԶՈՒ պաշտպանության գոտու ամրաշինական սարքավորման և ամրացված շրջանների կառուցման աշխատանքները: Ավարտին է հասցվել մի շարք տեղամասերում ամրացված շրջանների կառուցումը: Շուրջ 160 շինարարական օբյեկտում համակարգվել են շուրջ 48 մլրդ ՀՀ դրամի շինարարական աշխատանքներ:

Ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից պայմանագրային զինվորական ծառայության ներգրավելու «Պաշտպան հայրենյաց» ծրագրի շահառու է դարձել 1 777 զինծառայող. 2024 թվականի համեմատությամբ շահառուների քանակը ավելացել է շուրջ 180-ով (ընդհանուր շահառուների թիվը՝ 4 234): Ծրագրի շահառուները 5 տարի ժամկետով պայմանագրային զինվորական ծառայության ընթացքում ստանում են բարձր դրամական բավարարում, իսկ ծառայության ավարտին՝ 5 մլն ՀՀ դրամ պարգևավճար:

Զինծառայողների ատեստավորման գործընթացի շրջանակներում ատեստավորվել և ծառայությունը շարունակում է շուրջ 6 270 զինծառայող: Զինծառայողների ատեստավորման գործընթացի ներդրման պահից սկսած՝ ատեստավորվել է դիմողների 73%-ը: Այս բարեփոխումների արդյունքում շարքային կազմի բազմաթիվ

ատեստավորված զինծառայողներ ստանում են 700 հազար և ավելի ՀՀ դրամ, իսկ սպայական կազմի զինծառայողները (բարձրագույն սպայական կազմի դեպքում)՝ մինչև 1,5 մլն ՀՀ դրամ վարձատրություն:

Սերժանտական նոր համակարգի ներդրման շրջանակներում ավելացվել են շուրջ 120 սերժանտական հաստիքներ, և պատրաստություն անցած զինծառայողները նշանակվել են տվյալ հաստիքներում:

Զինված ուժերում պլանավորվել և անցկացվել են մարտական հերթապահության ներգրավմամբ, մասնագետների պատրաստման և վերապատրաստման, ինչպես նաև հատուկ զորքերի և թիկունքային ապահովման ստորաբաժանումների պատրաստության և ներդաշնակման 25-օրյա վարժական հավաքներ:

Որպես առանձին ստորաբաժանում կազմավորված կանանց գումարտակում շարունակվել է հաստիքների համալրումը: Պարտադիր ժամկետային ծառայության ավարտից հետո կին զինծառայողների շուրջ 70%-ը դիմում է զինված ուժերում ծառայությունը շարունակելու համար:

Միջազգային համագործակցության և անվտանգության գործող ընթացակարգերի հնարավորությունների ընդլայնման համատեքստում իրականացվել են բարձրաստիճան այցեր 13 երկիր: Իրականացվել են պաշտպանական ռազմաքաղաքական խորհրդակցություններ 8 պետությունների պաշտպանական գերատեսչությունների, ինչպես նաև ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի պատվիրակությունների հետ:

ԵՄ-ի հետ համագործակցությունը շարունակվել է հիմնականում Եվրոպական խաղաղության գործիքի շրջանակներում (EPF): 2026 թվականի հունվարին Եվրոպական խաղաղության գործիքի շրջանակներում ՀՀ-ին հատկացվել է ևս 20 մլն եվրո (ընդհանուր հատկացված գումարը՝ 30 մլն եվրո):

Միջազգային ռազմական համագործակցության շրջանակներում արտերկրում և Հայաստանում կազմակերպվել է 380-ից ավելի միջոցառում:

ՀՀ-ում անցկացվել են Եվրոպայում ԱՄՆ ցամաքային զորքերի հրամանատարության հետ համատեղ «Արծիվ գործընկեր-2025» հերթական և ՀՀ-ԻԻՀ հատուկ նշանակության ուժերի առաջին համատեղ զորավարությունները:

ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումները շարունակել են խաղաղապահ առաքելությունների իրականացումը Կոսովոյում և Լիբանանում:

Գործընկեր երկրների ուսումնական հաստատություններում կրթություն են ստացել 481 զինծառայող և քաղաքացիական ծառայող, իսկ ՀՀ-ում կազմակերպված միջազգային ծրագրերի շրջանակներում՝ 167 զինծառայող և քաղաքացիական ծառայող:

2025 թվականին Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա ընդունվածների թիվը 2018 թվականի ռազմաուսումնական հաստատություններ ընդունվածների համեմատ աճել է 2,7 անգամ: Կուրսանտներն ուսանելու ընթացքում ստանում են մինչև 175 հազար ՀՀ դրամ կրթաթոշակ, իսկ ավարտելուց հետո համարվում են ատեստավորված, ինչը հնարավորություն է տալիս ստանալու մինչև 750 հազար ՀՀ դրամ աշխատավարձ: 2026 թվականից սկսած՝ ծառայության անցած շրջանավարտները կստանան քնակարան:

«Մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի շրջանակներում հիփոթեքային վարկավորման միջոցով բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու նպատակով 2025 թվականին ծրագրում առաջնահերթությամբ ընդգրկվել է 118 զինծառայող, ևս 382-ը ընդգրկվել է վիճակահանության արդյունքներով: 341 շահառուի հատկացվել է կանխավճար, որոնցից արդեն վարկային պայմանագիր են կնքել 334-ը: Իրականացվել է 1 886 շահառուի հիփոթեքային վարկերի տոկոսների սուբսիդավորման գործընթաց: Լրացուցիչ երաշխիքների գծով 36 շահառուի հատկացվել է պետական աջակցություն: ՊՆ կենտրոնական բնակարանային հանձնաժողովի կողմից 113 զինծառայողի տրամադրվել է բնակարանի գնման վկայագիր, որոնցից 97 զինծառայող արդեն իսկ ձեռք է բերել բնակարան:

ՀՀ ռազմական ոստիկանության կողմից օպերատիվ ճանապարհով բացահայտվել է շուրջ 350 հանցակազմ պարունակող դեպք, որոնցով նախաձեռնվել են քրեական վարույթներ:

Ապահովվել է ՊՆ «Թեժ գծի»՝ 24/7 ռեժիմով գործարկումը:

2025 թվականի ընթացքում ոչ մարտական պայմաններում մահացել է 30 զինծառայող, որից 24-ը՝ ծառայության հետ չկապված պատճառներով, 6-ը՝ ՋՈՒ-ում տեղի ունեցած պատահարների հետևանքով: 2024 թվականի համեմատ 2025 թվականին զինված ուժերում դեպքերը նվազել են շուրջ 40%-ով, շուրջ 6%-ով նվազել են ոչ կանոնագրքային փոխհարաբերությունները և շուրջ 12%-ով՝ ինքնավնասման (ինքնախեղման) դեպքերը: 2025 թվականի ընթացքում սահմանային հատվածներում մարտական պայմաններում զոհեր և վիրավորներ չեն եղել:

Ռազմարդյունաբերության ոլորտում ՀՀ ՌԱՀ-ի ընկերությունների կողմից 2025 թվականի ընթացքում իրականացվել են ընդհանուր 4,9 մլրդ ՀՀ դրամի ոլորտային ներդրումներ: 2025 թվականի դրությամբ ռազմարդյունաբերական ռեզիդենտ ընկերությունների հետ գործող պայմանագրերի ծավալը կազմել է շուրջ 170 մլրդ ՀՀ դրամ:

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ԱԱԾ) տեխնիկական վերազինման, կադրերի համալրման, մասնագիտական կարողությունների զարգացման, ՀՀ պետական սահմանի պահպանության արդյունավետության բարձրացման և այլ ուղղություններով:

2025 թվականի մարտի 1-ից Հայաստան-Թուրքիա պետական սահմանի «Մարգարա» անցման կետում ծառայություն են իրականացնում բացառապես ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի զինծառայողները: 2026 թվականի սկզբից Հայաստան-Թուրքիա պետական սահմանի «Ախուրիկ» անցման կետում ևս ծառայություն են իրականացնում միայն ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի զինծառայողները. ներկայումս չկա ՀՀ պետական սահմանի որևէ գործող անցման կետ, որը չի գտնվում ՀՀ ԱԱԾ ՍԶ լիարժեք վերահսկողության ներքո:

ՀՀ պետական սահմանի Տավուշի մարզի Բերքաբեր, Կիրանց, Ոսկեպար-Բաղանիս սահմանագատված հատվածում, սահմանագծին զուգահեռ կառուցվել է շուրջ 11,5 կմ սահմանային ճանապարհ՝ փշալարային արգելափակոցով: ՀՀ Սյունիքի մարզում շահագործման են հանձնվել նոր սահմանապահ ուղեկայներ: ՀՀ պետական սահմանի տարբեր հատվածներ կահավորվել են լրացուցիչ ստացիոնար տեսադիտարկման սարքերով, ֆոտոծուղակներով, կայի, այդ թվում՝ ռադիոկայի և այլ տեխնիկական միջոցներով, որոշ հատվածներում անցկացվել են փշալարային արգելափակոցներ:

ՀՀ ԱԱԾ սահմանապահ գործերում ներդրված «Պաշտպան հայրենյաց» ծրագրի շրջանակներում ծառայության է անցել 83 պայմանագրային զինծառայող: Շարունակվել է նաև ՀՀ ԱԱԾ անձնակազմի ատեստավորման գործընթացը: 2023 թվականից մեկնարկած ատեստավորմանը մասնակցել և դրական արդյունք է գրանցել ծառայողների շուրջ 54%-ը, որոնց վարձատրությունն ավելացել է շուրջ 57%-ով: Միաժամանակ, ավելացել է ՀՀ ԱԱԾ-ում ծառայության անցնելու համար դիմած անձանց թիվը: 2024 թվականի ցուցանիշների համեմատ ՀՀ ԱԱԾ սահմանապահ գործերում կին զինծառայողների թիվն ավելացել է 4%-ով:

Կանխվել է շուրջ 3 մլն կիրեռհարձակում, 25 կիրեռմիջադեպի շրջանակներում իրականացվել են համապատասխան արձագանքման աշխատանքներ:

Օրենսդրական բարեփոխումների արդյունքում 2026 թվականի հունվարի 1-ից ՀՀ ԱԱԾ-ի կողմից հետախուզական գործունեությունը՝ որպես հիմնական գործառույթ, չի իրականացվում:

Ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև գաղտնի տեղեկությունների փոխանցման, օգտագործման, պահպանության և պաշտպանության մասին» համաձայնագիրը:

Հաստատվել է ՀՀ տարածքում դիվերսիոն-ահաբեկչական խմբերի դեմ պայքարի ուղղությամբ համատեղ և համաձայնեցված գործողությունների կազմակերպման և իրականացման նոր ընթացակարգը:

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Ոստիկանության կառուցվածքային վերափոխման շրջանակներում ծառայությունը շարունակել է զարգանալ որպես մասնագիտական կառույց 4 հենասյունային ուղղություններով՝ Պարեկային ծառայություն, Քրեական ոստիկանություն, Համայնքային ոստիկանություն և Ոստիկանության գվարդիա: Հենասյունային բոլոր ուղղությունները գործարկված են, ինչը նշանակում է, որ համակարգը լիարժեք անցել է կառավարման նոր մոդելի:

2025 թվականի նոյեմբերի 1-ին գործարկվել է չորրորդ և վերջին հենասյունային ուղղությունը՝ Ոստիկանության գվարդիան: Այն համալրված է ամբողջովին նոր, ժամանակակից տեխնիկայով, ունի արդիականացված կինոլոգիական կարողություններ և մասնագիտական ծավալուն վերապատրաստում անցած անձնակազմ: Գվարդիայի հիմնական առաքելությունն է հասարակական կարգի և քաղաքացիների անվտանգության ապահովումը:

2025 թվականի ընթացքում պարեկային ծառայության կողմից հայտնաբերվել և բացահայտվել է հանցագործության 14 747 դեպք (2024 թվականին՝ 11 695): Սևանա լճի էկոհամակարգի պահպանման ուղղությամբ ջրային պարեկների աշխատանքի շնորհիվ առգրավվել է շուրջ 2,5 տոննա ապօրինի որսած ձուկ:

Պարեկային ծառայության հետևողական աշխատանքի ցուցիչներից է այն, որ տրանսպորտային միջոցը վարելու իրավունքից զրկվել է 5 435 անձ, որից 4 899-ը կամ 90,1%-ը ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցը վարելու համար:

2025 թվականին հաջողվել է 2024 թվականի համեմատ 50-ով, իսկ 2023 թվականի համեմատ 95-ով կրճատել ճանապարհատրանսպորտային պատահարների գոհերի թիվը: Սա այն պայմաններում, երբ ամեն տարի տրանսպորտային միջոցների թիվն աճում է և արդեն հասել է շուրջ 1 մլն-ի:

Միայն քրեական ոստիկանության կողմից բացահայտված դեպքերով պետությանը և համայնքին պատճառված նյութական վնասը, նախնական հաշվարկներով, կազմել է շուրջ 25 մլրդ ՀՀ դրամ:

Կիրեռահանցավորության դեմ պայքարի նորաստեղծ վարչության կողմից բացահայտվել է կեղծ ներդրումային հարթակների միջոցով համակարգչային հափշտակություններ կատարող մեծամասշտաբ 4 հանցավոր խումբ: Պարզվել է ՀՀ տարածքում առցանց տիրույթում գովազդների միջոցով արտարժույթների և կրիպտոակտիվների շահավետ պայմաններով փոխանակման պատրվակով խարդախություն կատարող անձանց շրջանակ: Նախաձեռնվել է 20 քրեական վարույթ: Կիրեռահանցագործությունների համատեքստում հանրային իրազեկման նպատակով գործարկվել է նոր «Կիրեռմարտահրավեր» հաղորդաշարը, իրականացվել են թիրախային իրազեկման արշավներ: Արդյունքում կանխարգելվել է ընդհանուր շուրջ 27 մլն ՀՀ դրամի հափշտակության փորձ:

Ձերբակալվածների իրավունքների երաշխավորման նպատակով ներդրվել է խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի արձանագրման հստակ մեխանիզմ՝ համաձայն միջազգային ստանդարտի: Օպտիմալացվել են ձերբակալվածների պահելու վայրերը՝ կրճատվելով 30%-ով: Ոստիկանությունն արդեն իսկ ունի միջազգային ստանդարտներին համապատասխան հատուկ կահավորված 34 տրանսպորտային միջոց՝ ձերբակալվածների ուղեկցումները արժանապատիվ կազմակերպելու համար: 2025 թվականի մարտից դեկտեմբեր ամիսներին ստացվել է ընդհանուր 19 003 ձերբակալված և կալանավորված անձի վերաբերյալ ուղեկցման հայտ, որից շուրջ 98%-ը կատարվել է:

2025 թվականին արձանագրվել է ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերով ոստիկանությանը հաղորդում ներկայացնելու էական աճ (23%), մասնավորապես՝ 2025 թվականին ընտանեկան և կենցաղային բռնության վերաբերյալ ստացվել է 2 775 հաղորդում (2024 թվականին՝ 2 255), ինչը վկայում է նաև ոստիկանության նկատմամբ հանրային վստահության աճի մասին:

Արգելվել է 18 տարին չլրացած անձանց արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող առարկաների, սարքերի կամ գործիքների վաճառքը, իսկ

16-ից մինչև 18 տարեկան անչափահասներին՝ այդպիսի առարկաների, սարքերի կամ գործիքների կրումը:

Ընդունվել է «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքը: Հաստատվել են Ոստիկանության ծառայողների վարքագծի կանոնները, ինչպես նաև մշակվել է առաքինության ստուգման կարգը: Առաջին անգամ ներդրվել է ոստիկանության ծառայողների կողմից ուժային միջոցների գործադրման ստանդարտը:

Պարեկային ծառայության շարքերը համալրելու նպատակով հայտարարված ընթացիկ ընդունելության շրջանակում սահմանվել է 250 տեղ, որից 75-ը նախատեսված է իգական սեռի դիմորդների համար: Ընդունելության համար դիմել է 655 անձ, այդ թվում՝ 135 կին:

Վերացվել են Ոստիկանությունում ծառայության անցնելու տարիքային առավելագույն շեմի սահմանափակումը, հասակի և քաշի մուտքային չափանիշները՝ հավասար հնարավորություններ ապահովելով բոլոր այն անձանց համար, ովքեր համապատասխանում են սահմանված մասնագիտական և բարեվարքային չափանիշներին:

Ոստիկանությունում շարունակվել է ատեստավորման գործընթացը: Ատեստացիայի մեկնարկից սկսած՝ ընդհանուր առմամբ դիմել է ոստիկանության 9 525 ծառայող: Ատեստավորման բոլոր փուլերը հաղթահարել է ոստիկանության 4 627 ծառայող, որից 2 128-ը ստացել է գերազանց, 1 576-ը՝ լավ, 923-ը՝ բավարար: Ատեստացիայի արդյունքում օրինակ քրեական ոստիկանը, որը նախկինում ստացել է 285.203 ՀՀ դրամ դրամական բավարարում, ատեստացիան գերազանցությամբ հանձնելուց հետո ստանում է 585 203 ՀՀ դրամ դրամական բավարարում:

2025 թվականին ձևավորվել է Ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) միասնական կրթահամալիրը, որը գործում է քաղաքացիական կառավարմամբ: Մեկ տարվա ընթացքում ՆԳՆ կրթահամալիրում վերապատրաստում է անցել շուրջ 13 հազար հանրային ծառայող:

Ակտիվ աշխատանքներ են իրականացվել նոր կենսաչափական համակարգի ներդրման ուղղությամբ: Միջազգային անվտանգային ամենաբարձր չափանիշներին համապատասխան՝ կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի արտադրությունը կմեկնարկի 2026 թվականի երկրորդ կիսամյակից: Կառուցվում է ժամանակակից պահանջներին համապատասխան տվյալների կենտրոն, արդիականացվում են քաղաքացիներին ծառայությունների մատուցման կենտրոնները: Հաստատվել է ՀՀ քաղաքացու նույնականացման քարտի ձևաթղթի վերջնական տարբերակը և ուղարկվել է մեծաքանակ տպագրության: Կենսաչափական անձնագրի գեղարվեստական ձևավորման և անվտանգային բաղադրիչների ուղղությամբ աշխատանքները վերջնականացման փուլում են:

Ավարտական փուլում են ՆԳՆ կազմում քաղաքացիների ահազանգերի օպերատիվ կառավարման մեկ միասնական կենտրոնի՝ 112-ի ձևավորման աշխատանքները:

112 օպերատիվ կառավարման կենտրոնը պահպանելու է միջազգային լավագույն ստանդարտը, յուրաքանչյուր ահազանգին պետք է պատասխանել 10, իսկ հարցեր տալ, ահազանգը վերլուծել ու համապատասխան ուժերին փոխանցել՝ առավելագույնը 60 վայրկյանի ընթացքում:

ՆԳՆ համակարգում ձևավորվել և գործում է Հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնը:

Հանցավորության դեմ պայքար

Հայաստանն ընդգրկվել է World Travel Index-ի ճամփորդության համար աշխարհի ամենաապահով երկրների ցանկում և 193 երկրի շարքում 13-րդ տեղում է՝ 90,27 ինդեքսով:

2025 թվականի ամփոփ վիճակագրությամբ Հայաստանում կատարված հանցագործությունների և դրանցով նախաձեռնված վարույթներով 2024 թվականի համեմատությամբ արձանագրվել է հանցագործությունների թվի 3,2%-ով նվազում: Հանցագործությունների բացահայտման ցուցանիշներն աճել են և՛ կատարողի անձը հայտնի լինելու փուլում, և՛ վերջինիս նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու փուլում: 2025 թվականին հաստատված սպանություններով գրանցվել է 0 չբացահայտված դեպք:

2025 թվականին առգրավվել և շրջանառությունից դուրս է բերվել շուրջ 768 կգ տարբեր տեսակի թմրամիջոց, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի է 80%-ով: Հայտնաբերվել է համացանցի միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության 460 դեպք (2024 թվականին՝ 321), որից 111-ը թմրամիջոցներ իրացնելու (2024 թվականին՝ 96), իսկ 349-ը՝ ձեռքբերման (2024 թվականին՝ 225) դեպքեր են:

Շարունակելով զենքի ապօրինի շրջանառության դեմ պայքարը՝ 2025 թվականին առգրավվել, հայտնաբերվել և բացատրական աշխատանքների շնորհիվ կամավոր հանձնվել է 2 246 միավոր հրազեն, ինչը նախորդ տարվա համեմատ (1 579) ավելի է 667-ով կամ 42,2%-ով:

Հանցագործությամբ պետությանը և համայնքին պատճառված վնասի վերականգնման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքում 2025 թվականի ընթացքում վերականգնվել է շուրջ 29,3 մլրդ ՀՀ դրամ, որից շուրջ 10,9 մլրդ ՀՀ դրամը փոխանցվել է վերականգնված միջոցների միասնական հաշվին, իսկ շուրջ 18,4 մլրդ ՀՀ դրամ՝ հարկ վճարողի միասնական հաշվին:

Աղետներին դիմակայունության բարձրացում

2025 թվականին ընդունվել է «Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» օրենքը, հավանության է արժանացել Փրկարար ծառայության զարգացման հայեցակարգը:

ՓԾ ստորաբաժանումների կողմից փրկվել է 202 մարդու կյանք, այդ թվում՝ 8-ը՝ ձնահյուսից, 2-ը՝ ջրահեղձումից, 56-ը՝ ջրային տրանսպորտի մասնակցությամբ

պատահարներից: Արտակարգ դեպքերի և պատահարների հետևանքով 2025 թվականին գոհերի թիվը կազմել է 355՝ նվազելով 59-ով կամ 14,2%-ով:

Փրկարար ծառայությունից ատեստացիա անցնելու նպատակով մինչ օրս դիմել է 1 808 ծառայող: Ատեստավորման բոլոր փուլերը հաղթահարել է 943 փրկարար ծառայող, որից՝ 105-ը ստացել է գերազանց, 571-ը՝ լավ, 267-ը՝ բավարար: Ատեստավորված փրկարարն այսօր ստանում է 557 541 ՀՀ դրամ դրամական բավարարում՝ նախկին 297 541 ՀՀ դրամի փոխարեն:

Շարունակվել են ՀՀ տարածքում կամավորական հրշեջ-փրկարարական հենակետերի ձևավորման աշխատանքները: Հաշվետու տարում դրանց թիվն ավելացել է ևս երկուսով՝ Մեղրաձորում և Արագածավանում: Ենթակառուցվածքների զարգացման շրջանակում բացվել է Ստեփանավանի մասնաշենքը, ընթանում են Սևանի ջրափրկարարական կայանի և Եղեգնաձորի հրշեջ-փրկարարական ջոկատի մասնաշենքի կառուցման աշխատանքները:

Ձեռք են բերվել հրշեջ-փրկարարական 18 նոր ավտոմեքենա և հատուկ տեխնիկա, մարտական հանդերձանք և ժամանակակից փրկարարական գործիքներ:

Մեկնարկել են սեյսմիկ դիտացանցի ամբողջական և լայնամասշտաբ արդիականացման աշխատանքները: ՆԳՆ Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայության սեյսմոլոգիական ցանցը պաշտոնապես միացել է Թվային սեյսմոգրաֆների ցանցերի միջազգային ֆեդերացիայի (FDSN) հարթակին:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով կազմել է 3 666 540 ՀՀ դրամ կամ 9 474 ԱՄՆ դոլար, որը դոլարային արտահայտությամբ նախորդ տարվա համեմատ աճել է 10,7%-ով, իսկ 2021 թվականի համեմատ կրկնապատկվել է: Միևնույն ժամանակ, 2017 թվականի համեմատ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն աճել է 5 605 դոլարով կամ շուրջ 2,5 անգամ:

2025 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակաշրջանում արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է շուրջ 3,3 տրլն ՀՀ դրամ՝ 2024 թվականի նույն ժամանակաշրջանի շուրջ 3 տրլն ՀՀ դրամի համեմատ աճելով 329,4 մլրդ ՀՀ դրամով կամ 4,7%-ով, իսկ 2017 թվականի 1,7 տրլն ՀՀ դրամի համեմատ՝ շուրջ 1,7 տրլն ՀՀ դրամով:

2025 թվականի տարեվերջի դրությամբ 0-ից բարձր հարկման բազա ունեցող աշխատատեղերի թվաքանակը կազմել է շուրջ 822 700 մարդ՝ 2024 թվականի շուրջ 778 100-ի համեմատ աճելով շուրջ 44 600 կամ 5,7%-ով, իսկ 2017 թվականի շուրջ 534 200-ի համեմատ՝ 288 500-ով կամ 54%-ով: Մշակող արդյունաբերության ոլորտում աշխատողների թվաքանակը 2025 թվականին կազմել է 94 998 մարդ՝ 2024 թվականի 90 850 աշխատողի համեմատ աճելով 4,148-ով կամ 4,6%-ով, իսկ 2017 թվականի համեմատ 38 865 մարդով կամ 69,2 %-ով:

Հայկական ծագման ապրանքների արտահանումը կազմել է շուրջ 4,4 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2024 թվականի 4 մլրդ ԱՄՆ դոլարի համեմատ աճելով 388,9 մլն ԱՄՆ դոլարով կամ 9,6%-ով, իսկ 2017 թվականի համեմատ աճելով շուրջ 2,4 մլրդ ԱՄՆ դոլարով կամ ավելի քան 2,2 անգամ:

Արտաքին առևտրաշրջանառությունը 2025 թվականին կազմել է շուրջ 21 մլրդ ԱՄՆ դոլար: Մասնավորապես, ներմուծումը կազմել է 13 034,9 մլն ԱՄՆ դոլար, իսկ արտահանումը՝ 8 395,4 մլն ԱՄՆ դոլար: Նույն ցուցանիշները 2017 թվականին հետևյալն էին. ներմուծում՝ 4 097,1 մլն ԱՄՆ դոլար, արտահանում՝ 2 237,7 մլն ԱՄՆ դոլար: 2025 թվականին 2017 թվականի համեմատ արտահանումն աճել է 3,8 անգամ, իսկ ներմուծումը՝ 3,2 անգամ:

ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը 2025 թվականին կազմել է 2 263 642՝ 2024 թվականի համեմատ աճելով շուրջ 2,5%-ով, իսկ 2017 թվականի 1 494 779-ի համեմատ՝ ավելի քան 50 %-ով:

Աշխատանքի արտադրողականությունը 2025 թվականին կազմել է 11,3 ԱՄՆ դոլար մարդ/ժամ, որը 2024 թվականի 10,3 ԱՄՆ դոլար մարդ/ժամի համեմատ աճել է 9,7 %-ով, 2017 թվականի 5,6 դոլար մարդ/ժամի համեմատ՝ 2 անգամ:

2025 թվականի դեկտեմբերի արդյունքներով՝ մեկ աշխատատեղին բաժին ընկնող եկամուտը կազմել է 401 367 ՀՀ դրամ, ինչը 2024 թվականի համադրելի ժամանակահատվածի նույն ցուցանիշից ավելի է 22 192 ՀՀ դրամով կամ 5,9%-ով, իսկ 2017 թվականի ցուցանիշից 186 387 ՀՀ դրամով կամ 86,7%-ով: Հատկանշական է, որ 2025 թվականի դեկտեմբերին 2017 թվականի դեկտեմբերի նկատմամբ կուտակային գնաճը կազմել է 29,1%:

Տարեվերջի դրությամբ 500,001 և ավելի ՀՀ դրամ վարձատրությամբ աշխատատեղերի թվաքանակը կազմել է 159 324 կամ ընդհանուր աշխատատեղերի 19,4%-ը՝ 2024 թվականի 138 682 կամ 17,8%-ի, 2021 թվականի 80 350 կամ 12,2%-ի համեմատ և 2017 թվականի 40 836 կամ 7,6%-ի համեմատ: Ընդհանուր աշխատավարձի ֆոնդը կազմել է շուրջ 330,2 մլրդ ՀՀ դրամ, որը 2024 թվականի նույն ցուցանիշից ավելի է շուրջ 35,2 մլրդ ՀՀ դրամով, իսկ 2017 թվականի նույն ցուցանիշից՝ շուրջ 215,3 մլրդ ՀՀ դրամով կամ 2,9 անգամ:

Գործազրկության մակարդակը 2025 թվականի 3-րդ եռամսյակի տվյալներով կազմել է 11,8%՝ 2024 թվականի նույն եռամսյակի 13,3%-ի և 2017 թվականի 16,4 %-ի համեմատ:

Հիմնական միջոցների համախառն կապիտալի կուտակման իրական աճը 2025 թվականին կազմել է 15,6%: Վերջինիս տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2025 թվականին կազմել է 21,4%, 2024 թվականին՝ 21,3%, 2017 թվականին՝ 17,6%:

2025 թվականի արդյունքներով բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները հետևյալն են՝

- ակտիվները՝ շուրջ 12,7 տրլն ՀՀ դրամ, 2017 թվականին՝ շուրջ 4,4 տրլն ՀՀ դրամ.

- սեփական կապիտալը՝ շուրջ 2 տրլն ՀՀ դրամ, 2017 թվականին՝ շուրջ 686 մլրդ ՀՀ դրամ.

- վարկային պորտֆելը՝ շուրջ 7,9 տրլն ՀՀ դրամ, 2017 թվականին՝ շուրջ 2,7 տրլն ՀՀ դրամ.

- ավանդները (ցպահանջ և ժամկետային)՝ շուրջ 7,5 տրլն ՀՀ դրամ, 2017 թվականին՝ շուրջ 2,6 տրլն ՀՀ դրամ:

Ըստ այդմ, նախորդ տարվա համեմատ՝

- ակտիվներն ավելացել են շուրջ 1,7 տրլն ՀՀ դրամով կամ 13%-ով, 2021 թվականի համեմատ՝ շուրջ 5,6 տրլն ՀՀ դրամով կամ 44%-ով, 2017 թվականի համեմատ՝ շուրջ 8,3 տրլն ՀՀ դրամով կամ 65 %-ով.

- վարկային պորտֆելն աճել է շուրջ 1,5 տրլն ՀՀ դրամով կամ 19%-ով, 2021 թվականի համեմատ՝ շուրջ 3,9 տրլն ՀՀ դրամով կամ 50%-ով, 2017 թվականի համեմատ՝ շուրջ 5,2 տրլն ՀՀ դրամով կամ 66%-ով.

- ավանդները (ցպահանջ և ժամկետային) աճել են շուրջ 994 մլրդ ՀՀ դրամով կամ 13%-ով, 2021 թվականի համեմատ՝ շուրջ 3,4 տրլն ՀՀ դրամով կամ 46%-ով, 2017 թվականի համեմատ՝ շուրջ 4.9 տրլն ՀՀ դրամով կամ 65%-ով.

- կապիտալն ավելացել է շուրջ 301 մլրդ ՀՀ դրամով կամ 15%-ով, 2021 թվականի համեմատ՝ շուրջ 1 տրլն ՀՀ դրամով կամ 54%-ով, 2018 թվականի համեմատ՝ շուրջ 1,3 տրլն ՀՀ դրամով կամ 63%-ով, 2017 թվականի համեմատ՝ շուրջ 1,3 տրլն ՀՀ դրամով կամ 66%-ով.

- ՀՀ կենտրոնական բանկի միջազգային պահուստները 2021 թվականի համեմատ ավելացել են շուրջ 1,9 մլրդ ԱՄՆ դոլարով կամ 57,5 %-ով, 2018 թվականի համեմատ ավելացել են շուրջ 2,8 մլրդ ԱՄՆ դոլարով կամ 125,1 %-ով, 2017 թվականի համեմատ՝ 2,8 մլրդ ԱՄՆ դոլարով կամ 119,8 %-ով:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի գուտ ակտիվների արժեքը 2025 թվականի վերջի դրությամբ կազմել է շուրջ 1,4 տրլն ՀՀ դրամ՝ 2024 թվականի նույն ցուցանիշից ավելի 367,1 մլրդ ՀՀ դրամով կամ 34,2%-ով, 2021 թվականի ցուցանիշից՝ 958,5 մլրդ ՀՀ դրամով կամ 198,6%-ով, 2018 թվականի ցուցանիշից՝ 1,28 տրլն ՀՀ դրամով կամ 816,6%-ով, 2017 թվականի ցուցանիշից՝ 1,34 տրլն ՀՀ դրամով կամ 1262,9%-ով:

2024 թվականի համեմատ 2025 թվականին Հայաստանում (ՀՀ և արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերով) 23,4%-ով ավելացել է անկանխիկ (տերմինալներով) գործարքների քանակը՝ կազմելով շուրջ 533 մլն գործարք: 2025 թվականի ընթացքում առևտրի և ծառայությունների ոլորտում բանկային քարտերով կատարված անկանխիկ վճարումների (տերմինալներով) ծավալները գերազանցել են կանխիկ վճարումները: Անկանխիկ վճարումների ընդհանուր ծավալը կազմել է շուրջ 3 տրլն ՀՀ դրամ, որից շուրջ 1,4 տրլն ՀՀ դրամը իրականացվել է ինտերնետ տերմինալների միջոցով:

Ընդհանուր առմամբ եկամտային հարկից 2025 թվականին ֆիզիկական անձանց վերադարձվել է 116,3 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը

գերազանցել է 27,1 մլրդ ՀՀ դրամով կամ 30,4%-ով: Վճարված եկամտային հարկից գումարները վերադարձվել են հետևյալ ուղղություններով՝

- **Ֆիզիկական անձանց հիփոթեքային վարկի** տոկոսների գծով վերադարձվել է շուրջ 95,6 մլրդ ՀՀ դրամ եկամտային հարկ՝ 2021 թվականի նույն ցուցանիշը գերազանցելով շուրջ 72,9 մլրդ ՀՀ դրամով, իսկ 2017 թվականինը՝ շուրջ 93,2 մլրդ ՀՀ դրամով կամ ավելի քան 39,6 անգամ: 2025 թվականի արդյունքներով հիփոթեքային վարկի տոկոսների վերադարձի ծրագրի շահառուների կողմից 2018 թվականից հետո ձեռք է բերվել շուրջ 41 000 բնակարան, և կառուցվել է ավելի քան 4 200 անհատական բնակելի տուն, մինչև 2017 թվականը ներառյալ ձեռք էր բերվել 2 309 բնակարան և 236 անհատական բնակելի տուն:
- **սոցիալական ծախսերի մասով** 2025 թվականի ընթացքում (2023-2024 թթ. համար ներկայացված հաշվարկներով) համընդհանուր հայտարարագիր լրացրած շուրջ 73 հազար քաղաքացու փոխհատուցվել է 5,8 մլրդ ՀՀ դրամ, որը նվազեցվել է պետական բյուջե հաշվեգրվող հարկային եկամուտներից:
- **շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտները** դրանց ստացման հարկային տարվա ընթացքում նույն կազմակերպության կանոնադրական կամ բաժնետերեր կապիտալում ներդնելու դեպքում վճարված եկամտային հարկի գծով 2025 թվականի ընթացքում փոխհատուցվել է 14,2 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշից պակաս է 5,7 մլրդ ՀՀ դրամով կամ 28,6%-ով:
- **վարձու աշխատող ուսանողներին** ուսման համար վճարված գումարի գծով 2025 թվականի ընթացքում փոխհատուցվել է 302 մլն ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշից ավելի է 35,9 մլն ՀՀ դրամով կամ 13,5%-ով:
- ոչ ռեզիդենտների՝ ՀՀ աղբյուրներից ստացված և **կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերով** նախատեսված դրույքաչափով պահման ենթակա գումարների միջև դրական տարբերության մասով 2025 թվականի ընթացքում վերադարձվել է 338,5 մլն ՀՀ դրամ կամ նախորդ տարվա ցուցանիշից 311,6 մլն ՀՀ դրամով ավելի:

2025 թվականին առաջատար երեք միջազգային վարկանշային գործակալությունները վերահաստատել են Հայաստանի սուվերեն վարկանիշները՝ ընդգծելով երկրի մակրոտնտեսական կայունությունը: Մասնավորապես, «Մուդի'զ»-ը պահպանել է «Ba3» վարկանիշը՝ «կայուն» հեռանկարով, իսկ «Ֆիթչ»-ը և «Ստանդարդ ընդ Փուրզ»-ը վերահաստատել են «BB-» վարկանիշը՝ փոխելով հեռանկարը «կայուն»-ից «դրական»-ի:

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կողմից 2025 թվականի «Գլոբալ ինովացիոն ինդեքս» գեկույցում ՀՀ-ն 139 երկրների շարքում զբաղեցրել է 59-րդ տեղը՝ 2024 թվականի 63-րդ տեղի համեմատ: ՀՀ-ն միջինից բարձր եկամուտ ունեցող 36 տնտեսություններից 11-րդն է:

Համաշխարհային բանկի կողմից 2025 թվականի դեկտեմբերի 29-ին հրապարակված B-READY 2025 վարկանշային գեկույցի համաձայն՝ Հայաստանն ստացել է 66,7 միավոր, ինչը 6,6 միավորով գերազանցում է գնահատված 101 երկրի

միջինացված ցուցանիշը: Այս արդյունքով Հայաստանն ընդգրկվում է Եվրոպա և Կենտրոնական Ասիա տարածաշրջանների առավել կայուն գործարար միջավայր ունեցող երկրների խմբում:

2025 թվականին հրապարակված տվյալների համաձայն՝ Հայաստանը 2023 թվականի դրությամբ բարելավել է իր դիրքը տնտեսական բարդության ինդեքսում՝ զբաղեցնելով 56-րդ տեղը:

2025 թվականին ընդունվել է Կառավարության «Հայաստանի Հանրապետությունում կանաչ, անցումային և նպաստող ծրագրերի և միջոցառումների տեսակների դասակարգման համակարգը (տաքսոնոմիան) հաստատելու մասին» որոշումը:

Մոտարկվել է ԵՄ 7 հրահանգ սպառողների պաշտպանության ոլորտում:

Հրապարակվել են Կորպորատիվ կառավարման առաջընթացի մատրիցան (ուղեցույցը), Կորպորատիվ կառավարման հայտարարագրի 3 ձևաչափերը և Կորպորատիվ կառավարման կանոնագրքի կիրառման ուղեցույցը:

2017 թվականին ՓՄՁ-ների կողմից ձևավորված շրջանառության մասնաբաժինը ՓՄՁ շրջանակն ընդգրկող ոլորտներում կազմել է 62,4%, իսկ ՓՄՁ-ների համախառն ավելացված արժեքի մասնաբաժինը ՀՆԱ-ում 24,6%, մինչդեռ 2024 թվականին նշված ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 78,1% և 34,3% (համաձայն 2025 թվականին հրապարակված տվյալների):

Արտադրողականության խթանման նպատակային ծրագրի շրջանակում 2022-2025 թթ. ձևավորվել է վարկային/լիզինգային ընդհանուր պորտֆել՝ շուրջ 471,5 մլրդ ՀՀ դրամ հանրագումարով: Ծրագրի շրջանակում կնքվել է 9 451 վարկային/լիզինգային պայմանագիր, սուբսիդավորված գումարը՝ շուրջ 46 մլրդ ՀՀ դրամ, ձեռք են բերվել 16 560 միավոր մեքենասարքավորում և բաղկացուցիչ մասեր: Միայն 2025 թվականի ընթացքում վարկային/լիզինգային ընդհանուր պորտֆելը կազմել է շուրջ 137 մլրդ ՀՀ դրամ, ծրագրի շրջանակում կնքվել է 2 655 վարկային/լիզինգային պայմանագիր, սուբսիդավորված գումարը՝ շուրջ 22,9 մլրդ ՀՀ դրամ, ձեռք են բերվել 3 560 միավոր մեքենասարքավորում և բաղկացուցիչ մասեր:

«Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց» օժանդակության ծրագրի շրջանակում 2025 թվականին կնքվել է 9 պայմանագիր, որոնց շրջանակում նախատեսվում է կատարել շուրջ 23,4 մլրդ ՀՀ դրամի ներդրում մասնավոր հատվածի կողմից, իսկ կառուցված ենթակառուցվածքների գումարի փոխհատուցումը կկազմի շուրջ 2,6 մլրդ ՀՀ դրամ:

Արտահանման խթանման նպատակով օժանդակության տրամադրման ծրագրի իրականացման արդյունքում 2025 թվականին դեպի ծրագրի թիրախային երկրներ (ԵՄ, ՄԹ, Կանադա) ՀՀ ծագման ապրանքների արտահանման մասով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աջակցությունից օգտված կազմակերպությունների արտահանման ծավալն ավելացել է շուրջ 15,2%-ով, մասնավորապես՝ այլումինի արտադրության արտադրանք արտահանած ընկերության մասով՝ շուրջ 19,2%-ով, հագուստի արտադրանք արտահանած

ընկերությունների մասով՝ շուրջ 12,5%-ով, մնացյալ ընկերությունների մասով (սննդի, խմիչքների արտադրություններ, արտահանող ընկերություններ)՝ շուրջ 37%-ով:

Ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնության կիրառման արդյունքում 2025 թվականին 67 ներդրումային ծրագիր ստացել է արտոնություն, որոնց շրջանակներում գնահատված արտոնության չափը կազմել է շուրջ 39 մլրդ ՀՀ դրամ, ծրագրերով ներկայացված ներդրումների չափը՝ շուրջ 243 մլրդ ՀՀ դրամ, նոր ստեղծվող աշխատատեղերի քանակը՝ 3 405:

2025 թվականին ԵԱՏՄ շրջանակներում ՀՀ Կառավարության նախաձեռնությամբ սակագնային արտոնություններ են սահմանվել մի շարք կարևոր ապրանքատեսակների համար, մասնավորապես՝ եղջերավոր անասունների մսի (9 500 տոննա), խոզի մսի (9 400 տոննա), թռչնամսի (35 100 տոննա), կարտոֆիլի սերմնացուի (3 500 տոննա), սերուցքային կարագի (2 000 տոննա), էլեկտրամոբիլի (8 000 հատ) և այլ ապրանքատեսակների, որի արդյունքում ապրանքներն ու հումքն ավելի մատչելի են դարձել ներքին շուկայի համար:

ՀՀ կորպորատիվ պարտատոմսերի շուկայի ծավալը 2017 թվականի 96,9 մլրդ ՀՀ դրամից 2025 թվականին հասել է 664,1 մլրդ ՀՀ դրամի, ինչը 2017 թվականի համեմատ ավելացել է շուրջ 6,9 անգամ:

Ցուցակված և առևտրին թույլատրված պարտատոմսերի քանակը 2017 թվականին կազմել է 70, 2025 թվականին՝ 167 (աճը կազմել է շուրջ 2,4 անգամ):

Գործարքների քանակը 2017 թվականին կազմել է 630, 2024 թվականին՝ 5 596, իսկ 2025 թվականին՝ 10 604 (աճը կազմել է 16,8 անգամ 2017 թվականի և 2 անգամ 2024 թվականի համեմատ): Շուկայի առևտրի ծավալը 2017 թվականին կազմել է 10,9 մլրդ ՀՀ դրամ, 2024 թվականին՝ 72,1 մլրդ ՀՀ դրամ, 2025 թվականին՝ 115,7 մլրդ ՀՀ դրամ (աճը կազմել է շուրջ 60% 2024 թվականի ու գրեթե 11 անգամ 2017 թվականի համեմատ):

Զբոսաշրջության զարգացման ուղղությամբ 2025 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Միջազգային ասպարեզում Հայաստանի զբոսաշրջային ներուժի ներկայացման շրջանակներում համագործակցություն է սպառնովել հետևյալ միջազգային գործընկերների հետ՝ Wizz Air, BBC Global News, Paramount Pictures, Expedia և Yandex, Հայաստանի մասին հոդվածներ են հրատարակվել հայտնի ամսագրերում և պարբերականներում, ինչպիսիք են, օրինակ, բրիտանական National Geographic-ը, Wanderlust-ը, իտալական La Repubblica-ն, գերմանական Tagesspiegel.de-ն, ֆրանսիական Radio France-ը և այլն: Գերմանիայից, Ավստրիայից, Շվեյցարիայից, Վրաստանից, Արաբական երկրներից, Իտալիայից, Ֆրանսիայից և Ռուսաստանից ապահովվել են ընդհանուր 79 մեդիա ներկայացուցիչների, բլոգերների և ինֆյունեսերների այցեր: Աջակցություն է տրամադրվել 12 փառատոնի կազմակերպմանը: Կազմակերպվել է «Tourism Talks: Connecting People, Places, and

Perspectives» խորագրով զբոսաշրջային հաղորդակցության համաշխարհային ֆորումը:

Որակի ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ 2025 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Սահմանվել է վտանգավոր ոչ պարենային արտադրանքի իրացման կասեցման, հետևանքների և ոչնչացման հստակ կարգը և դրա շրջանառության նկատմամբ վերահսկողության մեխանիզմը:

Ընդլայնվել են տրամաչափարկման լաբորատոր կարողությունները 4 ուղղություններով, որոնցից 3-ի համար ներկայացվել է միջազգային հավատարմագրման հայտ, իսկ մինչ այդ հիմնված տրամաչափարկման լաբորատորիաների 2 ուղղություններն ստացել են միջազգային հավատարմագրում:

Հավատարմագրվել են 7 արտադրանքի սերտիֆիկացման մարմին, 11 փորձարկման և տրամաչափարկման լաբորատորիա, 3 հսկողություն և ստուգաչափում իրականացնող մարմին:

Մտավոր սեփականության պահպանության ոլորտում 2025 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ազգային ընթացակարգով ստացվել է ապրանքային նշանների 3 863 հայտ՝ 2024 թվականի 3 636-ի համեմատ: Միջազգային ընթացակարգով Հայաստանի նշմամբ ստացվել է ապրանքային նշանի 3 309 ծանուցում՝ 2024 թվականի 2 981-ի համեմատ: Հայաստանից ներկայացվել է միջազգային գրանցման 38 ապրանքային նշանի հայտ: Ներկայացվել է 106 արտոնագիր ստանալու հայտ (36 գյուտի արտոնագիր և 70 գյուտի կարճաժամկետ արտոնագիր)՝ 2024 թվականի 96-ի համեմատ: Ազգային ընթացակարգով ներկայացվել է արդյունաբերական դիզայնի 52 հայտ: «Հայկական մածուն», «Հայկական լավաշ», «Հայկական բաստուրմա» և «Հայկական սուջուխ» աշխարհագրական նշումով արտադրանքների գրանցման համար համապատասխան հայտեր են ներկայացվել Մտավոր սեփականության գրասենյակ, որոնք պաշտոնապես գրանցվել և իրավապաշտպանություն են ստացել ՀՀ-ում:

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ, ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՊ

2025 թվականի դեկտեմբերի դրությամբ ՊԵԿ-ի տվյալների համաձայն Հայաստանում ՏՏ ոլորտում գործունեություն է իրականացրել 12 026 ընկերություն՝ 2024 թվականի դեկտեմբերի 8 396 ընկերության համեմատ, իսկ ոլորտի ընկերություններում աշխատակիցների թիվը կազմել է 41 431՝ 2024 թվականի դեկտեմբերի 41 541 մարդու համեմատ. աճը 2017 թվականի համեմատ 2,6 անգամ (համաձայն Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի տարեկան զեկույցի): 2017 թվականին ՏՏ ոլորտում գործունեություն է իրականացրել 650 ընկերություն (աճը 18,5 անգամ), որոնց աշխատակիցների թիվը 15 350 էր:

Ոլորտի շրջանառությունը կազմել է շուրջ 1 տրլն 53 մլրդ ՀՀ դրամ՝ 2024 թվականի շուրջ 915,8 մլրդ ՀՀ դրամի համեմատ (աճը 2017 թվականի համեմատ 3,2 անգամ):

2017 թվականին ՏՏ ոլորտում շրջանառությունը կազմել է շուրջ 306 մլրդ ՀՀ դրամ: Ոլորտի արտահանումների ընդհանուր ծավալը կազմել է 711,5 մլրդ ՀՀ դրամ՝ 2024 թվականի շուրջ 702,1 մլրդ ՀՀ դրամի համեմատ: 2017 թվականի համեմատ 5,2 անգամ: 2017 թվականին ՏՏ ոլորտի ընկերությունների արտահանումների ընդհանուր ծավալը կազմել է 135,4 մլրդ ՀՀ դրամ:

Բարձր տեխնոլոգիաների ոլորտում ընդգրկված 319 կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին 2025 թվականին տրամադրվել է շուրջ 8,9 մլրդ ՀՀ դրամի պետական աջակցություն՝ մասնագիտական աշխատող հանդիսացող աշխատանքային միգրանտների և աշխատաշուկա նոր մուտք գործած աշխատողների ներգրավման, կադրերի պատրաստման և վերապատրաստման համար:

«Ներուժ 6.0» սփյուռքի տեխնոլոգիական ստարտափներ ծրագրի շրջանակում Հայաստան է հրավիրվել 32 ստարտափ: Հաղթող է ճանաչվել 6 ստարտափ: Պետական աջակցության ընդհանուր բյուջեն կազմել է 90 մլն ՀՀ դրամ:

«Գաղափարից բիզնես» դրամաշնորհային ծրագրի «Գաղափարի փուլ» բաղադրիչի շրջանակում 53 ընկերությունից հաղթող է ճանաչվել 19 ընկերություն, որոնց տրվել է մինչև 5 մլն ՀՀ դրամ դրամաշնորհ:

«Մասնագետների պատրաստման բարձրագույն ուսումնական հաստատություններ-մասնավոր հատված համագործակցություն» ծրագրի «Մասսայական ուսուցում» բաղադրիչի շրջանակում 7 մարզում 700-ից ավելի մասնակցի համար կազմակերպվել են տեխնոլոգիական դասընթացներ:

Ավարտվել են Ինժեներական քաղաքի բիզնես արևելերատորի շենքի շինարարական աշխատանքները: Ինժեներական քաղաքում ռեզիդենտի կարգավիճակ ունի 16 ինժեներական ընկերություն:

Միջազգային հեղինակավոր արևելերատոր «Փլագ ընդ փլեյ թեք Սենթր»-ը Հայաստանում գրանցել է «Փլագ ընդ փլեյ Երևան» ՄՊԸ-ն և ղեկավարների 12-ին ընկերության հետ կնքվել է եռամյա պայմանագիր: Ծրագրի շրջանակում կիրականացվեն 2 ինկուբացիոն, 2 նախաարքևելերացիոն և 2 արքևելերացիոն ծրագրեր: Եռամյա ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է շուրջ 1,6 մլրդ ՀՀ դրամ:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության աջակցությամբ և համաֆինանսավորմամբ անցկացվել է «Սևան ստարտափ սամմիթ 2025-ը»: Աշխարհի 40 երկրից ավելի քան 250 ստարտափ թիմեր «Սևան ստարտափ սամմիթ 2025»-ի ընթացքում ներկայացրել են իրենց նորարարական գաղափարները:

Մարտից «Ստարլինկ ԷյԷմ» ՄՊԸ-ն գործունեություն է ծավալում ՀՀ-ում, և վերջինիս կողմից մատուցվող արբանյակային կապի ծառայությունները հասանելի են ՀՀ ամբողջ տարածքում:

Հանրապետության 755 (75,3%) բնակավայրում հասանելի են ամրակցված կապի լայնաշերտ ինտերնետի լարային տեխնոլոգիաների ծառայությունները, այդ թվում՝ 743 բնակավայրում (74,1%)՝ օպտիկամանրաթելային ցանցերը (բաժանորդներին առաջարկվող լայնաշերտ ինտերնետի 20-100Մբիթ/վ և ավելի արագությամբ), որոնք ընդգրկում են երկրի բնակչության ավելի քան 98%-ը, իսկ 996 (99,5%)

բնակավայրում՝ ամրակցված հեռախոսակապի և առնվազն 2 Մբիթ/վ արագությանը լայնաշերտ ինտերնետի անլար տեխնոլոգիաների ծառայությունները:

Բոլոր բնակավայրերում հասանելի են հանրային շարժական կապի, այդ թվում՝ 4G+ (LTE Advanced) տեխնոլոգիայի ծառայությունները, ընդ որում՝ բնակավայրերի 92,3%-ում (925 բնակավայր) հասանելի է առնվազն 2 օպերատորի, իսկ ավելի քան 80%-ում, որը կազմում է հանրապետության բնակչության ավելի քան 95%-ը՝ 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը: Հանրապետության գրեթե բոլոր 48 քաղաքային և շուրջ 400 գյուղական բնակավայրերում (որն ընդգրկում է բնակչության շուրջ 95%-ը) հասանելի է նաև մեկ օպերատորի, իսկ Երևանում և Գյումրիում բոլոր երեք օպերատորների 5G տեխնոլոգիայի ցանցը:

ՀՀ-ում Ռադիոհաճախականությունների կառավարման համակարգող հանձնաժողովի կողմից ՀՀ տարածքում շարժական կապի լայնաշերտ 5G տեխնոլոգիայի ցանցերի ներդրման և զարգացման համար նախատեսված՝ 2300-2400 ՄՀց, 2,6ԳՀց և 3600-3800 ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթները ազատականացվել և տրամադրվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ մրցութային գործընթացները կազմակերպելու համար:

«Հայաստանի Հանրապետությունում մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալում» միջոցառման արդյունքում ապահովվել է ՀՀ ամբողջ տարածքում թվային հեռարձակման ցանցի անխափան գործունեությունը:

Թվային հեռարձակման ցանցը բաղկացած է 213 հեռուստակայաններից, որոնցից 66-ում հանրապետական սփյուռման մուլտիպլեքսի հաղորդումն իրականացվում է օպտիկամանրաթելային ցանցով, իսկ 147-ում՝ արբանյակային ունակության կապուղով: Հեռուստահեռարձակման ծածկույթը ՀՀ բնակավայրերում կազմում է 100%:

2025 թվականին իրականացվել է Երևանի հեռուստաաշտարակի գեղարվեստական լուսավորության համակարգի ամբողջական արդիականացում՝ այն դարձնելով ժամանակակից մեդիա-արտ ինստալյացիա:

Ռադիոէթերի մշտադիտարկման և անօրինական ռադիոճառագայթման աղբյուրների տեղորոշման աշխատանքների իրականացման արդյունքում օգտագործվող ռադիոհաճախականային տիրույթի մաքրությունն ապահովվել է 98%-ով՝ նախատեսված 95%-ի փոխարեն:

2025 թվականին փոստային կապի գործունեություն է իրականացրել 47 ընկերություն, որից 2-ը՝ նոր: Արդյունքում, պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 133 մլն ՀՀ դրամ:

«Արմսաթ 1» արբանյակը ավարտել է իր առաքելությունը և 2025 թվականի նոյեմբերի 7-ին դուրս է եկել ուղեծրից: Ձեռք բերված տվյալները հնարավորություն են տվել իրականացնելու «Երևան-1» վերգետնյա կայանի գործարկման, ալեհավաքի ուղղորդման և կարգավորման աշխատանքներ և ստեղծել համապատասխան տվյալների բազա «Գեոկոսմոս» ՓԲԸ-ի սերվերներում:

Մասնակցություն միջազգային համաժողովներին և ցուցահանդեսներին

2025 թվականի ընթացքում կազմակերպվել և համակարգվել է հայկական ընկերությունների մասնակցությունն ազգային տաղավարով 13 միջազգային ցուցահանդեսի: Միջազգային ցուցահանդեսներին ներկայացվել է 152 հայկական ընկերության արտադրանք կայացել են 400-ից ավելի B2B ձևաչափով հանդիպումներ: Կազմակերպվել է 7 գործարար համաժողով (Հայաստան-Վրաստան, Հայաստան-Իրաք, Հայաստան-Իրան, Հայաստան-Հնդկաստան, Հայաստան-Ղազախստան, Հայաստան-Գերմանիա, Հայաստան-Եգիպտոս), որոնց մասնակցել է ավելի քան 600 գործարար:

Մասնակցություն է ապահովվել հետևյալ տեխնոլոգիական ցուցահանդեսներում՝ «Այդեքս 2025» (IDEX 2025), «Համաշխարհային բջջային կոնգրես 2025» (Mobile World Congress 2025), «Դեֆեա 2025» (DEFEA 2025), «Վիվա թեքնոլոջի 2025» (Viva Technology 2025), «Զայտեքս գլոբալ 2025» (Gitex Global 2025), «ԴԻԶԻԹԵԲ 2025» (DIGITEC 2025):

2025 թվականին ցուցահանդեսների արդյունքում մասնակից կազմակերպությունների միջև կնքվել են 27 պայմանագիր, 6 հուշագիր, 12 փոխադարձ գաղտնիության համաձայնագիր և 6 համագործակցության այլ ձևաչափ:

2025 թվականի ընթացքում ապահովվել է Հայաստանի զբոսաշրջության ներուժի մասնակցությունը հետևյալ 5 միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսին՝ FITUR Spain - 2025, ITB Berlin – 2025, MITT- Moscow 2025, Arabian Travel Market – 2025, «Qatar Travel Market-2025», World Travel Market London - 2025:

Հայկական 10 գինեգործական ընկերություն համատեղ տաղավարով մասնակցել է Ճապոնիայի Տոկիո քաղաքում անցկացված «FOODEX JAPAN 2025» ցուցահանդեսին: Ապրիլից հոկտեմբեր ամիսներին Հայաստանը տաղավարով մասնակցել է նաև «ԷԲՍՊՈ 2025 Օսակա, Կանսայ, Ճապոնիա» համաշխարհային ցուցահանդեսին:

ԳՅՈՒՂ ԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է ավելի քան 1 տրլն ՀՀ դրամ (նախորդ տարվա համեմատ աճել է 5,6%-ով), որից՝

- բուսաբուծությունը 539,9 մլրդ ՀՀ դրամ (նախորդ տարվա համեմատ աճը՝ 9,7%),
- անասնաբուծությունը 517,3 մլրդ ՀՀ դրամ (նախորդ տարվա համեմատ աճը՝ 1,8%):

2025 թվականի տարեկերջի դրությամբ գյուղատնտեսության ոլորտում տրամադրված վարկերի ծավալը կազմել է 378,9 մլրդ ՀՀ դրամ, որը 2024 թվականի համեմատ աճել է 10,4 %-ով, իսկ 2017 թվականի համեմատ՝ 2,3 անգամ:

2025 թվականի ընթացքում գյուղատնտեսության ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Հիմնվել է 1 365 հա ինտենսիվ այգի: Հատկանշական է, որ ծրագրի շրջանակում փաստացի այգեհիմնումները մեկնարկել են 2019 թվականին՝ 37 հա, որի համեմատ 2025 թվականի ցուցանիշն աճել է շուրջ 37 անգամ: 2025 թվականին 2024 թվականի համեմատ աճը կազմել է 9,7%: Ծրագրի մեկնարկից՝ 2018 թվականից մինչև 2025 թվականը ներառյալ հիմնվել է 4 635 հա ինտենսիվ այգի:

2021-2025 թթ. փաստացի հիմնվել է 4 516 հա ինտենսիվ այգի, իսկ շուրջ 7 000 հա հողատարածքում ներդրվել են ոռոգման արդիական համակարգեր (ներառյալ այգեհիմնումը):

Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի ծրագրի շրջանակում ձեռք է բերվել 1 219 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, լիզինգի գործարքների հանրագումարը կազմել է 5 մլրդ ՀՀ դրամ, իսկ սուբսիդավորման գումարը՝ 957,3 մլն ՀՀ դրամ: 2025 թվականին ձեռք բերված տեխնիկայի քանակը 2018 թվականի համեմատ աճել է շուրջ 5,5 անգամ (2018 թվականին՝ 220 միավոր): Ծրագրի մեկնարկից սկսած՝ ձեռք է բերվել 5 290 միավոր տեխնիկա, լիզինգի գումարը՝ 23,3 մլրդ ՀՀ դրամ, սուբսիդավորման գումարը՝ 4,3 մլրդ ՀՀ դրամ:

Ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի ծրագրի շրջանակում ձեռք է բերվել 422 միավոր սարքավորում, լիզինգի գործարքների հանրագումարը կազմել է 6,9 մլրդ ՀՀ դրամ, իսկ սուբսիդավորման գումարը՝ 2,9 մլրդ ՀՀ դրամ: 2025 թվականին 2018 թվականի համեմատ ձեռք բերված սարքավորումների թիվն աճել է շուրջ 47 անգամ (2018 թվականին՝ 9 միավոր): Ծրագրի մեկնարկից՝ 2018 թվականից սկսած, ձեռք է բերվել 3 582 միավոր սարքավորում, լիզինգի գումարը՝ 54,1 մլրդ ՀՀ դրամ, սուբսիդավորման գումարը՝ 13,9 մլրդ ՀՀ դրամ:

Ջերմատնային տնտեսությունների զարգացման նպատակով պետության կողմից իրականացվող ծրագրերի շրջանակում կառուցվել են 25,76 հա ընդհանուր մակերեսով արդիական տեխնոլոգիաներով հագեցած ջերմատնային տնտեսություններ, մեկնարկել է 64,8 հա ջերմատնային կառուցման գործընթացը: 2025 թվականին հիմնված ջերմատների մակերեսը 2024 թվականի համեմատ ավելացել է շուրջ 2,2 անգամ (2024 թվականին հիմնվել է 11,5 հա ջերմատն): Ծրագրերի մեկնարկից՝ 2018 թվականից սկսած, հիմնվել է 85 հա առաջադեմ տեխնոլոգիաներով ջերմատնային տնտեսություն:

Սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարողներին աջակցության ծրագրի շրջանակում տրամադրվել է շուրջ 66,9 մլն ՀՀ դրամ աջակցություն, իսկ սպանդանոցների կողմից մատուցվող խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի ծառայության վճարի մասնակի փոխհատուցման ծրագրի շրջանակում Կառավարության կողմից տրամադրվել է 67,1 մլն ՀՀ դրամի չափով փոխհատուցում՝ 6 704 գլուխ ԽԵԿ-ի սպանդի ծառայության համար:

Բուսաբուծության աջակցության ծրագրի շրջանակում 5 202 շահառուի կողմից իրականացվել է 24 006 հա գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի ցանք: Կառավարության կողմից փոխհատուցված գումարը կազմել է 1,8 մլրդ ՀՀ դրամ: 2024 թվականին 4 904 շահառուի կողմից իրականացվել է 19 197 հա մակերեսով հացահատիկային, հատիկաընդեղեն և

բազմամյա խոտաբույսերի ցանքեր: Ծրագրի շրջանակում 2025 թվականին՝ 2024 թվականի համեմատ շահառու տնտեսությունների ցանքատարածություններն ավելացել են 25 %-ով:

2025 թվականին ՀՀ-ում իրականացվել է աշնանացան ցորենի 71 335 հա ցանք, որը 2024 թվականի համեմատ ավելի է շուրջ 40,8%-ով:

2025 թվականին իրականացվել է վնասակար օրգանիզմների հայտնաբերման, հաշվառման բուսասանիտարական մշտադիտարկում 180 հազար հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում, որի արդյունքում շուրջ 100 հազար հա հողատեսքերում իրականացվել են պայքարի աշխատանքներ:

Գյուղատնտեսական հումքի մթերումների ծրագրի շրջանակում հաստատվել է 238 հայտ՝ 19,6 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, որի արդյունքում կնքվել է 7 833 բերքի գնման պայմանագիր: Բացի դրանից՝ խաղողի մթերումների գործընթացը կազմակերպելու նպատակով ծրագրի շրջանակում 6 ընկերության տրամադրվել է 4,6 մլրդ ՀՀ դրամի բյուջետային երաշխիք:

Անխոչընդոտ մթերվել է շուրջ 200 հազար տոննա խաղող և 64,3 հազար տոննա պտուղ-բանջարեղեն: Արենի և Ոսկեհատ տեսակների խաղողի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառման շրջանակում տրամադրվել է 143 մլն ՀՀ դրամ աջակցություն՝ շուրջ 2 հազար տոննա խաղողի մթերման համար, իսկ լուիկի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառման շրջանակում տրամադրվել է 93 մլն ՀՀ դրամ աջակցություն՝ 9,3 հազար տոննա լուիկի մթերման համար:

Կոնյակի սպիրտի արտահանման աջակցության ծրագրի շրջանակում տրամադրվել է 994,2 մլն ՀՀ դրամ ծավալով աջակցություն, որի արդյունքում արտահանվել է 9,9 մլն բացարձակ լիտր կոնյակի սպիրտ: Ընդհանուր առմամբ 2025 թվականին արտահանվել է 13,8 մլն բացարձակ լիտր կոնյակի սպիրտ:

2025 թվականի ընթացքում ՀՀ-ից արտահանվել է 18,7 մլն ԱՄՆ դոլարի գինի, որը 2017 թվականի համեմատ աճել է 80%-ով, իսկ 2024 թվականի համեմատ աճել 12,7 %-ով:

Անասնաբուծության ճյուղում խոշոր ներդրումային ծրագրերին աջակցության ծրագրի շրջանակում կնքվել է 1 պայմանագիր՝ 3,5 մլրդ ՀՀ դրամի ծավալի ներդրում կատարելու համար: Գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման ծրագրի շրջանակում 2025 թվականին իրականացվել է 1 028 351 գլուխ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների համարակալում: Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի շրջանակում իրականացվել է 6 619 725 միջոցառում, ինչի արդյունքում հանրապետությունում ապահովվել է անասնահամաճարակային կայուն իրավիճակ:

2025 թվականին 1 կովի միջին կաթնատվությունը կազմել է 2 610 կգ, 2024 թվականին՝ 2 567 կգ, իսկ 2017 թվականին՝ 2 260 կգ, ինչը գերազանցվել է 15,5%-ով:

2025 թվականին հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների, թռչնի մսի և ձկան ընդհանուր համախառն արտադրությունը կազմել է 135,1 հազար տոննա, 2024 թվականին նույն ցուցանիշը կազմել էր 132,7 հազար տոննա, իսկ 2017 թվականին՝ 126 հազար տոննա (աճը 2017 թվականի համեմատ կազմել է 7,2%):

Աննախադեպ ցուցանիշ է արձանագրվել ձվի արտադրության ոլորտում: 2017 թվականին հանրապետությունում արտադրվել է 683 մլն ձու, իսկ 2025 թվականին ձվի արտադրության ցուցանիշը կազմել է 807,4 մլն՝ գերազանցելով 2017 թվականի ցուցանիշը 18,2%-ով:

Տավարաբուծության, ոչխարաբուծության և այծաբուծության պետական աջակցության ծրագրերի շրջանակներում 2025 թվականին ձեռք է բերվել 800 գլուխ տոհմային բարձրարժեք կենդանի, որը 2024 թվականի ցուցանիշը գերազանցում է 3,4 անգամ: Խելացի անասնաշենքերի կառուցման աջակցության ծրագրի շրջանակում կառուցվել և տեխնոլոգիապես հագեցվել է 5 անասնաշենք:

Մթերատվության բարձրացման փորձնական ծրագրի շրջանակում Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում իրականացվել է 3 350 կովի արհեստական սերմնավորում:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 2025 թվականին գրանցվել է 42 571 նոր անշարժ գույք, որից 14 352-ը՝ բնակելի: 2025 թվականին գրանցված նոր բնակելի գույքի թիվը 2018 թվականի համեմատ ավելի է 1,7 անգամ: 2018-2025 թթ. ընթացքում ՀՀ-ում նոր կառուցված և ՀՀ կադաստրի կոմիտեի գրանցած գույքերի թիվը կազմել է 161 997, որից 126 545-ը՝ բնակելի:

Հանրապետության բոլոր բնակավայրերն ապահովվել են միկրոռեզիդենսալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերով:

Վերանայվել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման և հաստատման նոր կարգը: Հաստատվել է շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության կարգը:

Սահմանվել է, որ շենքերի սեյսմակայունության լրացուցիչ պահանջների ապահովման դեպքում սահմանային հարկայնությունը կարող է բարձրացվել հետևյալ չափով՝ մանկապարտեզների համար՝ նախկին 3-ի փոխարեն 4 հարկ, դպրոցների համար՝ 3-ի փոխարեն 5 հարկ, առողջապահական օբյեկտների համար՝ 3-ի փոխարեն 9 հարկ:

Հաստատվել է շինարարության ոլորտում գնագոյացման քաղաքականությունը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը:

Հաստատվել են շենքերի և շինությունների անձնագրերի լրացման (անձնագրավորման) մեթոդաբանությունը և անձնագրերի օրինակելի ձևերը, ինչպես նաև շենքերի և շինությունների անձնագրավորման կարգը:

2025 թվականի տարեվերջի դրությամբ քաղաքաշինության բնագավառում նոր ընթացակարգով տրամադրվել և գործում է 3 317 լիցենզիա և 6 173 ներդիր, 3 183 հավաստագիր: ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է շուրջ 526,1 մլն ՀՀ դրամ հավաստագրման և լիցենզիաների տարեկան պետական տուրք և տույժ:

ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

«Մեկ պատուհան»-ի սկզբունքի կիրառմամբ 2025 թվականին տրամադրվել է 54 ընդերքօգտագործման իրավունք, որից 33-ը՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով, 21-ը՝ երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով: Հաստատվել են 19 հանքավայրի պաշարները (որոնցից 1-ը՝ մետաղական): Մերժվել են 4 ընկերության ընդերքաբանական փորձաքննություն իրականացնելու մասին դիմումները (2-ը՝ մետաղական, 2-ը՝ ոչ մետաղական):

2025 թվականին ՀՀ 6 համայնքում իրականացվել են ոռոգիչներից ստացվող համայնքային մասհանումների ծրագրեր, որոնց ֆինանսավորման չափը կազմել է շուրջ 1,6 մլրդ ՀՀ դրամ (2022 թվականին ՀՀ պետական բյուջե վճարված ոռոգիչների 2%-ը):

Բացահայտվել է 233 ապօրինի ընդերքօգտագործման և թաքցված ծավալների դեպք: Այդ դեպքերով հաշվարկվել է 14,9 մլն մ³ օգտակար հանածոյի զանգված, պետությանը պատճառված վնասի չափը կազմել է շուրջ 26,4 մլրդ ՀՀ դրամ, իսկ շրջակա միջավայրին հասցվել է շուրջ 6,2 մլրդ ՀՀ դրամի վնաս:

Արաքս գետի շուրջ ստեղծված հիմնախնդիրները հաշվի առնելով՝ իրականացվել են օրենսդրական փոփոխություններ, որոնց արդյունքում հստակեցվել են վերահսկողական մեխանիզմները: Արգելվել է սահմանային գետերի, այդ թվում՝ Արաքս գետի հունից ավազի արդյունահանումը, սահմանվել են ավապաշտպան արգելապատնեշների կառուցման նպատակով իրավակարգավորումներ և բարձրացվել են վարչական պատասխանատվության սահմանաչափերը:

2025 թվականի արդյունքներով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կանխատեսվող գուտ շահույթը կազմելու է շուրջ 124 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ 2024 թվականի 115 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի, 2023 թվականի 215 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի, 2022 թվականի 221 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի, 2021 թվականի 188 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի, 2020 թվականի 2 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի, 2019 թվականի 30 մլն ԱՄՆ դոլարին համարժեք վնասի, 2018 թվականի 32 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի և 2017 թվականի 22,5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի համեմատ:

2025 թվականի արդյունքներով ընկերության վճարած հարկերի և տուրքերի հանրագումարը կազմել է շուրջ 135 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ 2024 թվականի շուրջ 259,5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի, 2023 թվականի շուրջ 181 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի, 2022 թվականի շուրջ 336 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի (որից պետական տուրքի գումար՝ շուրջ 80 մլն ԱՄՆ դոլարին համարժեք և նախորդ տարիների ընթացքում պակաս վճարված հարկերի գումար՝ շուրջ 35 մլն ԱՄՆ դոլարին համարժեք), 2021 թվականի շուրջ 123 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի, 2020 թվականի շուրջ 88 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի, 2019 թվականի շուրջ 107 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի, 2018 թվականի շուրջ 104 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի և 2017 թվականի շուրջ 38,7 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի համեմատ:

Բաշխվել է 2022, 2023 և 2024 թվականների շահաբաժինը՝ շուրջ 518 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որից Կառավարության մասնաբաժինը կազմել է 113,4 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին ճանապարհաշինարարական ծրագրերով հիմնանորոգվել, միջին նորոգվել, վերակառուցվել, կառուցվել են շուրջ 504,5 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածներ, մասնավորապես՝ հիմնանորոգվել, կառուցվել, վերակառուցվել է 267,5 կմ ճանապարհահատված, միջին նորոգման է ենթարկվել 184,3 կմ ճանապարհահատված, 52,7 կմ վերակառուցման աշխատանքներ են իրականացվել Հյուսիս-հարավ ծրագրի շրջանակներում:

Հատկանշական է, որ 2018-2025 թթ. իրականացվել են 4 735,74 կմ ճանապարհների կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման և միջին նորոգման աշխատանքներ, որոնցից 1 346 կմ-ը՝ սուբվենցիոն ծրագրերով:

2025 թվականին հիմնանորոգված և վերակառուցված ճանապարհներից առանձնահատուկ կարևորություն ունեն հատկապես՝ Որոտան-Խոտ ավտոճանապարհի վերակառուցումը, Թթուջուր-Նավուր, Շինուհայր-Տաթև և Իջևան-Նավուր-Բերդ-Այգեպար ավտոճանապարհների հիմնանորոգումը:

ՀՀ համայնքներում 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ասֆալտապատվել է շուրջ 265 կմ և սալարկվել շուրջ 38 կմ ներհամայնքային ճանապարհ:

2025 թվականին իրականացվել են նաև 14 տրանսպորտային օբյեկտի հիմնանորոգման, վերակառուցման և կառուցման աշխատանքներ, որից 12 տրանսպորտային օբյեկտի (10 կամուրջ, 2 տրանսպորտային հանգույց) շինարարական աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են:

Ավարտվել են Պուշկինի և Դիլիջանի ավտոճանապարհային թունելների վերականգնման և կառուցման նախագծային աշխատանքները:

Ճանապարհների ընթացիկ պահպանման աշխատանքների նկատմամբ հսկողության շրջանակներում «Arm roads info» բջջային հավելվածում և «Ճանապարհային ցանցի կառավարման համակարգում» յուրաքանչյուր ոք հնարավորություն ունի արձանագրելու միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ պահպանման աշխատանքների հետ կապված թերությունները և ստանալու դրանց վերացված լինելու վերաբերյալ տեղեկատվություն:

Վերականգնվող ճանապարհների որակի բարելավման և վերահսկման շրջանակներում իրականացվել է 10 298 լաբորատոր փորձարկում, կատարվել է 4 302 հանուկ, որից 480-ը՝ սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Ավարտին են հասցվել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Երևան-Գյումրի ճանապարհահատվածի կառուցման և վերակառուցման աշխատանքները, որոնց շրջանակներում իրականացվել են Աշտարակ-Թալին 34 կմ երկարությամբ ճանապարհահատվածի վերակառուցման, Ագարակի հնագիտական վայրը շրջանցող 8 կմ ճանապարհահատվածի կառուցման, Լանջիկ-Գյումրի մոտ 27,5 կմ երկարությամբ ճանապարհահատվածի վերակառուցման աշխատանքները: Ճանապարհը բաց է երկկողմանի երթևեկության համար և կահավորված է անվտանգության տարրերով:

Ակտիվ շինարարական աշխատանքների փուլում է Քաջարան-Ագարակ 32 կմ հատվածի վերակառուցման ծրագիրը, որի շրջանակներում ավարտվել են 390 մ երկարությամբ առաջին թունելի փորման աշխատանքները, սկսվել են շուրջ 530 մ երկարությամբ երկրորդ թունելի փորման աշխատանքները, որից արդեն իսկ փորվել է ավելի քան 390 մ երկարությամբ հատված: Նախատեսված 15 կամրջից 14-ի վրա իրականացվում են ակտիվ շինարարական աշխատանքներ:

Միսիան-Քաջարան ծրագրի մոտ 60 կմ ընդհանուր երկարությամբ նոր ճանապարհահատվածի՝ ներառյալ 4,7 կմ ընդհանուր երկարությամբ 27 կամրջի և 12,5 կմ ընդհանուր երկարությամբ 9 թունելի (այդ թվում՝ Բարգուշատի թունելը՝ մոտ 8,6 կմ երկարությամբ) կառուցման համար վարկային համաձայնագրերն արդեն ստորագրված են, և մեկնարկել են միջազգային մրցութային գործընթացները: Աշխատանքները կսկսվեն 2026 թվականին:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Ավտոմոբիլային տրանսպորտ

2025 թվականին հանրապետության տարածքում միասնական երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում գործարկվել է Արագածոտնի մարզի միասնական երթուղային ցանցը: Ձեռք է բերվել ամբողջությամբ նոր 98 ավտոբուս, ներդրման ընդհանուր ծավալը կազմել է շուրջ 1,3 մլրդ ՀՀ դրամ:

Կայացել են Գեղարքունիքի մարզի Գավառի, Սևանի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղային ցանցերը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթները:

Տրանսպորտի բնագավառում մասնագիտական որակավորման գործընթացի կազմակերպման շրջանակներում ստեղծվել են ավտոմոբիլային տրանսպորտով միջպետական փոխադրումներ իրականացնող վարորդների և փոխադրումների մենեջերների մասնագիտական վերապատրաստման ծառայություն մատուցող ուսումնական կենտրոններ: Մշակվել է քննությունների կազմակերպման ծրագրային համակարգ:

Կազմակերպվել է միջպետական կանոնավոր երթուղիները սպասարկող կազմակերպությունների ընտրության 15 մրցույթ, որոնց արդյունքում 6 կազմակերպության տրվել է միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիներ սպասարկելու թույլտվություն:

2025 թվականի ընթացքում տրանսպորտի ոլորտում տրամադրվել են մի շարք թույլտվություններ և լիցենզիաներ, որի արդյունքում պետական բյուջե մուտքագրվել է շուրջ 223 մլն ՀՀ դրամ, ինչը 2024 թվականի պետական բյուջեի մուտքերի համեմատ աճել է 9,2%-ով:

Երրորդ երկրներից 2025 թվականին ՀՀ ներկրվել է 4 183 բեռնատար և 49 734 մարդատար տրանսպորտային միջոց, այդ թվում՝ 18 253 էլեկտրամոբիլ: 2025 թվականին ներկրված բեռնատար տրանսպորտային միջոցների թիվը 2024 թվականի համեմատ աճել է 6,2%-ով, 2017 թվականի համեմատ՝ 77,8%-ով, մարդատար տրանսպորտային միջոցներինը 2024 թվականի համեմատ աճել է 56,2%-ով, 2017 թվականի համեմատ՝ 35%-ով, այդ թվում՝ էլեկտրամոբիլներինը 2024 թվականի համեմատ աճել է 91,6%-ով, իսկ 2017 թվականի համեմատ՝ շուրջ 630 անգամ:

Օդային տրանսպորտ

2025 թվականի ընթացքում վերջնականացվել են Կառավարության և «Կորպորասիոն Ամերիկա Ս. Ա» ընկերության միջև կոնցեսիոն պայմանագրի լավարկման շուրջ աշխատանքները, որոնց արդյունքում 2026 թվականի հունվարին հաստատվել է կոնցեսիոն պայմանագրի 5-րդ լրացումը, որի շրջանակներում կոնցեսիոնները ստանձնել է հանձնառություն իրականացնելու 425 մլն ԱՄՆ դոլարի չափով ներդրումներ օդանավակայանի ենթակառուցվածքի արդիականացման և ծառայությունների բարելավման ուղղությամբ:

ՀՀ օդանավակայանների կողմից 2025 թվականի ընթացքում սպասարկվել է շուրջ 5,7 մլն ուղևոր, որը մոտ 7,5%-ով ավելի է 2024 թվականի և մոտ 125%-ով ավելի է 2017 թվականի ցուցանիշներից: Նշված ուղևորահոսքից 2025 թվականին շուրջ 1,3 մլն ուղևոր օգտվել է հայկական ավիաընկերություններից, ինչը կազմում է ընդհանուր ուղևորահոսքի մոտ 23%-ը և ավելի է մոտ 1280%-ով 2017 թվականի ցուցանիշից: Օդային ճանապարհով 2025 թվականին փոխադրվել է շուրջ 42,7 հազար տոննա բեռ, որը շուրջ 1,1%-ով ավելի է 2024 թվականի ցուցանիշից և շուրջ 92%-ով ավելի է 2017 թվականի ցուցանիշից:

Կառավարության կողմից հաստատված աջակցության ծրագրի շրջանակներում 2025 թվականի հոկտեմբերից ԵՄ խոշորագույն լոուքոսթ ավիաընկերություններից մեկը (WizzAir) բազավորվել է Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում:

2025 թվականին իրականացվել են կանոնավոր չվերթեր 65 ուղղությունով, ինչը գրեթե կրկնակի ավելի է 2017 թվականի ցուցանիշից:

ՀՀ-ից և դեպի ՀՀ մեկնարկել են չվերթեր 10 նոր ուղղությունով: Հայաստանյան շուկա մուտք է գործել 1 նոր՝ «Ջազիռա Էյրվեյզ» ավիաընկերությունը: Մեկնարկել են Գյումրի-Լառնակա կանոնավոր չվերթերը: Կապանի «Սյունիք» օդանավակայանի Երևան-Կապան-Երևան ուղղությամբ իրականացվել է 97 չվերթ և տեղափոխվել շուրջ 2 000 ուղևոր:

Օտարերկրյա օդանավ շահագործողներին տրամադրվել է ընդհանուր առմամբ կանոնավոր և ոչ կանոնավոր փոխադրումների շուրջ 3 000 թույլտվություն, ինչն ավելի է 2,7%-ով 2024 թվականի նույն ցուցանիշից:

Ընդհանուր նշանակության ավիացիայի կամ ներքին ոչ կանոնավոր առևտրային փոխադրումների համար նախատեսված թռիչք-վայրէջքի համապատասխանաբար «Ազատ» և «Մրգաստան» հարթակներին տրվել են շահագործման թույլտվություններ: Տրամադրվել է հատուկ բնույթի թռիչքների 41 թույլտվություն, որը մոտ 40%-ով ավելի է 2024 թվականի ցուցանիշից:

«Զվարթնոց» օդանավակայանի թողունակությունը մեծացնելու նպատակով վերագործարկվել է աներողումի «A» դեկոտի, որը շուրջ 40 տարի չէր շահագործվել:

2025 թվականին ուժի մեջ մտած «Պետական տուրքի մասին» օրենքում լրացման արդյունքում քաղաքացիական ավիացիայի բնագավառում մատուցված տարբեր ծառայությունների համար պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 136 մլն ՀՀ դրամ պետական տուրք:

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն ԵՄ է ներկայացրել արձանագրված բոլոր 41 թերությունների վերացման ուղղիչ գործողությունների պլանը, ինչպես նաև թերությունների վերացումը հիմնավորող փաստաթղթերը: Եվրոպական հանձնաժողովն ընդգծել է, որ Հայաստանը նշանակալի առաջընթաց է գրանցել ավիացիայի վերաբերյալ համապարփակ ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակման և ներդրման գործում, ապահովել է թռիչքային պիտանիության ոլորտում վերահսկողության բարձր մակարդակ, ինչն արձանագրվել է որպես բարեփոխում: Նշվել է, որ վերահսկողության գործընթացները համապատասխանում են պահանջներին, և այդ ոլորտում առկա է կայուն համակարգ:

Երկաթուղային տրանսպորտ

2025 թվականին երկաթուղային տրանսպորտի ոլորտում կատարվել են 1,68 մլրդ ՀՀ դրամի ներդրումներ՝ ենթակառուցվածքների և շարժակազմի արդիականացման համար:

Հատկանշական է, որ 2018–2025 թթ. երկաթուղային ենթակառուցվածքներում և շարժակազմում կատարվել է շուրջ 39,5 մլրդ ՀՀ դրամի ներդրում:

2025 թվականին տեղափոխվել է շուրջ 511 400 ուղևոր:

2025 թվականի ընթացքում տեղափոխված բեռների ծավալը կազմել է 1,85 մլն տոննա, որը 2024 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է շուրջ 28,5%-ով, իսկ բեռնաշրջանառությունը կազմել է 485,9 մլն տ-կմ, որը 2024 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է շուրջ 27,4%-ով:

2025 թվականի ընթացքում կոնտեյներներով տեղափոխվել է 0,45 մլն տոննա բեռ, որը 2024 թվականի համեմատությամբ աճել է շուրջ 12,8%-ով:

Ուսումնասիրությունների հիման վրա կազմված երկաթուղու բոլոր գծանցների անհրաժեշտ հագեցվածության և տեխնիկական վիճակի արձանագրված թերությունների վերացման միջոցառումների ծրագրի շրջանակներում վերացվել է արձանագրված թերությունների մոտ 70%-ը:

ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին խմելու ջրի կորուստները կազմել են 59,1%՝ 2024 թվականի 61%-ի, 2023 թվականի 63,1%-ի, 2022 թվականի 65,3%-ի և 2021 թվականի 73,7%-ի համեմատ: 2017 թվականին խմելու ջրի կորուստները կազմել են 81,1%:

Մատակարարված ոռոգման ջրի կորուստները 2025 թվականին կազմել են 44,5%՝ 2024 թվականի 45,5%-ի, 2023 թվականի 44,9%-ի, 2022 թվականի 46,4%-ի և 2021 թվականի 46,2%-ի համեմատ: 2017 թվականին ոռոգման ջրի կորուստները կազմել են 45,2%:

«Վեդիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման շարունակականությունը կազմել է Երևան քաղաքում՝ 23,1*ժամ/օր, այլ քաղաքային բնակավայրերում՝ 20,7*ժամ/օր, իսկ գյուղական բնակավայրերում՝ 20,4*ժամ/օր: Ջրի որակը կազմել է 98,56%՝ 2024 թվականի 98,54%-ի համեմատ:

2025 թվականին կազմակերպվել է խմելու ջրի մատակարարման 13 ենթածրագրի շինարարական աշխատանքների ձեռքբերում՝ 3,1 մլրդ ՀՀ դրամ արժեքով, որոնցից 10-ը՝ Երևան քաղաքում, իսկ 3-ը՝ Արմավիրի, Արագածոտնի և Լոռու մարզերում:

Շարունակվել են KFW-ի, ԵՆԲ-ի և ԵՄ-ի ֆինանսավորմամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքները՝ ՀՀ 7 մարզերի 63 բնակավայրերում: Կապիտալ ներդրումները 2025 թվականին կազմել են շուրջ 3,5 մլրդ ՀՀ դրամ:

Շարունակվել են ՎԶԵԲ, ԵՆԲ, ԵՄ և Կառավարության համաֆինանսավորմամբ Երևան քաղաքի Հաղթանակ, Սիլիկյան և Նոր Խարբերդ թաղամասերում և Արարատի մարզի Նոր Խարբերդ բնակավայրում ջրամատակարարման համակարգերի արդիականացման աշխատանքները: Կապիտալ ներդրումները 2025 թվականին կազմել են 992,2 մլն ՀՀ դրամ:

ԶՖԳ և Կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող Վեդիի ջրամբարի և ոռոգման համակարգի ծրագրով ավարտվել են Վեդիի ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների կառուցման ֆիզիկական աշխատանքները: Այս մասով ներդրումների ընդհանուր ծավալը 2025 թվականին կազմել է մոտ 4 մլրդ ՀՀ դրամ:

Շարունակվել են Կապսի ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցման աշխատանքները:

5 ջրամբարի (Ասողաձորի, Ելիհնի, Քասախի, Լիճքի և Արթիկի) կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը պատրաստ են, հաստատվել են, և ջրամբարների կառուցման վարկավորման հայտը ներկայացվել է ծրագրի դոնոր Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին:

2025 թվականին օրվա կարգավորման 14 ջրավազանից 5-ի շինարարական աշխատանքները մեկնարկել են և գտնվում են ավարտական փուլում, իսկ ևս 2-ի մրցութային գործընթացներն ավարտվել են, և կնքվել են շինարարական աշխատանքների պայմանագրեր:

2025 թվականին իրականացվել է ոռոգման 15 օբյեկտի հիմնանորոգում, որոնցից 11-ի շինարարությունն ավարտվել է, իսկ մնացած 4-ինը կավարտվի 2026 թվականին: Արդյունքում, կբարելավվի մոտ 4 500 հա ոռոգելի հողատարածքների ջրապահովվածության մակարդակը, ինչպես նաև լրացուցիչ մոտ 900 հա հողատարածքներ կդառնան ոռոգելի:

Հիմնանորոգված ոռոգման համակարգերում կորուստները կնվազեն 15-20%-ով:

Կատարվել են շուրջ 219,2 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, վերականգնման և նորոգման աշխատանքներ:

Կանխվել է շուրջ 7 000 հա հողատարածքների աղակալումը:

Կատարվել են Դեբեդի, Փամբակի, Ձորագետի, Շնողի և Տաշիրի 13 խնդրահարույց տեղամասերում շուրջ 184 հազար մ³ ծավալով մաքրման՝ հակահեղեղային միջոցառումներ:

2025 թվականին ավարտվել են Արփա-Սևան թիվ 2 թունելի 244,7 մ առավել վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքները:

«Որոտան-Արփա-Սևան ջրային համակարգի շահագործում և պահպանում» ծրագրի շրջանակներում 2025 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը Սևանա լիճ տեղափոխվել է շուրջ 120,1 մլն մ³ ջուր:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

2025 թվականին էներգետիկայի բնագավառում աշխատանքներն ուղղված են եղել էներգետիկ համակարգի կայուն զարգացմանը և սպառողներին անխափան ու հուսալի էլեկտրամատակարարման և զագամատակարարման ապահովմանը:

Արտադրվել է շուրջ 10 010,1 մլն կՎտժ էլեկտրաէներգիա (ներառյալ ինքնավար էներգաարտադրության), այդ թվում՝

- ՀԱԷԿ՝ 2 914,9 մլն կՎտժ կամ 29,1%,
- ՋԷԿ-եր՝ 3 360,9 մլն կՎտժ կամ 33,6%
- ՀԷԿ-եր՝ 2 106,4 մլն կՎտժ կամ 21%,
- արևային կայաններ (ներառյալ ինքնավար էներգաարտադրության)՝ շուրջ 1 626,7 մլն կՎտժ 16,3%,
- հողմային կայաններ՝ 1,2 մլն կՎտժ կամ 0,012%:

2024 թվականի համեմատ արտադրությունն աճել է 623,8 մլն կՎտժ-ով (6,7%), իսկ 2017 թվականի համեմատ՝ 2247,2 մլն կՎտժ-ով (29%): 2025 թվականի հունվար-դեկտեմբերին արևային կայանների (ներառյալ ինքնավար էներգաարտադրության) արտադրությունը 2024 թվականի համեմատ աճել է 647,1 մլն կՎտժ-ով կամ 66%-ով, իսկ 2018 թվականի համեմատ՝ 1 մլրդ 622 մլն կՎտժ-ով կամ 313 անգամ:

Արտահանվել է շուրջ 1 500,7 մլն կՎտժ, որից՝ ԻԻՀ՝ 1 327,6 մլն կՎտժ, Վրաստան՝ 173,1 մլն կՎտժ, ներմուծվել՝ շուրջ 63,0 մլն կՎտժ, 2024 թվականի համեմատ արտահանումը նվազել է 37,1 մլն կՎտժ-ով (2,4%), ներմուծումը՝ 81,8 մլն կՎտժ-ով

(56,5%): 2017 թվականի համեմատ արտահանումն աճել է 61,1 մլն կՎտժ-ով (4,2%), իսկ ներմուծումը նվազել է 256,5 մլն կՎտժ-ով (80,3%):

2018–2025 թթ. Հայաստանից Վրաստան արտահանվել է 763,8 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, ինչը 3 անգամ գերազանցում է 2010–2017 թթ. ցուցանիշը:

Փաստացի սպառվել է շուրջ 7259,5 մլն կՎտժ էլեկտրաէներգիա (ներառյալ փոխհոսքերի մասով ինքնավար էներգաարտադրության), որը 2024 թվականի նույն ցուցանիշից ավելի է 450,4 մլն կՎտժ-ով (6,6%):

2025 թվականի տարեվերջի դրությամբ ընդհանուր արևային կայանների հզորությունը կազմել է 1 100 ՄՎտ, որը նախորդ տարվա դրությամբ աճել է շուրջ 43%-ով:

Գործել է 459 ՄՎտ ընդհանուր հզորությամբ 98 հատ արդյունաբերական արևային կայան, որոնցից՝ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքով 62 կայան՝ 261 ՄՎտ հզորությամբ (ներառյալ 55 ՄՎտ հզորությամբ Մասրիկ-1 կայանը), առանց գնման երաշխիքի 36 կայան՝ 198 ՄՎտ հզորությամբ: Նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 32%:

Գործել է 640 ՄՎտ հզորությամբ 50 059 ինքնավար էներգաարտադրող: Ինքնավար էներգաարտադրողների թիվը 2024 թվականի համեմատ քանակային առումով աճել է 60%-ով, իսկ հզորության առումով՝ շուրջ 52 %-ով:

2025 թվականի տարեվերջի դրությամբ ընդհանուր սպառվող էլեկտրաէներգիայի շուրջ 33,3% վաճառվել է ազատականացված շուկայում՝ չկարգավորվող մրցակցային գներով, 2024 թվականի համեմատ աճը կազմել է շուրջ 27,6%:

2025 թվականի տարեվերջին ազատ առևտրի մասնակիցների թիվը կազմել է 663 (որից՝ մատակարար՝ 16, մեծածախ առևտուր իրականացնող՝ 3, որակավորված սպառող՝ 45, մանրածախ սպառող՝ 599), 2024 թվականի համեմատ աճը կազմել է 141%: Կնքված գործարքների թիվը կազմել է 111 000 հատ, 2024 թվականի համեմատ աճը՝ 432%:

Շարունակվել են ՀԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացման և շահագործման ժամկետի մինչև 2026 թվականը երկարաձգման ծրագրով (ՇԺԵ-1) և ՀԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման (2026-2036 թթ.) ծրագրով (ՇԺԵ-2) նախատեսված աշխատանքները: ՇԺԵ-1-ով ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 63,2 մլրդ ՀՀ դրամ բյուջետային վարկը: Ընդհանուր կատարվել են շուրջ 51,3 մլրդ ՀՀ դրամի վճարումներ, որից 12,2 մլրդ ՀՀ դրամի վճարումները՝ ՇԺԵ-2-ով: ՇԺԵ-2-ով նախատեսվում են մոտ 160 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ներդրումներ: ՇԺԵ-2-ի շրջանակներում 55 պայմանագրից կնքվել է 50 պայմանագիր:

Կատարվել է նոր էներգաբլոկի տեսակի ընտրություն:

Շարունակվել են Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի և ենթակայանի կառուցման ծրագրի շրջանակներում աշխատանքները: Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի և համապատասխան ենթակայանների կառուցման ծրագրի շրջանակներում իրականացվում են գլխավոր կապալառուների ընտրության մրցութային գործընթացներ:

Ավարտվել են 220 կՎ լարման «Շինուհայր», «Զովունի» և «Արարատ-2» բարձրավոլտ ենթակայանների վերակառուցման աշխատանքները, ենթակայաններն ամբողջությամբ դրվել են լարման տակ և շահագործվում են:

220 կՎ լարման «Շահունյան-2», «Մարաշ» և «Եղեգնաձոր» բարձրավոլտ ենթակայանների վերակառուցման նպատակով ՀՀ և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև կնքվել է 40 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ վարկային համաձայնագիր, որն ուժի մեջ է մտել 2025 թվականին:

Ամբողջությամբ շահագործման է հանձնվել առաջին խոշոր՝ 55 ՄՎտ հզորությամբ Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային էլեկտրական կայանը, կայանի արտադրանքը կազմել է 110,8 մլն կՎտժ՝ ընդհանուր արտադրանքի 1,14%:

Ավարտվել է 2022 թվականից մեկնարկած բնակելի տների և բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետ վերանորոգման պետական աջակցության ծրագիրը, որի մեկնարկից մինչև ավարտը շահառուների ընդհանուր թիվը կազմել է 34 555, տրամադրված վարկերի հանրագումարը՝ շուրջ 83 մլրդ ՀՀ դրամ, պետական բյուջեից տրված սուբսիդավորման գումարը՝ շուրջ 11,4 մլրդ ՀՀ դրամ:

2025 թվականին Կառավարության լիազոր մարմնի հաղորդման հիման վրա «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ՀԷՑ) նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ՝ «Էներգետիկայի մասին» օրենքի, ինչպես նաև ՀԾԿՀ-ի իրավական ակտերով սահմանված պահանջների հնարավոր խախտման փաստերի ուսումնասիրության նպատակով, միաժամանակ նշանակվել է ՀԷՑ-ի ժամանակավոր կառավարիչ: Վարույթի ընթացքում փաստվել են մի շարք լրջագույն խախտումներ, որի արդյունքում ՀԾԿՀ-ի որոշմամբ դադարեցվել է ՀԷՑ-ի էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիայի գործողությունը՝ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու միջոցով:

Միաժամանակ, Ստոկհոլմի արբիտրաժային տրիբունալը 2025 թվականի դեկտեմբերի 24-ին ամբողջությամբ մերժել է ՀԷՑ-ի գործով հայցվորների կողմից ներկայացված միջնորդությունը, որով, ի թիվս այլնի, արբիտրաժային տրիբունալից պահանջվում էր ՀԷՑ-ի լիցենզիայի և վերջինիս կառավարման մարմինների անդամների լիազորությունների վերականգնում, ինչպես նաև նշանակված ժամանակավոր կառավարչի լիազորությունների դադարեցում: Բացի այդ, տրիբունալից հայցվել էր նաև արգելել ՀԷՑ-ի բաժնետոմսերի կամ այլ ակտիվների օտարումը: Տրիբունալն ամբողջությամբ մերժել է նշված բոլոր պահանջները՝ եզրակացնելով, որ հայցվորների պահանջած ապահովման միջոցները հիմնավորված չեն: Տրիբունալը նաև որոշել է, որ միջնորդության քննության հետ կապված բոլոր ծախսերն ամբողջությամբ կրելու է հայցվոր կողմը:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի մատուցված շարունակվել է խթանիչ սակագնային քաղաքականության իրականացումը, որի վերջնական արդյունքում՝ 2030 թվականին, համակարգի կորուստները կկազմեն 3,4% (2025 թվականին կազմել են շուրջ 4,88%), աշխատողների թվաքանակը կօպտիմալացվի 500-ով, շահագործման ու պահպանման ծախսերը՝ շուրջ 20%-ով:

Շարունակում է իրականացվել Երևան քաղաքը գազամատակարարման լրացուցիչ նոր հզորություններով ապահովելու ծրագիրը, որի արդյունքում Երևան քաղաքի գազամատակարարման ցանցի հզորությունը կավելանա շուրջ 244 000 խմ/ժ-ով: Ծրագիրն իրականացվում է 4 փուլով, ավարտը նախատեսված է 2027 թվականին:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

2025 թվականին ՄԱԿ-ի զարգացման ծրագրի «Մարդկային ներուժի զարգացման գեկույց»-ում ՀՀ-ն 193 երկրից 69-րդ հորիզոնականում է՝ նախորդ տարվա համեմատ բարելավելով դիրքը 7 հորիզոնականով: 2018 թվականից ի վեր ՀՀ-ն առաջին անգամ փոխել է դասակարգը վարկանիշային աղյուսակում և այժմ համարվում է «շատ բարձր» մարդկային զարգացման ցուցիչ ունեցող երկիր:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդագրական պատկերը նկարագրող 2025 թվականի ցուցանիշները հետևյալն են.

Մշտական բնակչություն. 2008 թվականից սկսած՝ բնակչության թվաքանակի միջին տարեկան ամենամեծ աճը գրանցվել է 2024 և 2025 թվականներին: 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ նախորդ տարվա նույն օրվա համեմատ բնակչության թվաքանակն աճել է 20 800-ով, որից՝ բնական հավելանքը 2025 թվականին կազմել է 6 478 մարդ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 8 158-ի համեմատ:

2025 թվականին ծնված երեխաների թիվը կազմել է 32 042, ինչը 1 551-ով կամ շուրջ 4,6%-ով պակաս է 2024 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

2025 թվականին հրապարակվել է 2024 թվականի ծնելիության գումարային գործակցի ցուցանիշը, որը կազմել է 1,714, ինչը ցածր է նախորդ տարվա 1,885 ցուցանիշից, որը 1994 թվականից ի վեր համարվում է ամենաբարձր ցուցանիշը:

2024 թվականի կենդանի ծնվածներից՝ ըստ ծննդի հերթականության, կանանց 3-րդ և հաջորդող կարգաթվով ծնվածների թիվը կազմել է 11 973 կամ ընդհանուրի՝ 35,6%, 2017 թվականին նույն ցուցանիշը եղել է 8 395 կամ ընդհանուրի՝ 22,3% (2017 թվականի համեմատ աճը կազմել է 42,6%):

Մահացություն. 2025 թվականին բնակչության մահացության ցուցանիշը կազմել է 8,3 պրոմիլ, ինչը պակաս է 0,1 պրոմիլային կետով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 8,4 պրոմիլի համեմատ:

Ժողովրդագրության բարելավման նպատակով 2025 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

2025 թվականին շարունակել է գործել 2023 թվականի հունվարի 1-ից ներդրված մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի նոր համակարգը, որի շրջանակներում խնամքի նպաստ է նշանակվում և վճարվում բոլոր երեխաների ծնողյան կապակցությամբ (2017 թվականին՝ միայն խնամքի արձակուրդում գտնվող մայրերին): 2025 թվականի ընթացքում խնամքի նպաստ վճարվել է միջին ամսական 60 582

երեխայի խնամքի կապակցությամբ, ծախսը կազմել է շուրջ 28 մլրդ ՀՀ դրամ (2017 թվականին՝ միջին ամսական 11 654 երեխա, ծախսը՝ շուրջ 2,9 մլրդ ՀՀ դրամ):

Շարունակվել է Կառավարության որոշմամբ հաստատված երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2024-2026 թթ. ծրագիրը: 2025 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ աջակցություն է ստացել 3 063 շահառու, և վճարվել է շուրջ 2,5 մլրդ ՀՀ դրամ: 2020 թվականի հուլիսի 1-ից մինչև 2025 թվականի տարեվերջ ընկած ժամանակահատվածում աջակցություն է ստացել 15,184 շահառու: Ընդհանուր առմամբ վճարվել է շուրջ 11,1 մլրդ ՀՀ դրամ:

Շարունակվել է «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը՝ ուղղված երիտասարդ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանը: 2025 թվականին ծրագրի շահառուների թիվը համարվել է ևս 760 ընտանիքով:

Ընտանիքում 3-րդ (երբ երեխան ծնվել է 2022 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ) և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցություն տրամադրելու ծրագրի շրջանակում 2025 թվականին ամսական միջին հաշվով աջակցություն է ցուցաբերվել 39 772 երեխայի համար: 2025 թվականին աջակցության ընդհանուր գումարը կազմել է շուրջ 25,1 մլրդ ՀՀ դրամ:

ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի ընթացքում շարունակվել են Ղարաբաղից տեղահանված անձանց կայուն կենսաապահովմանն ուղղված ծրագրերը. դեռևս 2024 թվականին հաստատված՝ առանձին խմբերի անձանց կեցության և այլ ծախսերը հոգալուն ուղղված ծրագրի շրջանակներում 2025 թվականի դեկտեմբերի դրությամբ շարունակել է աջակցություն ստանալ 44 414 անձ: 2025 թվականի ընթացքում պետական բյուջեից այս նպատակով փաստացի հատկացվել է շուրջ 32,7 մլրդ ՀՀ դրամ:

2025 թվականի հունիսին Կառավարության կողմից հաստատվել է տեղահանված կարիքավոր ընտանիքներին լրացուցիչ հրատապ աջակցության ծրագիրը, որի շրջանակում 2025 թվականի դեկտեմբերի դրությամբ սոցիալական աջակցություն է տրամադրվել 6 168 ընտանիքի: Ծրագրի ֆինանսավորման փաստացի բյուջեն գերազանցել է 2,2 մլրդ ՀՀ դրամը:

Ղարաբաղի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակում 2025 թվականի տարեվերջի դրությամբ հավաստագիր է ստացել 3 947 ընտանիք, որից 3 714-ը իրացրել է հավաստագիրը, այսինքն՝ հիփոթեքային վարկավորմամբ ձեռք է բերել անշարժ գույք կամ կառուցում է անհատական բնակելի տուն ՀՀ-ում: 2025 թվականին նշված վարկերի մարմանն ուղղվել է շուրջ 5,9 մլրդ ՀՀ դրամ:

Ղարաբաղից տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակում 2025 թվականի տարեվերջի դրությամբ հավաստագիր է ստացել 4 012 շահառու, որից 1 751-ն իրացրել է հավաստագիրը: 2025 թվականին ծրագրի տարբեր բաղադրիչների շրջանակում պետական բյուջեից վճարվել է շուրջ 3 մլրդ ՀՀ դրամ:

2024 թվականին Ղարաբաղից տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրման ծրագրի միջոցով աջակցություն ստացած անձանց թիվը կազմել է 1 800, իսկ 2025 թվականի ընթացքում ծրագրում ընդգրկվել է 952 անձ: Ծրագրի ֆինանսավորման նպատակով 2025 թվականին պետական բյուջեից փաստացի հատկացվել է ավելի քան 570 մլն ՀՀ դրամ:

Ղարաբաղից տեղահանված ուսուցիչներին օժանդակության ծրագրի մեկնարկից մինչև 2025 թվականի օգոստոսի 31-ը ՀՀ մարզերի հանրակրթական ուսումնական հաստատություններ գործուղվել է 438 ուսուցիչ, որոնց լրավճարի տրամադրման գումարի չափը հաշվետու տարում կազմել է 170,5 մլն ՀՀ դրամ: Ընդհանուր առմամբ, ծրագրի մեկնարկից մինչ 2025 թվականի վերջ ՀՀ հանրակրթական դպրոցներում աշխատանքի է անցել Ղարաբաղից տեղահանված շուրջ 600 ուսուցիչ:

2025 թվականին Կառավարության որոշմամբ հաստատվել է նաև Ղարաբաղից տեղահանված անձանց ինքնազբաղվածության խթանման ծրագիրը:

Ընդհանուր առմամբ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանում աշխատանքի է անցել ավելի քան 25 500 Ղարաբաղից տեղահանված: Ավելի քան 31 300 տեղահանված ձեռք է բերել ինքնազբաղվածի, կազմակերպության հիմնադրի (կամ մասնակցի) կարգավիճակ:

Հաշվետու տարում բուհերում և քոլեջներում Ղարաբաղից տեղահանված ուսանողների ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման աջակցության ծրագրի շահառու է եղել քոլեջների 456 և բուհերի 2 761 ուսանող: 2025 թվականին ՀՀ պետական բյուջեից մասնագիտական կրթությամբ սովորողների ուսման վարձավճարների փոխհատուցման համար փաստացի հատկացվել է ավելի քան 1 մլրդ ՀՀ դրամ:

Ընդհանուր առմամբ Ղարաբաղից տեղահանված անձանց աջակցության ծրագրերի իրականացման նպատակով 2025 թվականին պետական բյուջեից փաստացի ծախսվել է շուրջ 45,7 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2023 թվականից ի վեր՝ շուրջ 146 մլրդ ՀՀ դրամ:

ՄԻԳՐԱՑԻԱ

ՀՀ պետական սահմանի անցակետերով 2025 թվականին սահմանային մուտքերի թիվը կազմել է 5 201 747 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիները՝ 2 208 267), իսկ սահմանային ելքերինը՝ 5 171 270 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիները՝ 2 199 607), տարբերությունը կազմել է +30 477 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիները՝ +8 660): 2024 թվականի նույն ժամանակահատվածում մուտքերի թիվը կազմել է 4 752 966 (այդ

թվում՝ ՀՀ քաղաքացիները՝ 2 089 762), ելքերինը՝ 4 757 178 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիները՝ 2 104 694), տարբերությունը կազմել է -4212 (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիները՝ -14 932): 2024 թվականի համեմատ 2025 թվականին ՀՀ սահմանային անցակետերով մուտքերի թիվն աճել է 9,4%-ով, իսկ ելքերինը՝ 8,7%-ով, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիների մուտքերի թիվն աճել է 5,7 %-ով, իսկ ելքերինը՝ 4,5%-ով: 2025 թվականի ընթացքում ստացվել է ՀՀ քաղաքացիության շնորհման վերաբերյալ 32 891 դիմում (2024 թվականին նույն թիվը կազմել է 21 437), քաղաքացիություն է շնորհվել 25 670 անձի (2024 թվականի նույն թիվը կազմել է 20 776): Ստացվել է ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ 4 960 դիմում (2024 թվականի նույն թիվը կազմել է 4 202), դադարեցվել է 4 392 անձի քաղաքացիությունը (2024 թվականի նույն թիվը կազմել է 3 746): 2025 թվականին Ղարաբաղից տեղահանված անձանց դիմումների թիվը նշված ցուցանիշի մեջ կազմել է 19 367, շնորհումներինը՝ 13 276:

2025 թվականի ընթացքում տրամադրվել է 342 540 անձնագիր և 286 021 նույնականացման քարտ, 2024 թվականին տրամադրվել էր 485 402 անձնագիր և 160 958 նույնականացման քարտ:

2025 թվականի ընթացքում ընդունվել է ռեադմիսիայի 626 հայց 990 անձի վերաբերյալ, հաստատվել է 862 անձի ՀՀ քաղաքացիությունը:

Ապաստանի հայցեր է ստացվել 600 օտարերկրյա քաղաքացուց (2024 թվականին թիվը կազմել է 660):

ՀՀ-ում օրինական բնակության իրավունք է ստացել, այդ թվում՝ կացության տարբեր կարգավիճակներով, 21 519 օտարերկրյա քաղաքացի (2024 թվականին թիվը կազմել է 20 517):

ՍՓՅՈՒՌԻ ՀԵՏ ԿԱՊԵՐ

2025 թվականին 2 երկրում՝ Բրազիլիայում և Ֆրանսիայում, նշանակվել է 2 սփյուռքի գործերի հանձնակատար:

Հաշվետու տարում կայացել են ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի այցերը 13 երկրի 40 տարբեր քաղաքների հայ համայնքներ: Այցերի շրջանակներում կայացել է ավելի քան 180 միջոցառում և հանդիպում:

Օգոստոսի 5-7-ը Երևանում կայացել է Ազգային երիտասարդական 2-րդ համաժողովը, որին մասնակցել է 778 հայ երիտասարդ աշխարհի 56 երկրից: Համաժողովի քննարկումներին հանդես է եկել 120 բանախոս 32 երկրից: Միջոցառմանը գլխավոր բանախոսությամբ հանդես է եկել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Նոյեմբերի 20-21-ը Երևանում կայացել է Հայ արվեստի և մշակույթի համաժողովը, որին մասնակցել է 284 անձ՝ 36 երկրից: Համաժողովին մասնակցել են 14 երկրից հրավիրված 60 նիստավարներ և բանախոսներ:

Հայրենադարձության և ինտեգրման կենտրոնի խորհրդատվական աջակցության ու ծրագրերին մասնակցության դիմումները կազմել են ավելի քան 2 500: Կենտրոնի կողմից իրականացված դասընթացներին մասնակցել է 347 հայրենադարձ:

Իրականացվել է 59 ինտեգրման ու խմբային խորհրդատվական միջոցառում, որին մասնակցել է 1 117 շահառու: Իրականացվել է «Հայրենադարձության շաբաթ» ամենամյա միջոցառումների շարք, որոնց հաշվետու տարում մասնակցել է 240 մարդ:

Սիրիահայերի առողջապահական աջակցության անվճար ծրագրից օգտվել է 60 սիրիահայ:

«Քայլ դեպի տուն» միջոցառման շրջանակներում նախատեսված ուսումնաճանաչողական ծրագրին մասնակցել է 600 երեխա՝ 27 երկրից:

«ԻԳործ» սփյուռքահայ մասնագետների ներգրավում ՀՀ պետական կառավարման համակարգում» միջոցառման շրջանակներում 2025-2026 թթ. սփյուռքահայ 45 մասնագետ 15 երկրից ներգրավվել է ՀՀ պետական 16 կառույցում, իսկ 2024-2025 թթ. 40 մասնակցի 70%-ից ավելին որոշում է կայացրել շարունակել աշխատել Հայաստանում:

2024-2025 թթ. «Սփյուռքի երիտասարդ դեսպան» միջոցառմանը մասնակցել է 28 երիտասարդ 18 երկրից, իսկ 2025-2026 թթ. միջոցառմանը՝ 27 երիտասարդ 14 երկրից: 2024-2025 թթ. միջոցառման մասնակիցների կողմից համայնքներում կազմակերպվել է 320-ից ավելի միջոցառում:

«Աջակցություն սփյուռքի հայալեզու լրատվամիջոցներին» միջոցառման շրջանակներում ֆինանսական աջակցություն է տրամադրվել սփյուռքի հայալեզու 4 լրատվամիջոցի:

2025 թվականին ձեռք է բերվել 46 224 կտոր ուսումնական գրականություն և 23 պետության 129 կրթօջախի փոխանցվել է 46153 կտոր գրականություն: Տրամադրված ուսումնական գրականության քանակը նախորդ տարվա համեմատ ավելի է շուրջ 49%-ով:

2025 թվականին «Հայաստանի միգրանտ ընտանիքների դպրոցականների հայոց լեզվի իմացության բարելավում» ծրագրի շրջանակում 208 աշակերտ հնարավորություն է ստացել սովորելու հայոց լեզու:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթություն. 2025 թվականին նախադպրոցական կրթության համակարգում 3-5 տարեկանների ընդգրկվածությունը կազմել է 81%, որը 2021 թվականի 64,3% ցուցանիշի համեմատ աճել է շուրջ 17%-ով:

500 մանկապարտեզի և նախակրթարանի կառուցման, վերակառուցման և վերանորոգման/հիմնանորոգման ծրագրի շրջանակում ներառված են 505 մանկապարտեզ և նախակրթարան: Ընդհանուր առմամբ 2021-2025 թթ. ընթացքում կառուցվել, վերակառուցվել, հիմնանորոգվել/վերանորոգվել են շուրջ 280 մանկապարտեզ և նախակրթարան:

Նախադպրոցական ծառայություններ կգործեն նաև Կառավարության որոշմամբ հաստատված և արդեն շինարարությունը մեկնարկած բոլոր 59 կրթահամալիրներում,

որոնք ընդգրկված են 500 մանկապարտեզի ծրագրում և կապահովեն շուրջ 3 700 նախադպրոցական երեխայի կրթությունը:

500 մանկապարտեզի ծրագրում են նաև նախակրթարանները, որոնք գործում են դպրոցների հիմքի վրա: 2025 թվականի դրությամբ հանրապետության 413 դպրոցում գործում են նախակրթարաններ, որտեղ նախադպրոցական կրթություն է ստանում 5 298 երեխա: Այս ծառայության ֆինանսավորումը՝ ներառյալ դպրոցական սննդի ծրագրից օգտվելը, ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից՝ շուրջ 829,3 մլն ՀՀ դրամի չափով:

Բոլոր նորակառույց և վերանորոգված մանկապարտեզները և նախակրթարանները հագեցվել են ժամանակակից պահանջները բավարարող նոր գույքով:

Բոլոր մարզերում և Երևան քաղաքում լիցենզավորված մասնավոր նախադպրոցական հաստատությունների թիվը 249 է, որտեղ հաճախում է շուրջ 10 800 երեխա: Լիցենզավորված մասնավոր նախադպրոցական հաստատությունների թիվը 2024 թվականի համեմատությամբ աճել է 60,6%-ով, իսկ երեխաների թիվը՝ 31,7%-ով: Քաղաքային բնակավայրերում նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների 22,3%-ն ընդգրկված է մասնավոր մանկապարտեզներում:

2025 թվականի դրությամբ հանրապետության 1 011 բնակավայրից միայն 87-ում կամ 8,6%-ում առկա չեն նախադպրոցական ծառայություններ, մինչդեռ 2023 թվականին ցուցանիշը եղել է 229 կամ շուրջ 22,7%:

ՀՀ պետական բյուջեից անվճար նախադպրոցական կրթություն է ստացել 1 719 կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա՝ 2023 թվականի նկատմամբ գրանցելով 38% աճ:

Տարեվերջի դրությամբ Երևանի երկու մանկապարտեզներում արդեն իսկ գործել են մեկ և ավելի տարեկան երեխաների նախադպրոցական ծառայություններ: 2026 թվականի սկզբից 1 տարեկաններին կընդունեն ևս 8 մանկապարտեզում, այդ թվում՝ Վանաձորում, Հրազդանում, Գյումրիում: Երևանում կգործի նաև նախադպրոցական ծառայություն վեց ամսականների համար:

Նախադպրոցական կրթության չափորոշիչն արդեն իսկ ներդրվել է հանրապետության բոլոր մանկապարտեզներում և նախակրթարաններում: Ներդրվել է նաև մենթորական ծրագիր, որի շրջանակում շուրջ 3 900 մանկավարժական աշխատողի տրամադրվել է մեթոդական աջակցություն: Նախադպրոցական մանկավարժների վերապատրաստման պարտադիր ծրագրին մասնակցել է շուրջ 5 600 նախադպրոցական մանկավարժ, որոնցից 1 100-ը՝ 2025 թվականին: Վերապատրաստվել է նախադպրոցական ուսումնական հաստատության շուրջ 1 800 մանկավարժական աշխատող, որոնցից 200-ը՝ տնօրեն: Այսպիսով, մանկապարտեզների մանկավարժական աշխատողների շուրջ 75%-ն արդեն իսկ վերապատրաստվել է: Նախադպրոցական տարակարգ ստացել է 79 մանկավարժական աշխատող, որոնցից 53-ը՝ 2025 թվականին: Վերջիններս ՀՀ պետական բյուջեի միջոցներից ստանում են 30-40% հավելավճար: 2025 թվականի դրությամբ հավաստագրված տնօրեն ունեցող մանկապարտեզների

մասնաբաժինը հասցված է 90%-ի, 2024 թվականին մասնաբաժինը կազմում էր շուրջ 80%:

Հանրակրթություն. 300 դպրոց, 500 մանկապարտեզ մեծածավալ ծրագրի շրջանակներում աշխատանքներ են կատարվել ավելի քան 320 դպրոցում և ավելի քան 490 նախադպրոցական հաստատությունում: Տարեվերջի դրությամբ աշխատանքներն ավարտվել են ավելի քան 102 դպրոցում և շուրջ 280 մանկապարտեզում ու նախակրթարանում: Մինչև 2026 թվականի սեպտեմբեր շինարարական աշխատանքներն ավարտված կլինեն 260 դպրոցում և 429 մանկապարտեզում և նախակրթարանում, իսկ մինչև դեկտեմբեր՝ 301 դպրոցում և 500 մանկապարտեզում և նախակրթարանում: Եթե 2024 թվականին այս ուղղությամբ կատարողականը կազմել էր շուրջ 53,8 մլրդ ՀՀ դրամ, ապա 2025 թվականի ցուցանիշը շուրջ 121 մլրդ ՀՀ դրամ է՝ նախորդ տարվանից 123%-ով ավելի: Գյուղական բնակավայրերում կառուցվում է 59 կրթահամալիր, որոնք գործելու են որպես համայնքային կենտրոններ: Ավարտված և շահագործված բոլոր հաստատություններն ապահովվում են նոր գույքով:

Միայն դպրոցների պահպանման ծախսերին հատկացվել է շուրջ 128,8 մլրդ ՀՀ դրամ, ինչը 2018 թվականի համեմատ ավելի է շուրջ 56,9%-ով:

Հանրակրթության նոր չափորոշիչը 2025 թվականի սեպտեմբերից ներդրվել է բոլոր դպրոցների 1-11-րդ դասարաններում: Չափորոշի ներդրմանը համընթաց ստեղծվել են նոր դասագրքեր, մշակվել է ուսումնական նոր բովանդակություն: 2023-2025 թթ. ընդհանուր առմամբ ստեղծվել է 158 անուն դասագիրք: Մրցակցային ընթացակարգերի արդյունքում մեկ դասագրքի արժեքը միջին հաշվով նվազել է 23-26%-ով: Եկամուտների համընդհանուր հայտարարագրման շրջանակներում նաև ամրագրվել են 5-12-րդ դասարաններում սովորողների ծնողների համար դասագրքերի վարձավճարների դիմաց տարեկան 3 000 ՀՀ դրամ սոցիալական կրեդիտի ճանաչում և հետվերադարձ, որի շահառու են ավելի քան 300 000 երեխաներ: Հաշվի առնելով նաև դասագրքերի՝ ըստ դասարանների վարձավճարների տարեկան չափերի նվազումը նոր մրցակցային ընթացակարգերով, այս հանգամանքը վարձավճարը նվազեցնում է աշխատող ծնողի համար 5-րդ և 6-րդ դասարաններում՝ դասագրքերը դարձնելով ըստ էության անվճար, իսկ բոլոր դասարանների համար վարձավճարը՝ միջինը շուրջ 66%-ով:

Շուրջ 800 դպրոց կան 70%-ն ապահովված է ժամանակակից բնագիտական և ինժեներական լաբորատորիաներով: 2025 թվականին ընդլայնվել է մասնավորի հետ համագործակցությամբ փորձնական ներդրված «Արհեստական բանականություն» (ԱԲ) ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը՝ 15-ից հասնելով 26-ի՝ ընդգրկելով ՀՀ բոլոր մարզերը՝ շուրջ 800 սովորողով: Ծրագրի մասնակից մարզային դպրոցի աշակերտը, մասնակցելով ԱԲ միջազգային օլիմպիադային, նվաճել է բրոնզե մեդալ: 10-12-րդ դասարաններում մասնավորի հետ համագործակցությամբ իրականացվում է նաև STEP.ai գիտության և տեխնոլոգիայի կրթական ծրագիրը, որում ընդգրկված է 15 ուսումնական հաստատություն: Դպրոցների աշակերտները միջազգային օլիմպիադաներում արժանացել են 91 մեդալի՝ 13 ոսկի, 29 արծաթ, 49 բրոնզ:

Անցկացվել են ուսուցչական չորս համաժողովներ (ավելի քան 3 000 մասնակից) և առաջին անգամ նաև՝ աշակերտական համաժողով (180 մասնակից):

2024 թվականից մինչև 2025 թվականի տարեվերջ կրթության համակարգ է վերադարձել ավելի քան 8 000 երեխա, որոնցից 3 329-ը մինչ այդ երբևէ չի եղել ուսումնական հաստատությունում:

Գործել են ուսուցիչների հավելյալ խրախուսման 5 տարբեր ծրագրեր՝ 15,2 մլրդ ՀՀ դրամ բյուջեով՝ նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցելով 48,15%-ով, իսկ 2018 թվականի ցուցանիշը՝ 1 163%-ով: 2018 թվականին գործում էր ուսուցիչների հավելյալ խրախուսման միայն մեկ ծրագիր՝ շուրջ 263,9 մլն ՀՀ դրամ բյուջեով:

2025 թվականի դրությամբ կամավոր ատեստավորումը հաջողությամբ հաղթահարել և այժմ ատեստավորված է 9 602 անձ կամ ամեն 3-րդ ուսուցիչը: 2025 թվականին ուսուցիչների կամավոր ատեստավորմանը մասնակցել է 7 228 անձ, որոնցից 4 982-ը հաղթահարել է 60% շեմը: 2023 թվականին ուսուցիչների տարակարգի տրամադրման նոր կարգով տարակարգ է ստացել 101, 2024 թվականին՝ 285 ուսուցիչ, իսկ 2025 թվականին՝ 831 ուսուցիչ՝ ունենալով 10-50% հավելավճար: Նրանցից 135-ը ստացել է 4-րդ աստիճանի տարակարգ, որի դեպքում հավելավճարի չափը կազմում է 50%: Բնագիտական և SS ոլորտների առարկաներ դասավանդող 9 200 ուսուցիչ կամ ուսուցիչների շուրջ 30%-ն ստանում է 25% հավելավճար: Գյուղական մինչև 100 սովորող ունեցող դպրոցների ուսուցիչների խրախուսման ծրագիրն ունի շահառու 3 120 ուսուցիչ, որոնք, անկախ իրենց դասավանդած դասաժամերից, ստանում են մինչև մեկ դրույք ուսուցչական աշխատավարձ:

Արդյունքում, բարձրացել է բազմաթիվ ուսուցիչների վարձատրությունը. 300-400 հազար ՀՀ դրամ աշխատավարձ ստանում է 2 952 ուսուցիչ, 400-500 հազար ՀՀ դրամ՝ 1 362 ուսուցիչ, 500-600 հազար ՀՀ դրամ՝ 220 ուսուցիչ, 600-700 հազար ՀՀ դրամ՝ 70 ուսուցիչ, և 700 հազար ՀՀ դրամ և ավելի՝ 13 ուսուցիչ:

2024-2025 թթ. դպրոց է մուտք գործել ավելի քան 4 000 նոր ուսուցիչ, որոնց կեսից ավելին աշխատում է գյուղական բնակավայրերում: 80%-ը մինչև 45 տարեկան անձինք են:

Առաջին անգամ իրականացվել է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մասնագետների ատեստավորումը, որին մասնակցել է 343 հոգեբան: Մասնակիցներից 30-ը գրանցել է 70-100% արդյունք և կստանա 80.600, 111.500 կամ 138.300 ՀՀ դրամ հավելավճարներ:

ԱԺ-ի կողմից հաստատվել է բոլոր դպրոցների բովանդակային կառավարումը կրթության լիազոր մարմնին վերապահելու օրենսդրական փաթեթը: Միասնական լիազոր մարմնին դպրոցները կփոխանցվեն երկու փուլով՝ սկսած 2026 թվականի սեպտեմբերից: 2025 թվականի դրությամբ դպրոցի բովանդակային և վարչատնտեսական կառավարման տարանջատված համակարգի է անցել 593 դպրոց կամ պետական դպրոցների 44%-ը: 2023 թվականից ներդրված տնօրենների ընտրության նոր համակարգով 2023 թվականից ընտրվել է 270 տնօրեն, որոնց գերակշիռ մասը՝ 66%-ը՝ 2025 թվականին:

ՀՀ մարզերի դպրոցների 1-4-րդ դասարանների և նախակրթարանների շուրջ 107 000 երեխայի առողջ սննդի տրամադրման ծրագիրն ամբողջությամբ իրականացվում է ՀՀ պետական ֆինանսավորմամբ: Աշակերտներին կայուն դպրոցական սննդով ապահովող դպրոցների մասնաբաժինը հանրապետությունում հասցված է 86,2%-ի: Տարրական մակարդակում դպրոցական սնունդ ստացող աշակերտների մասնաբաժինը հասցված է 70,5%-ի: ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը 60 դպրոցում ներդրել է ինտենսիվ այգի/բարձր տեխնոլոգիական ջերմատուն: Այս դպրոցներից 48-ում գործում են «Նորարար այգի» և «Նորարար ջերմատուն» խմբակները: Ջերմոցներ են կառուցվում նաև 300 դպրոցի ծրագրում ընդգրկված բոլոր կրթահամալիրներում և մոդուլային դպրոցներում: Վայոց ձորի մարզում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի «Կաթ դպրոցներին» փորձնական ծրագրի դրական արդյունքների վրա հիմնվելով՝ ծրագիրն ընդլայնվել և ներդրվել է նաև Լոռու մարզի 7 դպրոցի 5-9-րդ դասարանների շրջանում: Ծրագրին մասնակցել է 1 360 աշակերտ:

Արտադպրոցական կրթություն. արտադպրոցական կրթության ներառումը համընդհանուր հայտարարագրման շրջանակներում որպես սոցիալական կրեդիտ էապես ընդլայնեց արտադպրոցական կրթության հասանելիությունը: Խոսքը 400-ից ավելի պետական և համայնքային արտադպրոցական հաստատություններում սովորող ավելի քան 100 000 սանի մասին է: Այս քաղաքականության արդյունքում, ծրագրից օգտվելու համար դիմել և երաշխավորվել է նաև 33 ոչ պետական արտադպրոցական կազմակերպություն, ինչպես նաև պետական և համայնքային 85 արտադպրոցական հաստատություն ներկայացրել է հավելյալ 478 ծրագիր:

Արտադպրոցական տեխնոլոգիական կրթության շրջանակներում 638 դպրոցում պետական ֆինանսավորմամբ գործում է 1 070 «Արմաթ» ինժեներական աշխատանոց-խմբակ, որտեղ հաճախում է շուրջ 17 հազար դպրոցական: Գործում է նաև 6 «Թումո» կենտրոն, 31 «Թումո» տուփեր տեղադրված են դպրոցների հարակից տարածքներում, և շուրջ 32 հազար 12-15 տարեկան երեխա անվճար մասնակցում է առաջարկվող դասընթացներին: «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի սմարթ կենտրոնները նույնպես ընդլայնվում են Կառավարության աջակցությամբ:

2025 թվականին արվեստի ու սպորտի ոլորտներում արտադպրոցական հաստատությունների մանկավարժների կամավոր ատեստավորումը կազմակերպվել է ամբողջությամբ նոր 11 ուղղությունով, որոնց մասնակցել է 212 անձ, ատեստավորումը հաղթահարել է մասնակիցների 34,4%-ը: Ատեստավորումը հաղթահարել է 290 մանկավարժ, որոնց 77,2%-ը մշակույթի ոլորտի, 22,8%-ը սպորտի ոլորտի մանկավարժներ են:

Եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգի շրջանակներում հազարավոր մարդիկ օգտվում են ոչ ֆորմալ կրթության հնարավորությունից, ինչն էլ դառնում է նաև մեծահասակների կրթության զարգացման գործուն մեխանիզմ:

Մասնագիտական կրթություն և ուսուցում. Քոլեջներում սովորել է ավելի քան 47 700 ուսանող՝ 2018 թվականի համեմատ աճելով ավելի քան 36%-ով: 2021 թվականի

համեմատ 2025 թվականին ընդունելության ցուցանիշը բարելավվել է մոտ 29%-ով: 2021 թվականին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվել էր 12 772 ուսանող, իսկ 2025 թվականին՝ 16 497 ուսանող: Աճը հատկապես զգալի է շինարարության, արդյունաբերության և գյուղատնտեսության գերակա մասնագիտությունների ուղղությամբ, որոնց մասով 2023 թվականից գործում է ամսական առնվազն 50 հազար ՀՀ դրամ կրթաթոշակի ծրագիրը: Եթե 2023 թվականին գերակա մասնագիտություններով ընդունվել էր 874 ուսանող, ապա 2025 թվականին այդ թիվն ավելի քան կրկնապատկվել է. ընդունվել է 1786 ուսանող: Ներկայումս գերակա մասնագիտություններով սովորող 3 040 ուսանող ստանում է կրթաթոշակ, որից 1 585-ը՝ արհեստագործական, 1 455-ը՝ միջին մասնագիտական կրթական ծրագրերով:

Բարեփոխումների արդյունքում այսուհետ գործելու է հաստատության միայն մեկ տիպ՝ քոլեջ, որը հնարավորություն է ստանալու իրականացնել ինչպես արհեստագործական, այնպես էլ միջին մասնագիտական կրթական ծրագրեր:

2025 թվականին դուռը ուսուցմամբ կրթական ծրագրեր իրականացվել են 20 քոլեջում՝ 25 մասնագիտություններով: Այս մոդելով մասնագիտությունների մասնաբաժինը հասել է 14%-ի, իսկ ուսումնական հաստատություններինը՝ 21%-ի:

2021 թվականից իրականացվել է 13 քոլեջի միավորման 7 գործընթաց, որից 2-ը՝ 2025 թվականի ընթացքում: 2021-2025 թթ. ենթակառուցվածքների բարելավման աշխատանքներ են կատարվել 16 քոլեջում, ընդ որում՝ 2 հաստատության շենքերի վերակառուցման, 1-ի հիմնանորոգման և 9-ի մասնակի նորոգման աշխատանքներն ավարտված են:

2025 թվականին շարունակվել է քոլեջների դասախոսների և վարպետների վարձատրությունն առնվազն կրկնապատկող, երբեմն նաև եռապատկող ատեստավորման մեխանիզմը: Ատեստավորման ուղղություններն ընդլայնվել են՝ ներառելով նաև տեքստիլ ոլորտին վերաբերող մասնագիտությունները: Ատեստավորվել է 181 մասնագետ: Մասնակիցներից 35-ը կամ 24%-ը հաղթահարել է նվազագույն շեմը և ունեցել է դրույքաչափի փոփոխություն՝ 200 հազար ՀՀ դրամի չափով, իսկ 111 մասնակից կամ 76%-ը գրանցել է 70%-ից բարձր արդյունքներ և ստանալու է նաև լրացուցիչ 30%, 40%, 50% հավելավճար՝ ըստ հավաքած միավորների: 2025 թվականի դրությամբ արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների մասնագիտական առարկաներ դասավանդող 1 208 մանկավարժական աշխատողից վերապատրաստվել է ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողների 35,2%-ը (425 անձ), որից ատեստավորումը հաղթահարել է շուրջ 35%-ը (կամ 422 անձ):

2025 թվականին ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում հանրակրթական առարկաներ դասավանդող 131 մանկավարժ մասնակցել է ուսուցիչների կամավոր ատեստավորմանը: Ատեստավորումը հաղթահարած 69 մանկավարժից 13-ը (կամ 18,9%-ը) հաղթահարել է նվազագույն շեմը և կունենա դրույքաչափի փոփոխություն, իսկ 56 մանկավարժ (կամ 51,2%-ը), որոնք գրանցել են 70%-ից բարձր արդյունքներ, կունենա և՛ դրույքաչափի փոփոխություն, և՛ կստանա հավելավճար: 2025 թվականի

դեկտեմբերի դրությամբ ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում հանրակրթական առարկաներ դասավանդող 1 866 մանկավարժից ատեստավորումը հաղթահարել և դրույքաչափի փոփոխություն ու հավելավճար է ստացել 179 մանկավարժ (կամ 9,6 %-ը):

Տարեվերջին քոլեջների մանկավարժների համար նույնպես ներդրվել է տարակարգի մեխանիզմը:

Բարձրագույն կրթություն. 2025 թվականի հոկտեմբերին ուժի մեջ է մտել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքը, որն ապահովել է ինստիտուցիոնալ ներդաշնակություն ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրով սահմանված թիրախների, ինչպես նաև միջազգային չափորոշիչների հետ:

Մեկնարկել են Ակադեմիական քաղաքի տարածքի մաքրման աշխատանքները, ինչպես նաև հնագույն բնակատեղիի և դամբարանադաշտերի պեղումները: Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի փաթեթն ամբողջականացվել է և ներկայացվել հաստատման: Ակադեմիական քաղաքի գիտակրթական և տեխնոլոգիական բաղադրիչի շրջանակում շարունակվել է համագործակցությունը Մյունխենի տեխնիկական համալսարանի, Լոնդոնի համալսարանական քոլեջի, Լոնդոնի արվեստների համալսարանի և Շոտլանդիայի թագավորական կոնսերվատորիայի հետ: Երևանում 2025 թվականի հոկտեմբերին տեղի է ունեցել «Ակադեմիական քաղաք Հայաստան. գիտելիքի միջազգային ֆորումը», որն ունեցել է շուրջ 1 000 մասնակից:

Բուհական համակարգն արդեն իսկ նախապատրաստվում է դեպի Ակադեմիական քաղաք ճանապարհին՝ ակտիվացնելով միջազգային համագործակցությունն ու ճանաչումը: Մասնավորապես, միջազգային հավատարմագրում են ստացել՝ 2025 թվականին՝ 4 բուհ, 2024 և 2023 թթ.՝ 1-ական բուհեր:

ՀՀ բուհերի ընդունելության մրցույթի հիմնական և լրացուցիչ փուլերի արդյունքներով գործող համակարգով բակալավրի կրթական ծրագրերով բուհ է ընդունվել 10 970 առաջին կուրսեցի, որոնցից 2 074-ը՝ ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ, իսկ 8 896-ը՝ վճարովի հիմունքներով: Այս ցուցանիշը գերազանցում է նախորդ տարիների ընդունելության արդյունքները: Հեռակա ընդունելության մրցույթի արդյունքում բարձրագույն ուսումնական հաստատություններ է ընդունվել 3 131 ուսանող, ինչը 18%-ով գերազանցում է 2024 թվականի և 48%-ով՝ 2023 թվականի ընդունելության ցուցանիշները:

2025 թվականին պետության կողմից ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ ուսուցման ընդունելության համար նախատեսված 2 142 ընդհանուր տեղերի թվի ավելի քան 59%-ը հատկացվել է ԲՏՃՄ ոլորտին (2024 թվականին կազմել է 61%, 2023 թվականին՝ 55%): Շարունակվել է պետության կողմից ԲՏՃՄ ոլորտություններով մասնագիտական մանկավարժության և ազրարային մի շարք մասնագիտություններով սովորողների խրախուսման ծրագիրը՝ ամսական 70-77 000 ՀՀ դրամ կրթաթոշակի միջոցով, որի շրջանակներում 2025 թվականին բուհեր է ընդունվել 512 ուսանող:

2025-2026 ուստարում բուհերում նպատակային ընդունելության շրջանակներում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին հատկացվել է ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ 11 տեղ, իսկ վճարովի համակարգ է ընդունվել 23 ուսանող:

Հայաստանի ազգային ագրարային և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարաններում ներդրվել են ընդունելության նոր՝ փորձնական կարգեր, որոնցով պայմանավորված՝ 2025-2026 ուսումնական տարում ընդունվել է համապատասխանաբար 737 և 238 ուսանող: Նախորդ՝ 2024-2025 ուսումնական տարվա ցուցանիշներով Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդունելության ցուցանիշը բարելավվել է 75,8%-ով, Հայաստանի ազգային ագրարային համալսարանինը՝ 15,7 %-ով:

Վերանայվել են ՀՀ բուհերում օտարերկրյա ուսանողների ընդունելության, ակադեմիական շարժունության կարգերը՝ նախատեսելով նաև գործընթացի իրականացումն էլեկտրոնային հարթակի միջոցով: Արդյունքում, էլեկտրոնային հարթակում 2025-2026 ուսումնական տարվա ընդունելության համար գրանցվել է 2 175 հայտ, դիմորդների ընդհանուր թիվն աճել է 38%-ով: Միայն օտարազգի քաղաքացիների հայտերի քանակը 2024 թվականի համեմատ աճել է 90%-ով:

Գործում են միջպետական կրթաթոշակային ծրագրեր օտարերկրյա 9 պետության հետ: Միջպետական համաձայնագրերի շրջանակում 2025-2026 ուստարում օտարերկրյա 74 քաղաքացի ընդունվել է ՀՀ բուհեր, ՀՀ 208 քաղաքացի՝ օտարերկրյա բուհեր:

2025-2026 ուսումնական տարում ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով ընդունվել է 70 սփյուռքահայ՝ հայազիտական, մանկավարժական և արվեստի բնագավառի մասնագիտություններով:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին մշակվել և 2026 թվականի հունվարին հաստատվել են գիտության ոլորտի զարգացման 2026-2030 թթ. ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև գիտության և տեխնոլոգիաների ոլորտի 2026-2030 թթ. գերակա ուղղությունները:

2025 թվականի դրությամբ գիտության ոլորտի (ներառյալ ռազմարդյունաբերության) հատկացվող պետական միջոցների ծավալը կազմել է շուրջ 40,2 մլրդ ՀՀ դրամ՝ 2017 թվականի համեմատ (14,3 մլրդ ՀՀ դրամ) աճելով 2,8 անգամ, կամ 180%-ով:

2025 թվականին շարունակվել և ամփոփվել է 2021 թվականի ատեստավորում անցած գիտական և ճարտարագիտական աշխատողների բազային պետական աշխատավարձի աստիճանական աճը՝ 2018-2021 թթ. համեմատ, ըստ յուրաքանչյուր պաշտոնի/տարակարգի, ավելանալով 105%-ից մինչև 300%-ով: Մասնավորապես՝

- լաբորանտի կամ ճարտարագետի աշխատավարձը 2025 թվականի համար կազմել է 138 000 ՀՀ դրամ՝ 2024 թվականի նվազագույնը 120 000 ՀՀ դրամի և 2021 թվականի միջին 67 000 ՀՀ դրամի համեմատ.

- ավագ լաբորանտի կամ ավագ ճարտարագետի աշխատավարձը 2025 թվականի համար կազմել է 179 000 ՀՀ դրամ՝ 2024 թվականի նվազագույնը 156 000 ՀՀ դրամի և 2021 թվականի միջին 76 000 ՀՀ դրամի համեմատ.

- կրտսեր գիտաշխատողի աշխատավարձը 2025 թվականի համար կազմել է 210 000 ՀՀ դրամ՝ 2024 թվականի նվազագույնը 180 000 ՀՀ դրամի և 2021 թվականի միջին 85 800 ՀՀ դրամի համեմատ.

- գիտաշխատողի աշխատավարձը 2025 թվականի համար կազմել է 276 000 ՀՀ դրամ՝ 2024 թվականի միջին 230 000 ՀՀ դրամի և 2021 թվականի նվազագույնը 90 400 ՀՀ դրամի համեմատ.

- ավագ գիտաշխատողի աշխատավարձը 2025 թվականի համար կազմել է 343 000 ՀՀ դրամ՝ 2024 թվականի նվազագույնը 300 000 ՀՀ դրամի և 2021 թվականի միջին 99 000 ՀՀ դրամի համեմատ.

- առաջատար գիտաշխատողի աշխատավարձը 2025 թվականի համար կազմել է 443 800 ՀՀ դրամ՝ 2024 թվականի նվազագույնը 420 000 ՀՀ դրամի և 2021 թվականի միջին 114 300 ՀՀ դրամի համեմատ.

- գլխավոր գիտաշխատողի աշխատավարձը 2025 թվականի համար կազմել է 552 000 ՀՀ դրամ՝ 2024 թվականի նվազագույնը 500 000 ՀՀ դրամի և 2021 թվականի միջին 138 100 ՀՀ դրամի համեմատ.

- գիտական խմբի ղեկավարի աշխատավարձը 2025 թվականի համար կազմել է 410 000 ՀՀ դրամ՝ 2024 թվականի միջին 350 000 ՀՀ դրամի և 2021 թվականի նվազագույնը 129 100 ՀՀ դրամի համեմատ.

- գիտական ստորաբաժանման ղեկավարի աշխատավարձը 2025 թվականի համար կազմել է 477 200 ՀՀ դրամ՝ 2024 թվականի նվազագույնը 450 000 ՀՀ դրամի և 2021 թվականի միջին 141 400 ՀՀ դրամի համեմատ:

2021 թվականից սկսած՝ ոլորտում կատարվել են աննախադեպ ծավալներով ներդրումներ. գիտական սարքավորումների ձեռքբերման նպատակով 2021 և 2022 թվականներին գիտական կազմակերպություններին և բուհերին հատկացվել են 4,3 մլրդ դրամ դրամաշնորհներ, իսկ 2023-2025 թթ. կապիտալ բնույթի ներդրումների շրջանակներում ֆինանսավորման է երաշխավորվել գիտական սարքերի ձեռքբերման 124 հայտ՝ ընդհանուր 10,4 մլրդ ՀՀ դրամ գնահատված արժեքով, որից 85 սարքավորում՝ 5 մլրդ ՀՀ դրամ արժողությամբ, արդեն իսկ տրամադրվել է գիտական կազմակերպություններին: 49 սարքավորում դեռևս գնման գործընթացում է:

Երևանի պետական համալսարանում հիմնադրվել է արհեստական բանականության կենտրոնը, որի գերհամակարգչի ձեռքբերման և տեղադրման նպատակով պետական բյուջեից հատկացվել է ընդհանուր 3,7 մլրդ ՀՀ դրամ:

2024 թվականից կազմակերպվում է մրցունակ գիտական ստորաբաժանումների հազեցվածության բարձրացման մրցութային ծրագիրը, որի արդյունքում 2025 թվականի դրությամբ 24 գիտական կազմակերպության և բուհի 119 գիտական

ստորաբաժանման սարքավորումներով և նյութերով հագեցվածության համար հատկացվել է 1,9 մլրդ ՀՀ դրամ:

Պետական քաղաքականության արդյունքները երևում են «Վեր օֆ Սայնս» միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված, ազդեցության գործակից ունեցող պարբերականներում հայաստանյան գիտական հրապարակումների աճի տեսքով՝ կազմելով 1 646 հոդված (որոնցից 1041-ը (58,9%) ամսագրերի դասակարգման ավելի բարձր Q1 և Q2 քառորդների ամսագրերում): Հրապարակումների թիվն արդեն 2 տարի գրանցում է պատմական ամենաբարձր ցուցանիշը:

2025 թվականին որակական աճ են գրանցել հայաստանյան գիտական ամսագրերը. հայաստանյան երեք ամսագրեր գրանցվել են միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում:

2021 թվականից Կառավարության ծրագրի համաձայն գիտության ոլորտում ներդրվել են նոր խոշոր դրամաշնորհային մրցույթներ (մինչև 7 հետազոտող, մինչև 176 մլն ՀՀ դրամ, մինչև 5 տարի ժամանակահատված): Ծրագրերի իրականացման պարտադիր պայման է արտերկրի առաջատար գիտնականների ներգրավումը որպես խմբի ղեկավար կամ խորհրդատու: Այս մրցույթների շրջանակներում 2025 թվականի դրությամբ ֆինանսավորվում է 160 հետազոտական ծրագիր, որոնցում ներառված են առաջատար հետազոտողներ 32 պետությունից: 160 ծրագրի ընդհանուր ֆինանսավորման ծավալը դրանց ամբողջ տևողության համար կազմում է 23,8 մլրդ ՀՀ դրամ:

ԵՄ «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրի շրջանակում 2025 թվականի տարեվերջի դրությամբ ՀՀ-ի կողմից ներկայացվել է ընդհանուր 183 հայտ (նախորդ տարվա համեմատ 39 հայտով ավելի), կնքված է ֆինանսավորման ևս 8 պայմանագիր՝ պայմանագրերի ընդհանուր թիվը հասցնելով 25-ի՝ շուրջ 8,33 մլն եվրո ընդհանուր բյուջեով, որը գերազանցում է նախորդ՝ «Հորիզոն 2020» շրջանակային ծրագրի ամբողջ ընթացքում (2014-2020 թթ.) ՀՀ կազմակերպությունների ներգրաված ընդհանուր բյուջեն (4,19 մլն եվրո) գրեթե երկու անգամ:

Պետական բյուջեի ֆինանսավորմամբ օտարերկրյա համալսարաններում հայերենի և այլ հայագիտական առարկաների դասավանդման ծրագիրն իրականացվել է օտարերկրյա 11 պետությունում գործող 14 գիտակրթական կառույցում:

Մատենադարանի կողմից 2025 թվականի հուլիսի 9-12-ը կազմակերպվել է արդեն ամենամյա բնույթ ստացած Հայագիտական միջազգային 2-րդ կոնգրեսը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մարդկային կապիտալի զարգացման, առողջ և դիմակայուն հասարակություն ունենալու նպատակով ընդունվել է Առողջության համընդհանուր ապահովագրության

օրենսդրական փաթեթը, և 2026 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է համակարգի ներդրումը, որն առաջին փուլով ներառում է շուրջ 1,6 մլն քաղաքացի:

2026 թվականին ապահովագրական համակարգում ներառվել են հետևյալ խմբերը՝ ՀՀ քաղաքացի և ռեզիդենտ մինչև 18 տարեկանները, 65 և ավելի տարիքի անձինք, հաշմանդամության 1-3-րդ խումբ ունեցող և ֆունկցիոնալության խորը, ծանր, միջին սահմանափակում ունեցող անձինք, գոհված զինծառայողների ընտանիքների անդամները, այլ սոցիալական անապահով խմբերը, որոնց համար ապահովագրության գումարն ամբողջությամբ փոխհատուցվելու է պետության կողմից: Բացի այդ, ապահովագրական համակարգում ընդգրկվել են 200 001 ՀՀ դրամ և ավելի աշխատավարձ ստացողները և 2 400 001 ՀՀ դրամ և ավելի համախառն եկամուտ ունեցող ԱԶ-ները և նոտարները: Կառավարության կողմից իրականացվել է նաև վարձու աշխատողների կողմից ապահովագրավճարի չափի նվազեցման նպատակով սուբսիդավորման լրացուցիչ աղբյուրների ներգրավում:

Բժշկական ծառայությունների հասանելիության և որակի բարելավման արդյունքում բարելավվել է հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման գործընթացը, բարձրացել են ապրելիության ցուցանիշները: 2024 թվականին գրանցվել է կյանքի սպասվող միջին տևողության Հայաստանում երբևէ գրանցված ամենաբարձր ցուցանիշը՝ կազմելով 78,6 տարի (2023 թվականին՝ 77,7), որից՝ կանանց շրջանում՝ 81,7, իսկ տղամարդկանց շրջանում՝ 75,1: Արձանագրվել է մահացության ցուցանիշների նվազում, մասնավորապես՝ առավել տարածված ոչ վարակիչ հիվանդություններից վաղաժամ (մինչև 65 տարեկան) մահացությունը. 100 000 բնակչի շրջանում արյան շրջանառության համակարգի հիվանդություններից՝ 94,6 (2023 թվականին՝ 96,1), չարորակ նորագոյացություններից՝ 63,7 (2023 թվականին՝ 66,8), շաքարային դիաբետից՝ 2,3 (2023 թվականին՝ 3,6):

Շարունակվել է պետական պատվերի շրջանակներում հիվանդանոցային, դժվարամատչելի բժշկական օգնության և սպասարկման ծավալների ավելացումը. մատուցվել է 6 067 312 բժշկական ծառայություն (2024 թվականին՝ 4 310 257, 2018 թվականին՝ 3 218 169), որից 1 124 088-ը՝ հիվանդանոցային դեպք (2024 թվականին՝ 830 773, 2018 թվականին՝ 266 479), 270 461-ը՝ արտահիվանդանոցային հատուկ և դժվարամատչելի հետազոտությունների գծով ծառայություն (2024 թվականին՝ 191 543, 2018 թվականին՝ 65 597):

Պետպատվերի շրջանակներում բնակչությանը մատուցվել են հետևյալ հիմնական ծառայությունները.

- չարորակ նորագոյացություններով բուժառուների վիրահատական և ոչ վիրահատական (քիմիաթերապևտիկ և ճառագայթային բուժման) բժշկական օգնության և սպասարկման շուրջ 92 633 ծառայություն, ինչն ավելի է 2024 թվականից շուրջ 1/3-ով (2024 թվականին՝ շուրջ 66 252),
- կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման սքրինինգային փորձարարական ծրագրի շրջանակներում՝ 4 404 հետազոտություն (2024 թվականին՝ 5187),

- կրծքագեղձի քաղցկեղի կանխարգելման նպատակով՝ 7 629 մամոգրաֆիկ անվճար սքրինինգային հետազոտություն, ինչն ավելի է 40%-ով 2024 թվականի ցուցանիշից (2024 թվականին՝ 4 642),

- սիրտ-անոթային հիվանդությունների բժշկական օգնության և սպասարկման 13 940 վիրահատական ծառայություն (2024 թվականին՝ 15 305), սրտի անհետաձգելի վիրահատական (Stent for Life) 3 302 ծառայություն (2024 թվականին՝ 2 682),

- գլխուղեղի կաթվածների ծրագրի շրջանակներում՝ 810 ծառայություն (2024 թվականին՝ 789), ատրտայի շերտազատված անևրիզմայի վիրահատական բուժման ծրագրի շրջանակներում՝ 95 ծառայություն (2024 թվականին՝ 84),

- օրգանների փոխպատվաստման 71 ծառայություն (երիկամի՝ 16, ոսկրածուծի/ցողունային բջիջների՝ 55) (2024 թվականին՝ 83 ծառայություն),

- արտագնա անհետաձգելի բժշկական օգնության արագ արձագանքման ծառայության կողմից՝ բուժառուներին ուղղաթիռով տեղափոխման 60 թռիչք (2024 թվականին՝ 42):

Հասանելի և որակյալ ծառայությունների ապահովման ուղղությամբ պետության կողմից իրականացված կապիտալ ներդրումները կազմել են 6,4 մլրդ ՀՀ դրամ:

2025 թվականին ավարտվել են 14 առողջապահական հաստատության կառուցման/վերակառուցման և վերազինման աշխատանքները: 2025 թվականին մեկնարկել և ընթացքում է 40 առողջապահական հաստատության կառուցման/վերակառուցման գործընթաց:

Բժշկական ծառայությունների որակի բարձրացման նպատակով մշակվել է ընդհանուր 390 գործելակարգ: Ներդրվել է առաջին անգամ անցումային անհատական լիցենզավորման համակարգը. 905 կլինիկական օրդինատոր հանձնել է անցումային լիցենզիա ստանալու քննություն: Էլեկտրոնային համակարգով 2025 թվականի ընթացքում տրամադրվել են 562 դեղատնային և 1 158 բժշկական օգնության և սպասարկման իրականացման էլեկտրոնային լիցենզիաներ:

Մոր և մանկան առողջության ոլորտի ցուցանիշներ.

Մայրական մահացության ցուցանիշը 2025 թվականին կազմել է 3,2/100 000 կենդանածնի համեմատ (2024 թվականի համեմատությամբ 84,6% նվազում), իսկ եռամյա՝ 2023-2025 թթ. ցուցանիշը՝ 11,7/100 000 կենդանածնի համեմատ, ինչը դրական առումով երբևէ չարձանագրված ցուցանիշ է: 2025 թվականին արձանագրվել է մայրական մահացության ընդամենը 1 դեպք:

Մեռելաձնության ցուցանիշը նվազել է՝ կազմելով 12,0 (բացարձակ 389 դեպք)՝ 2024 թվականի նույն ժամանակահատվածի 13,1-ի (բացարձակ 446 դեպք) համեմատությամբ:

Մինչև 1 տարեկան երեխաների մահացության ցուցանիշը 2025 թվականին կազմել է 6,8 պրոմիլ/1000 կենդանի ծնվածի հաշվով (219 դեպք), 2024 թվականին նույն ժամանակահատվածի ցուցանիշը կազմել էր 6,2 (209 դեպք) պրոմիլ: Մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշը 2025 թվականի ընթացքում կազմել է

8,2 պրոմիլ (264 դեպք), 2024 թվականի նույն ժամանակահատվածում այն կազմել է 7,4 պրոմիլ (247 դեպք):

Անպտոդության հաղթահարման ծրագրի շրջանակներում սպասարկվել է 7 722 շահառու, ծնվել է 561 երեխա, որից 15-ը՝ զոհված զինծառայողների ընտանիքներում, արձանագրվել է 1 307 հղիություն: Երևանում և Շիրակի մարզում, իսկ 2025 թվականից նաև Գեղարքունիքի մարզում (Մարտունու ծննդատուն) օժանդակ սերմնավորման ծառայությամբ պետական պատվերի շրջանակներում կատարվել է 615 սերարգանդային սերմնավորում:

Մեկնարկել և ընդլայնվել է մանկական շարժական պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունը, որի շրջանակներում արձանագրվել է շուրջ 800 կանչ:

Սկսած ապրիլից՝ ադրենոգենիտալ համախտանիշի սրբինինգն ընդլայնվել է և ներդրվում է ՀՀ ողջ տարածքում: Փոխհատուցվել է 25 երեխայի ականջի խխունջի պատվաստման վիրահատության և 1 տարվա վերականգնողական բուժման արժեքը: Կատարվել է էպիլեպսիայի բուժման 24 վիրահատություն, ինչպես նաև ոսկրածուծի աուտոգեն 6 և ալոգեն 1 փոխպատվաստում: Երեխաների, հղիների և ծննդկանների համար արյան բաղադրամասերի տրամադրումը դարձել է պետության կողմից փոխհատուցվող: 2 պիլոտային մարզի պրենատալ ախտորոշման կենտրոններում իրականացվել է 4 404 (2024 թվականին՝ 4019) ուլտրաձայնային էքսպերտային հետազոտություն, որի արդյունքում հայտնաբերվել է շեղումների շուրջ 88 դեպք:

Գեղերի հասանելիության ընդլայնման ուղղությամբ.

ՀՀ պետական բյուջեի միջոցներով կենտրոնացված կարգով ձեռք է բերվել 16 հիվանդության համար նախատեսված 95 անվանում դեղ, որոնց համար հատկացվել է 5,4 մլրդ ՀՀ դրամ (2024 թվականին՝ 4,1 մլրդ ՀՀ դրամ): Ծրագրի շահառուների ընդհանուր թիվը կազմել է շուրջ 238 964 բուժառու (2024 թվականին՝ 201 668 շահառու): Շահառուներին տրամադրվել են շաքարային և հակադիաբետիկ դեղեր: 0-18 տարեկան շահառու երեխաներին անվճար տրամադրվող արյան մեջ գլյուկոզայի որոշման համար նախատեսված թեստ-երիզները կրկնապատկվել են: Սկսած մայիսից՝ 18-28 տարեկան շահառուներին առաջին անգամ անվճար տրամադրվել են 300 հատ թեստ-երիզ և չափիչ սարք: Մեկնարկել է դիաբետ ունեցող երեխաների և դեռահասների առողջության ու կյանքի որակի բարելավման նոր ծրագիր՝ գլյուկոզայի շարունակական մոնիթորինգի համակարգերի ներդրման միջոցով, որոնք թույլ են տալիս տվյալների հեռահար դիտում ծնողների և բժիշկների կողմից, ինչպես նաև սահմանային վիճակների դեպքում ինքնաշխատ ազդանշանային զգուշացում:

Մեկնարկել է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով սիրտ-անոթային հիվանդությունների և շաքարային դիաբետով հիվանդներին տրամադրվող դեղերի փոխհատուցման փորձարարական մեխանիզմի ներդրումը, որը հնարավորություն է ընձեռել դեղերի ձեռքբերումն իրականացնելու էլեկտրոնային դեղատոմսերով դեղատոմսերից:

Վարակիչ հիվանդությունների դեմ պայքար.

1 տարեկան երեխաների պատվաստումներում ամբողջական ընդգրկվածությունը կազմել է 95,1% (2024 թվականին՝ 92,9%): Մարդու պայիլոմավիրուսի դեմ պատվաստման ընդգրկվածությունը կազմել է 48%՝ 2024 թվականի համեմատ գրանցելով 14,3%-ով աճ: Զորակոչի ենթակա անձանց պատվաստումներում ընդգրկվածությունը կազմել է 95% (2024 թվականին՝ 95%): Կատարված աշխատանքների արդյունքում ՀՀ-ում չեն արձանագրվել կարմրուկի, դիֆթերիայի, պոլիոմիելիտի տեղական դեպքեր: Թիրախային խմբերի անձանց շրջանում 2025 թվականին ներդրված ջրծաղկի դեմ պատվաստումներում ընդգրկվածությունը կազմել է 76,7%:

Առողջ ապրելակերպի խթանում.

10 մարզում և Երևան քաղաքում ընտանեկան ձևաչափով կազմակերպվել է առողջ կենսակերպի քարոզչության 11 արշավ: Գործել են առողջ երկարակեցության խմբակներ (Երևան քաղաքում՝ 10 և մարզերում՝ 2) և ավագ սերնդի հիշողության զարգացման 4 խմբակ: Վերանայվել են նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում սնուցման կազմակերպման չափորոշիչները՝ նվազեցնելով աղի, շաքարի և այլ վտանգավոր մթերքների քանակները:

ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվել է 905,6 մլրդ ՀՀ դրամ կամ պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 26,3%-ը, մինչդեռ 2017 թվականին բյուջեն կազմել է 365,1 մլրդ ՀՀ դրամ կամ պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 30,13%-ը: 2017 թվականի համեմատ 2025 թվականի բյուջեն աճել է շուրջ 2,5 անգամ:

2025 թվականին կենսաթոշակառուների միջին ամսական թիվը կազմել է 476 813, ծախսը՝ շուրջ 288,4 մլրդ ՀՀ դրամ, կենսաթոշակի միջին ամսական չափը՝ 49 032 ՀՀ դրամ: 2017 թվականին կենսաթոշակառուների միջին ամսական թիվը կազմել է 455 609, ծախսը՝ 220,7 մլրդ ՀՀ դրամ, կենսաթոշակի միջին ամսական չափը՝ 40 296 ՀՀ դրամ:

Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների գծով ծախսը 2025 թվականին կազմել է 51,7 մլրդ ՀՀ դրամ, շահառուների թիվը՝ 111 904: 2017 թվականին ծախսը կազմել է 13,9 մլրդ ՀՀ դրամ, իսկ շահառուների թիվը՝ 63 024:

Կառավարության 2021-2026 թթ. ծրագրով թիրախավորվել է կենսաթոշակի նվազագույն չափը մինչև 2026 թվականը համապատասխանեցնել պարենային զամբյուղին, իսկ միջին կենսաթոշակը՝ նվազագույն սպառողական զամբյուղին: 2025 թվականի 4-րդ եռամսյակի միջին ընթացիկ գներով պարենային և սպառողական զամբյուղների արժեքները կազմել են համապատասխանաբար 33 388 ՀՀ դրամ և 61 768 ՀՀ դրամ: Դեռևս 2023 թվականից գերազանցվել է պարենային զամբյուղի համար նախանշված թիրախը: 2025 թվականին նվազագույն

կենսաթոշակը (36 000 ՀՀ դրամ) գերազանցում է պարենային զամբյուղը (33 388 ՀՀ դրամ) 7,8%-ով: Կենսաթոշակի միջին չափը կազմում է 49 032 ՀՀ դրամ: 2025 թվականի հետվճարի առավելագույն չափը կազմել է 6 000 ՀՀ դրամ, իսկ միջին ամսական չափը՝ 4 118 ՀՀ դրամ: Այսինքն, կենսաթոշակի միջին չափը հետվճարի առավելագույն չափի՝ 6 000 ՀՀ դրամի հաշվառմամբ կազմում է 55 032 ՀՀ դրամ, իսկ միջին ամսական չափի հաշվառմամբ՝ 53 151 ՀՀ դրամ: Սա նշանակում է, որ հետվճարի առավելագույն չափի հաշվառմամբ կենսաթոշակի միջին չափը կազմում է սպառողական զամբյուղի 89,1%-ը, միջին ամսական չափի հաշվառմամբ՝ 86%-ը:

Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին ու նպաստառուներին հետվճար տրամադրելու միջոցառման շրջանակներում 2025 թվականի դեկտեմբերի համար հետվճար է հատկացվել 400 572 շահառուի, միջին հետվճարի չափը կազմել է 4 414 ՀՀ դրամ: Հետվճարի չափը 2024 թվականի սեպտեմբերի 1-ից հետո կատարած անկանխիկ վճարումների համար սահմանվել էր 12%, իսկ առավելագույն չափը՝ 6 հազար ՀՀ դրամ: 2026 թվականի հունվարի 1-ից հետո կատարած անկանխիկ վճարումների համար այս ցուցանիշները սահմանվել են համապատասխանաբար 20% և 10 հազար ՀՀ դրամ:

Միջոցառման մեկնարկից մինչև 2025 թվականի տարեվերջ կենսաթոշակային քարտերով կատարվել է ավելի քան 342 մլրդ ՀՀ դրամի անկանխիկ գործարք: 2025 թվականի ծախսը կազմել է 16,3 մլրդ ՀՀ դրամ:

2025 թվականին ներդրվել է ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների նշանակման, հաշվարկման և վճարման նոր համակարգ: Նպաստները վճարվում են բացառապես անկանխիկ եղանակով:

2025 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ սահմանամերձ և առանձին բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի (հայտնի է որպես 16 մլն-ի ծրագիր) շահառուի կարգավիճակ է ստացել 2 316 ընտանիք, որից 2 292-ն արդեն վարկավորվել է և սկսել շինարարական աշխատանքները, 212 ընտանիք ներկայացրել է ավարտական ակտը: 2025 թվականին նշված վարկերի մարմանն ուղղվել է շուրջ 5,2 մլրդ ՀՀ դրամ:

Ջոհված գինձառայողների ծնողների վերարտադրողական առողջությանն աջակցելու ծրագրի մեկնարկից ի վեր միջոցառումից օգտվել է 261 շահառու ծնող, հատկացվել է 302 մլն ՀՀ դրամ: 2025 թվականին շահառուների թիվը կազմել է 37, իսկ ծախսը՝ 69,8 մլն ՀՀ դրամ:

2025 թվականին ԽՍՀՄ Խնայրանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում է ստացել 4 010 անձ, որոնց վճարվել է շուրջ 820 մլն ՀՀ դրամ: Մեկ անձին հասանելիք փոխհատուցման միջին չափը կազմել է շուրջ 190 հազար ՀՀ դրամ:

2025 թվականին իրականացվել է անհուսալի վարկեր ունեցող չաշխատող անձանց տնտեսական ակտիվության խթանման միջոցառումը, որի շահառու է 8 006 անձ, որից 1 559-ի վարկային պարտավորություններն ամբողջությամբ մարվել են: Տարեկան ծախսը կազմել է 1,3 մլրդ ՀՀ դրամ:

Աղքատության մակարդակը շարունակել է նվազել՝ 2017 թվականի 25,7%-ից 2024 թվականին դառնալով 21,7%, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 1,4%-ից՝ 0,6%:

Կառավարության որոշմամբ Կոտայքի և Սյունիքի մարզերում փորձարկվել է ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգը, որը 2026 թվականին կգործարկվի ամբողջ հանրապետությունում: Նոր համակարգով անապահովության գնահատման նախապայման է չափահաս աշխատունակ անձանց համար զբաղվածության ծրագրերում ներգրավվումը: 2025 թվականի պետական բյուջեով 51 269 ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների համար նախատեսվել էր շուրջ 22,8 մլրդ ՀՀ դրամ:

2017 թվականին ընտանեկան և սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվը 100 288 էր, իսկ պետական բյուջեից ծախսը՝ 36,7 մլրդ ՀՀ դրամ: 2025 թվականին ընտանեկան, սոցիալական և անապահովության նպաստ ստացող ընտանիքների թիվը կազմել է 49 498 ընտանիք, և պետական բյուջեից այս նպատակի համար ծախսվել է 20,6 մլրդ ՀՀ դրամ:

Սոցիալական շտապ օգնության ծրագրով տրամադրվել են նաև սննդային քարտեր (բանկային քարտեր): Ծրագիրն իրականացվել է Երևան քաղաքում և 6 մարզում: Աջակցություն է տրամադրվել 778 ընտանիքի, այդ թվում՝ 500-ը սննդային քարտերի տեսքով: ՀՀ պետական բյուջեի միջոցներից ծախսվել է 27 մլն ՀՀ դրամ:

Շարունակվել է «Սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» միջոցառումը: Ծառայությունը տրամադրվում է ճաշարանում օրական մեկ անգամ՝ շաբաթական հինգ օր հաճախականությամբ: Միջոցառումն իրականացվում է Երևան քաղաքում և 6 մարզում, ընդգրկվել է շուրջ 700 շահառու:

2026 թվականի հունվարի 1-ից սոցիալական փաթեթի շահառուների համար վերացվել է պարտադիր կանխարգելիչ բժշկական գնություն անցնելու պահանջը: Շահառուն կարող է սոցիալական փաթեթի ամսական 6 000 ՀՀ դրամը, գործատուին տրված իր դիմումի հիման վրա, ուղղել առողջության համընդհանուր ապահովագրության ապահովագրավճարի մարմանը, ինչպես նաև իր սոցիալաֆթեթի հաշվին փոխանցված միջոցներից վճարել իր հետ փոխկապակցված անձի ապահովագրավճարը:

Միասնական սոցիալական ծառայությունում հաշվառված աշխատանք փնտրողների թիվը 2025 թվականի վերջի դրությամբ կազմել է 46 508 մարդ, մինչդեռ 2017 թվականի տարեվերջին այս ցուցանիշը կազմել է 85 983, իսկ գործազուրկի կարգավիճակ ունեցող անձանց թիվը 2025 թվականի վերջի դրությամբ եղել է 32 974, որը 37 262-ով նվազել է 2017 թվականի ցուցանիշի նկատմամբ:

2025 թվականին զբաղվածության ապահովման ծրագրերի շրջանակներում 238 գործազուրկ ընդգրկվել է ռազմական գործողություններին մասնակցած կամ զինվորական ծառայությունից զորացրված անձանց մասնագիտական ուսուցման և աշխատանքի ապահովման ծրագրում, 35 շահառու՝ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողների ծնողներին մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կազմակերպմանն ուղղված պետական աջակցության միջոցառման մեջ,

իսկ 52 շահառու՝ անապահով ընտանիքների աշխատունակ անձանց համար նախատեսված կարճաժամկետ ուսուցման, աշխատանքային փորձի ձեռքբերման և զբաղվածության ապահովման ծրագրում: Հաստատվել է անապահով ընտանիքների աշխատունակ անձանց վարձատրվող հասարակական աշխատանքի դիմաց աջակցության տրամադրման ծրագիրը:

2025 թվականին Համաշխարհային տնտեսական ֆորումի «Գլոբալ գենդերային ճեղքվածք» զեկույցում 148 երկրի շարքում Հայաստանը զբաղեցնում է 59-րդ տեղը՝ բարելավելով դիրքը նախորդ տարվա համեմատ 5 հորիզոնականով: Կենտրոնական Ասիա տարածաշրջանում ընդգրկված 7 երկրների շարքում Հայաստանն առաջինն է: 2021 թվականին Հայաստանը զբաղեցրել է 114-րդ տեղը 156 երկրից:

2025 թվականին ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց տնտեսական հզորացման ծրագրերն իրականացվել են 3 մարզում՝ Լոռիում, Արմավիրում և Կոտայքում:

34 անձ նույնացվել է որպես մարդկանց թրաֆիքինգի զոհ՝ 29-ը՝ աշխատանքային, 5-ը՝ սեռական շահագործում: 2025 թվականին 6 երեխա և 2 հոգեկան առողջական խնդիրներ ունեցող անձ ճանաչվել են որպես հատուկ կատեգորիայի զոհ: Վերջիններս սահմանված կարգով ստացել են աջակցություն: Միանվագ դրամական աջակցություն է ստացել 7 զոհ: 2017 թվականին մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհ էր ճանաչվել 11 անձ, որից 2-ը՝ երեխա:

2020 թվականից ՀՀ ողջ տարածքում ներդրվել են ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնի և ապաստարանի ծառայությունները: 2020 թվականին աջակցության կենտրոնի ծառայություններից օգտվել է 1 067 անձ, իսկ 2025 թվականին՝ 2 137 անձ: Ապաստարանի ծառայություններից 2020 թվականին օգտվել է 135 անձ, 2025 թվականին՝ 196 անձ: 2025 թվականին ընտանեկան բռնության ենթարկված 94 անձի տրամադրվել է միանվագ ֆինանսական աջակցություն: Բազային վճար է սահմանվել 65 հազար ՀՀ դրամը, որի արդյունքում էականորեն բարձրացել է տրամադրվող միջին գումարի չափը՝ հասնելով մինչև 180 հազար ՀՀ դրամի:

Կառավարության որոշմամբ ընդունվել է ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թթ. ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը:

ԱՍՀՆ ենթակայությամբ գործող երեխայի և ընտանիքի աջակցության 6 կենտրոնը տարեկան շուրջ 600 երեխայի շարունակել է տրամադրել սոցիալ-հոգեբանական, սոցիալ-վերականգնողական, իրավաբանական և կարիքահեն այլ ծառայություններ: 2025 թվականին կյանքի դժվարին իրավիճակում հայտնված շուրջ 3 300 երեխայի տրամադրվել են սոցիալ-վերականգնողական ծառայություններ հավաստագրված 14 ՀԿ-ի կողմից՝ 30 ցերեկային կենտրոնում:

Զարգացել է խնամատարության ինստիտուտը. 2025 թվականի ընթացքում 197 երեխա խնամք է ստացել 110 խնամատար ընտանիքում, մինչդեռ 2017 թվականին 20 խնամատար ընտանիքում խնամք է ստացել 24 երեխա:

2025 թվականին որդեգրվել է 21 երեխա, որից 6-ը՝ միջազգային որդեգրում (2017 թվականին որդեգրվել է 60 երեխա, որից 29-ը՝ միջազգային որդեգրում):

2025 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ երեխաների շուրջօրյա խնամք տրամադրող պետական կազմակերպություններում խնամք և դաստիարակություն է ստացել 280 երեխա, իսկ 2017 թվականին՝ 620 երեխա: Պետական շուրջօրյա խնամքի հաստատություններից ընտանիքների հետ վերամիավորվել է 7, իսկ ճգնաժամային կենտրոններից՝ 65 երեխա:

2025 թվականին ընդունվել է «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» ՀՀ օրենքը:

2025 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկատվական համակարգերում հաշվառված է 195 263 հաշմանդամություն ունեցող անձ, որից 9 775-ը՝ երեխա: Նշված թվի մեջ 47 718 անձի հաշմանդամությունը սահմանվել է ֆունկցիոնալության գնահատման արդյունքում: 2017 թվականին հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմում էր 193 432 անձ: Զգալիորեն ընդլայնվել է աջակցող միջոցների ցանկը ֆունկցիոնալ պրոթեզներով, էլեկտրական սայլակներով, կոխլետար իմպլանտի խոսակցական պրոցեսորի մասերով: 2025 թվականի ընթացքում շուրջ 16 000 քաղաքացու տրամադրվել է 35 756 աջակցող միջոց, իրականացվել է 256 աջակցող միջոցների վերանորոգում՝ 2,4 մլրդ ՀՀ դրամի սահմաններում: 2017 թվականի դրությամբ տրամադրվել էր 8 824-ը, և վերանորոգվել էր 542-ը՝ 748 մլն ՀՀ դրամ հատկացմամբ:

2025 թվականին անձնական օգնականի ծառայություն է ստացել շուրջ 210 անձ: 2024 թվականին ծառայություն էր ստացել շուրջ 100 անձ:

Ցերեկային կենտրոններում սոցիալ-վերականգնողական ծառայություններ է ստացել ամսական 419 հաշմանդամություն ունեցող անձ: 2025 թվականից իրականացվում է հաշմանդամություն ունեցող երեխաների՝ տնային պայմաններում խնամքի ծառայությունը, և ծառայություն է ստացել ամսական 141 երեխա:

5 համայնքային փոքր տներում ծառայություն է ստանում 70 շահառու: Մեծամորում ընթանում են հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի կենտրոնի շինարարական աշխատանքները:

Շուրջօրյա խնամքի ծառայություն է տրամադրվել 1 291 տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձի, այդ թվում՝ 617 հաշմանդամություն ունեցող անձ ստացել է մասնագիտացված շուրջօրյա խնամք: 2017 թվականին շահառուների թիվը 1 210 էր: 6 մարզում և Երևան քաղաքում գործող տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային կենտրոններում ծառայություն է ստացել 522 շահառու: Որպես առանձին միջոցառում՝ ցերեկային կենտրոններում խնամքը ներդրվել է 2024 թվականից 400 շահառուի հաշվարկով՝ այս ընթացքում աճելով 122 շահառուով:

Բոլոր մարզերում ընդլայնվել են տնային խնամքի ծառայությունները՝ ներառելով նաև ամենօրյա խնամքի ծառայություններ անկողնային խնամքի կարիք կամ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող տարեցների կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար: 2025 թվականին ծառայություն է ստացել 1 325 շահառու:

Հավաստագրված 7 ՀԿ-ի կողմից Երևան քաղաքում և 9 մարզում 2025 թվականին ծառայություն է ստացել 1 289 շահառու, այդ թվում՝ ներդրվել են տնային պայմաններում մասնագիտացված խնամքի ծառայություններ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար՝ 50 շահառուի հաշվարկով:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին ընդունվել է «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքը, որը ոլորտը կարգավորող առաջին օրենքն է:

Շարունակվել է մարզերում երիտասարդական կենտրոնների ձևավորման գործընթացը: Ծրագրի շրջանակներում արդեն իսկ ձևավորվել է 9 կենտրոն: 2025 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով դրամաշնորհներ են տրամադրվել ևս 5 բնակավայրում (Ճամբարակ, Նոյեմբերյան, Հրազդան համայնքներում և Աղավսաձոր (Ծաղկաձոր համայնք), Վերիշեն (Գորիս համայնք)՝ երիտասարդական միջավայրերի ձևավորման համար, որոնք կգործեն 2026 թվականից: Երիտասարդական կենտրոնների ընդհանուր այցելությունների թիվը կազմել է շուրջ 33 000 երիտասարդ, ինչն ավելի քան 3,5 անգամ գերազանցում է 2024 թվականի գործող 5 կենտրոնների 8 600 ցուցանիշը:

2025 թվականին իրականացվել են մեդիագրագիտության բարձրացման, սոցիալական ձեռներեցության զարգացման, երիտասարդական աշխատողների կարողությունների զարգացման և այլ թեմաներով պետական դրամաշնորհային տարաբնույթ ծրագրեր, որոնց մասնակցել է շուրջ 5 520 երիտասարդ, ինչը նախորդ տարվա ցուցանիշից ավելի է 1,5 անգամ:

2025 թվականի երիտասարդական մայրաքաղաք Ապարանում կազմակերպվել են երիտասարդների կարողությունների զարգացման, իրազեկման, ինտելեկտուալ ժամանցի կազմակերպման միջոցառումներ, որոնց մասնակցել է ավելի քան 6 300 երիտասարդ:

ՄՊՈՐՏ

2025 թվականին ՀՀ մարզիկները նվաճել են 357 մեդալ, որից 114-ը՝ ոսկե, 113-ը՝ արծաթե և 130-ը՝ բրոնզե: Մեդալներից 42-ը կամ 12%-ը նվաճել են կանայք: 2024 թվականից սկսած՝ նվաճած մեդալների համամասնության մեջ գերակշռում են ոսկե մեդալները՝ կազմելով 32%, և կրկնապատկվել են կին մարզիկների նվաճած մեդալները: Հաշմանդամություն ունեցող մարզիկները նվաճել են 37 մեդալ:

2025 թվականին շարունակվել են, ինչպես նաև ներդրվել են բարձր նվաճումներ ունեցող մարզիկների խրախուսման ծրագրեր: Տարվա ընթացքում 120 մարզիկ և մարզիչ ստացել են պատվովճարներ՝ ընդհանուր 15,5 մլն ՀՀ դրամի չափով: 2025 թվականին ցուցաբերած մարզական արդյունքների համար անվանական թոշակ է հատկացվել (այդ թվում՝ նաև վարկանիշի ձեռքբերման համար) 432 մարզիկի և մարզչի:

2025 թվականին միանվագ տարեվերջյան պարզևատրում է ստացել 189 մարզիկ, մասնավորապես՝ 50 մարզիկ ստացել է մինչև 500 հազար ՀՀ դրամ, 31 մարզիկ՝ մինչև 1 մլն ՀՀ դրամ և 108 մարզիկ՝ 1 մլն դրամից ավելի գումար՝ տարվա ընթացքում իր գրանցած հաղթանակների համար:

2025 թվականին Կառավարությունը ներդրել է Լուս Անջելեսի 2028 թվականի օլիմպիական խաղերին նախապատրաստվելու աջակցության ծրագիր, որը կգործի 2026 թվականից:

Պետություն-մասնավոր համագործակցության շրջանակներում մասնավոր լողավազաններում դպրոցահասակ երեխաների լողի պարապմունքների պետական ֆինանսավորման ծրագրի շահառուների թիվը 2025 թվականին կազմել է 198՝ մեկնարկային տարվա 22 շահառուի փոխարեն՝ հասանելի դառնալով Արագածոտնում, Արմավիրում, Կոտայքում, Տավուշում և Լոռիում: Օրենսդրական փոփոխությունների արդյունքում հնարավոր է դարձել մասնավոր ենթակառուցվածքներում նաև այլ մարզաձևերով զբաղվելը խթանելը:

Տեղի է ունեցել «Յուվենտուս» ֆուտբոլային ակումբի հայաստանյան ակադեմիայի հիմնարկերը:

Տարածք է տրամադրվել նաև Կոտայքի մարզում համահայկական խաղերի մարզական ավանի կառուցման համար:

Կարգավորվել են ֆիթնես կենտրոնների գործունեությունը և վերջիններիս մարզիչների հավաստագրման կարգը:

2025 թվականին 5 ֆեդերացիայի ֆինանսական և հաշվապահական գործառնություններն առաջին անգամ իրականացվել են Սպորտի կառավարման կենտրոնի կողմից՝ նպաստելով գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

2024 թվականին առաջին անգամ տարվա լավագույն մարզիկների մրցույթը տեղի է ունեցել վերափոխված ձևով՝ մրցույթը դարձնելով ավելի ընդգրկուն: 2025 թվականին ևս հաղթողները պարզևատրվել են 6,25-ական մլն ՀՀ դրամով:

2025 թվականին Հայաստանում անցկացվել են Կարատեի Եվրոպայի մեծահասակների առաջնությունը (49 երկիր, շուրջ 1000 մարզիկ և պատվիրակ), Բասկետբոլի Եվրոպայի մինչև քսան տարեկանների Բ դիվիզիոնը (21 երկիր, շուրջ 1000 մասնակից), Վոլեյբոլի Եվրոպայի երիտասարդների առաջնության եզրափակիչ փուլը (16 երկիր, 1500 մասնակից) և Տափօղակով հոկեյի աշխարհի Դ դիվիզիոնը (6 երկիր, 200 մասնակից):

Ջերմուկում ավելի քան 10 տարի ընդմիջումից հետո կայացել են համահայկական ձմեռային խաղերը, որոնց մասնակցել է ավելի քան 1 340 պատվիրակ 18 պետության 88 քաղաքից:

2025 թվականին «ՀՀ վարչապետի գավաթի» շրջանակներում կազմակերպվել են դպրոցականների վեց մարզաձևերի մրցաշարեր՝ հեծանվավազքի, սեղանի թենիսի, թիմային խճուղավազքի, լողի, վոլեյբոլի ու բասկետբոլի, որոնց 2025 թվականին մասնակցել է ավելի քան 25 000 մարդ՝ 2,6 անգամ գերազանցելով 2024

թվականի և 3,8 անգամ՝ 2023 թվականի մասնակցության ցուցանիշները: Հանրապետության դպրոցների շուրջ 42%-ը մասնակցել է «Վարչապետի գավաթի» շրջանակներում անցկացվող մրցաշարերից առնվազն մեկին:

Շուրջ 6 500 հեծանիվ ձեռք բերելու և բոլոր դպրոցներին տրամադրելու արդյունքում «ՀՀ վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի մրցաշարին մասնակցել է ավելի քան 4 000 աշակերտ, որը 3 անգամ ավելի է 2024 թվականի ցուցանիշից, իսկ դպրոցների 68% ընդգրկվածությունն ամենաբարձր մասնակցությունն է այս մրցաշարերում:

ՀՀ վարչապետի հովանու ներքո անցկացվել են նաև ուժային կառույցների միջև բանակային խաղերը, որոնց վերջին երկու տարիներին մասնակցել է ուժային և իրավապահ կառույցների 346 աշխատակից՝ կրկնակի գերազանցելով նախորդող տարիների ցուցանիշները:

Անցկացվել են նաև ուսանողական խաղեր՝ 12 մարզաձևից՝ 20 բուհի շուրջ 1 000 ուսանողի մասնակցությամբ:

Ստեղծվել են նախադրյալներ ուսանողական սպորտի զարգացման համար՝ խթանելով բուհերում ուսանողական մարզական ակումբների գործունեությունը, հստակեցնելով ուսանողների մարզական ակտիվության կարևորությունը՝ որպես ուսումնառության մաս:

Տարվա ընթացքում անցկացվել է նաև մարզական մասսայական 4 միջոցառում, որոնց մասնակցել է ավելի քան 38 700 մարդ: «ՀՀ վարչապետի գավաթի» մրցաշարերին, ՀՀ վարչապետի հովանու ներքո ուժային կառույցների միջև անցկացվող ռազմամարզական խաղերին և այլ մարզական մասսայական միջոցառումներին 2025 թվականին մասնակցել է ավելի քան 64 000 մարդ՝ ապահովելով 27%-ով ավելի մասնակցություն 2024 թվականի նկատմամբ:

Առաջին անգամ հաշվարկվել և հրապարակվել է մարզերի և Երևանի մարզական վարկանշային սանդղակը, որով գնահատվում է մարզական ակտիվությունը: Մանդղակի առաջին երեք տեղերը զբաղեցնողները՝ Կոտայքի, Սյունիքի և Լոռու մարզերը, ստացել են համապատասխանաբար 8 մլն ՀՀ դրամ, 5 մլն ՀՀ դրամ և 3 մլն ՀՀ դրամ արժողությամբ մարզագույք:

Ներդրվել է բուհերի և քոլեջների դասախոսների և ուսանողների համար հեծանիվների ապառիկ ձեռքբերման դեպքում տոկոսադրույքները սուբսիդավորելու մեխանիզմ:

Վերջին երկու տարում հանդիսատեսին է ներկայացվել սպորտի մասին երկու ֆիլմ և մեկ սերիալ, որոնք մոտիվացնում են սպորտով զբաղվելը:

Ընթացել են շուրջ 100 սպորտային ենթակառուցվածքին ուղղված աշխատանքներ, որոնց թվում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում՝ ՀՀ մարզերում 9 մարզադպրոցի, Երևանի քաղաքապետարանի կողմից 60 ֆուտբոլի փոքր դաշտի և 2 մարզադպրոցի վերանորոգում, ՀՀ ԿԳՄՍ նախարարության ծրագրերի շրջանակներում շուրջ 16 մարզադպրոցի և մարզահամալիրի վերակառուցում ու կառուցում, ինչպես նաև 10 սթրիթ վոլբոլ մարզահրապարակի կառուցում, որից

2-ական՝ Գեղարքունիքի և Վայոց ձորի, 3-ական՝ Սյունիքի և Տավուշի մարզերում: Թվարկված սպորտային ենթակառուցվածքներին պետք է ավելացնել նաև դպրոցաշինության շրջանակներում ավելի քան 200 դպրոցի մարզադահլիճների և մարզահրապարակների կառուցումն ու հիմնանորոգումը:

Ավարտական փուլում են Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի, Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի, Արմավիր համայնքի Մյասնիկյան բնակավայրի մարզադպրոցի և Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի մարզադպրոցի նոր շենքերի կառուցման աշխատանքները:

Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոցի նոր մարզաբազան, Արթուր Ալեքսանյանի անվան մարզական համալիրը և Արթուր Աբրահամի անվան մարզադպրոցը շինարարության փուլում են:

ՄՇԱԿՈՒՅԹ

Ավելի քան 947 մլն ՀՀ դրամի ներդրումներ են արվել թատերահամերգային հաստատությունների շենքային պայմանների բարելավման, գույքով ու երաժշտական գործիքներով ապահովման համար: Մշակութային հաստատությունների ֆինանսավորման նոր մոդելի ներդրման արդյունքում օպերային թատրոնում 2023 թվականի նկատմամբ կրկնակի ավելացել է ցուցադրվող ներկայացումների քանակը՝ հասնելով 260-ի, կրկնապատկվել է նաև հանդիսատեսի քանակը՝ 90 000-ից հասնելով 180 000 հանդիսատեսի՝ տարեկան ապահովելով եկամուտների մինչև 20% աճ և վարձատրության 37% բարձրացում: Տիկնիկային թատրոնում ներկայացումների քանակն ավելացել է 334-ով՝ հասնելով 831-ի, հանդիսատեսի թիվը՝ 73 000-ից հասել է 119 600-ի՝ տարեկան ապահովելով եկամուտների մինչև 35% աճ և աշխատավարձերի մինչև 50% բարձրացում: Կամերային թատրոնում ներկայացումների քանակն ավելացել է 78-ով՝ հասնելով 243-ի, հանդիսատեսի թիվը՝ 19 342-ից հասել է 29 390-ի՝ տարեկան ապահովելով եկամուտների մինչև 22% աճ և աշխատավարձերի մինչև 50% բարձրացում:

Թատրոնների սեփական եկամուտները 2025 թվականին 2022 թվականի նկատմամբ աճել են 1,75 մլրդ ՀՀ դրամով կամ 1,5 անգամ, ինչի արդյունքում սեփական եկամուտների մասնաբաժինը ֆինանսավորման ընդհանուր ծավալում 1,15 մլրդ ՀՀ դրամից դարձել է 2,9 մլրդ ՀՀ դրամ՝ 25%-ից հասնելով 38%-ի: Համերգային կազմակերպությունների սեփական եկամուտները 2025 թվականին 2022 թվականի նկատմամբ աճել են 745 մլն ՀՀ դրամով կամ 1,5 անգամ, ինչի արդյունքում սեփական եկամուտների մասնաբաժինը ֆինանսավորման ընդհանուր ծավալում 486 մլն ՀՀ դրամից դարձել է 1,23 մլրդ ՀՀ դրամ՝ 12%-ից հասնելով 24,5%-ի:

Կապիտալ ներդրումներ են արվել 19 թանգարանում՝ շենքային պայմանների բարելավման և գույքով հագեցման համար: Մեկնարկել են թանգարանների

հուշանվերային արտադրանքի և վաճառասրահի ենթակառուցվածքի զարգացման աշխատանքները, որոնց շրջանակում հաստատվել է 47,6 մլն ՀՀ դրամ արժողությամբ 10 անուն հուշանվերային արտադրանքի շարք 6 թանգարանի համար: Թանգարանների սեփական եկամուտներում ավելացել են հուշանվերների վաճառքի մասնաբաժինները՝ կազմելով տարեկան միջինում 5,2 մլն ՀՀ դրամ կամ տարեկան ընդհանուր եկամտի 10%-ը և առավելագույնը՝ 32,2 մլն ՀՀ դրամ կամ տարեկան ընդհանուր եկամտի 42,3%-ը:

Թանգարանների սեփական եկամուտները 2025 թվականին 2022 թվականի նկատմամբ աճել են 859 մլն ՀՀ դրամով կամ 112%-ով, ինչի արդյունքում սեփական եկամուտների մասնաբաժինը ֆինանսավորման ընդհանուր ծավալում 770 մլն ՀՀ դրամից դարձել է 1,63 մլրդ ՀՀ դրամ՝ 26%-ից հասնելով 37,9%-ի:

Մշակութային կրթության խթանման համատեքստում աճել են «Դպրոցական բաժանորդային համակարգ» ծրագրի շրջանակում այցելությունները թանգարաններ և թատրոններ՝ հասնելով շուրջ 357 370-ի, որից թանգարաններ է այցելել ավելի քան 159 665, թատերահամերգային կազմակերպություններ՝ 197 705 աշակերտ՝ 2024 թվականի ցուցանիշը գերազանցելով շուրջ 57 370-ով: 2025 թվականի շահառուների թիվը 55,5%-ով գերազանցում է 2023 թվականի նույն ցուցանիշը և ընդգրկում է հանրակրթական դպրոցներում սովորողների 84%-ը:

Արվեստի ոլորտում իրականացվել է 21 մանկապատանեկան կրթամշակութային ծրագիր (ավելի քան 31 000 մասնակից, 2024 թվականի համեմատ աճը՝ 49%): Ներառականության ապահովման շրջանակներում իրականացվել է 7 թիրախային ծրագիր (շուրջ 1 800 շահառու, 2024 թվականի համեմատ 30%-ով աճ): Շարունակվել է դպրոցականների, ուսանողների և երիտասարդների հեղինակային երգի մրցույթ-փառատոնը՝ հաղթող մասնակիցների և մանկավարժների դեպքում 362 500-ական ՀՀ դրամ դրամական պարգևներով, ուսումնական հաստատությունների դեպքում՝ 1,5-ական մլն ՀՀ դրամ:

Գրադարաններում և թանգարաններում իրականացվել է 2409 կրթամշակութային ծրագիր, որոնց մասնակցել է 59 295 այցելու, ինչը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 53 %-ով:

Թանգարանների այցելությունների թիվը կազմել է 1 353 952, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է շուրջ 9%-ով, իսկ 2021 թվականի ցուցանիշը՝ շուրջ 40 %-ով: «Թանգարանների միջազգային օր» և «Թանգարանների գիշեր» համաեվրոպական միջոցառումներին միացել է 108 թանգարան, որոնք սպասարկել են ավելի քան 245 000 այցելուի՝ նախորդ տարվա ցուցանիշը գերազանցելով 54%-ով:

4 թանգարան համալրվել է 16 մշակութային արժեքներով: Ընդհանուր առմամբ թանգարանային հավաքածուների համալրման համար պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 332 մլն ՀՀ դրամ, ինչը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է գրեթե 29 անգամ: Թանգարաններն իրականացրել են շուրջ 18 միջազգային ժամանակավոր ցուցադրություններ: Հայաստանի թանգարանները մասնակցել են նաև մի շարք ցուցադրությունների Օմանում, Ռուսաստանի Դաշնությունում և ԱՄԷ-ում:

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման և հանրահռչակման ուղղությամբ 8 մարզի 30 համայնքում իրականացվել է 11 ծրագիր՝ 15 հազար մասնակցով:

Իրականացվել են 31 հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներ (23-ը՝ ՀՀ պետական բյուջեից հատկացումներով), որոնցից հետևյալ 8-ի աշխատանքներն ավարտվել են՝

- Արագածոտնի մարզի «Ագարակ» հնավայրի վաղ բրոնզեդարյան կացարանների, միջնադարյան համալիրի ամրակայում և ծածկերի կառուցում.

- Լոռու մարզի Լոռի բերդի միջնաբերդի եկեղեցու վերականգնում.

- Լոռու մարզի Լոռի բերդի միջնաբերդի բաղնիքի (մեծ) վերականգնում.

- Լոռու մարզի Ամրակիցի Սբ Նիկոլայ Հրաշագործ եկեղեցու վերականգնում.

- Տավուշի մարզի Կիրանցի Սբ Երրորդություն եկեղեցու վերականգնում.

- Կոտայքի մարզի Բյուրականի Սբ Աստվածածին եկեղեցու վերականգնում.

- Լոռու մարզի Քոբայրավանք վանական համալիրի մատուռների տանիքածածկերի վերականգնում.

- Սյունիքի մարզի Զանգեզուրի դարպասների (Սյունիքի Զանգեր) վերականգնում և նորոգում:

ՀՀ պետական բյուջեից 2025 թվականին հատկացվել է շուրջ 1,4 մլրդ ՀՀ դրամ, որը 2022 թվականի նույն ցուցանիշը գերազանցում է 542%-ով, իսկ հուշարձանների թիվն ավելացել է 14-ով: Կառուցվել է 2 տեղեկատվական զբոսաշրջային կենտրոն (Լոռի բերդում և Զորաց քարերում), ևս մեկի շինարարության աշխատանքները մոտենում են ավարտին (Բջնի ամրոց):

2018-2025 թթ. պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվել են մոտ 40 վանական համալիրի և եկեղեցու վերականգնման աշխատանքներ: Միայն կրոնական բնույթի հուշարձանների վերականգնման համար այս ընթացքում պետությունը ծախսել է ավելի քան 1,6 մլրդ ՀՀ դրամ:

Պետություն-մասնավոր համագործակցությամբ ավարտվել են Երևանի «Կարմիր կամուրջ» հուշարձանի վերականգնման աշխատանքները: Կառավարության որոշմամբ «Արտաշատ մայրաքաղաք» պատմամշակութային արգելոցի տարածքը 5,8 հա-ից դարձել է 83,8 հա: 710 նորահայտ հուշարձան ընդգրկվել է ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում:

Մարզերում մշակութային կյանքի ակտիվացման նպատակով իրականացվել է 14 ծրագիր, որոնցից 7-ը՝ երաժշտական փառատոն՝ ավելի քան 106 300 հանդիսատեսի (նախորդ տարվա մասնակցությունը գերազանցում է 20%-ով) և 3 թատերական փառատոն՝ 14 000 հանդիսատեսի ընդգրկմամբ: Անկախության օրը նշանավորվել է «Ֆեստիվալ» փառատոնով Արմավիրում (շուրջ 20 000 հանդիսատես, 39 տաղավար տնտեսավարողների համար): Թատերահամերգային կազմակերպությունների համար ամրագրվել է մարզային գործունեության պարտադիր լինելու պահանջը: 10 մարզում անցկացվել է 20 կազմակերպության ընդհանուր 92 համերգ և

ներկայացում՝ 71 000 հանդիսատեսի ներգրավմամբ: Թատրոնի միջազգային օրվա և թատերական շաբաթվա շրջանակներում թատրոններ է այցելել մոտ 5 000 հանդիսատես:

Ներդրվել է Հայաստանում համաշխարհային գերաստղերի հյուրընկալման ամենամյա ծրագիրը: Այս շրջանակներում որպես առաջին միջոցառում 2025 թվականին Հայաստանում կայացել է համաշխարհային աստղ Ջենիֆեր Լոպեսի համերգը, որին մասնակցել է 30 000 հանդիսատես, որից 15 000-ը՝ զբոսաշրջիկ: Ընդլայնվել է մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոների և մրցանակաբաշխությունների մասնակցած և մրցանակի արժանացած մշակույթի գործիչների թիվը, որոնք օգտվել են դրամական խրախուսում ստանալու ծրագրից (ամսական դրամական խրախուսումը՝ 130 հազար – 800 հազար ՀՀ դրամ): 2025 թվականի ծրագրի շահառու է դարձել 11 արվեստագետ և 8 կազմակերպություն, հատկացվել է շուրջ 122,9 մլն ՀՀ դրամ: 2024 թվականի համեմատ անհատ շահառուների թիվը գրեթե եռապատկվել է, կազմակերպություններինը՝ կրկնապատկվել, կրկնապատկվել է նաև դրամական խրախուսման բյուջեն:

Հայաստանում կազմակերպվել է 161 համերգ՝ 137 անհատ կատարողների մասնակցությամբ: 22 խմբի և 58 անհատ կատարողի հնարավորություն է ընձեռվել մասնակցելու միջազգային միջոցառումների, որոնց համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 22,5 մլն ՀՀ դրամ:

Կինոյի ոլորտում ընթացել է ակտիվ օրենսդրական աշխատանք: 2025 թվականին 15 ֆիլմ մասնակցել է 58 միջազգային կինոփառատոների և հարթակների՝ շահելով 15 մրցանակ: Հաստատվել են կինոյի ներդրումների մասնակի վերադարձի մեխանիզմները:

Իրականացվել է Գրքի երևանյան միջազգային փառատոնը, որը 2025 թվականին կազմակերպվել է նաև Գյումրիում և Կապանում: Փառատոնն ունեցել է 40 հազարից ավելի այցելու (2024 թվականին՝ 30 հազար այցելու): Երեք օրվա ընթացքում վաճառվել է 18 000 գիրք (2024 թվականի 12 000-ի դիմաց. 33%-ով ավելի): Կազմակերպվել է նաև Հանրապետական գրական մրցույթ, որին մասնակցել է 361 գրող, իսկ Սարոյանի անվան միջազգային մրցույթին՝ 108 գրող՝ 25 երկրից: Աջակցություն է տրամադրվել 10 լեզվով 20 գրքի թարգմանությանը՝ նախորդ տարվա 9 լեզվով 17 գրքի համեմատ:

Հայաստանը մասնակցել է «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրին՝ «Ճարտարապետական ժառանգություն» խորագրով, ավելի քան 210 միջոցառմամբ և «Եվրոպական հնագիտության օրերը» ծրագրին՝ շուրջ 10 միջոցառմամբ: Կազմակերպվել է «Մշակութային խաչմերուկ» երևանյան միջազգային համաժողովը, որին մասնակցել են 18 երկիր և 6 միջազգային կազմակերպություն: Հրայա Աճառյանի ծննդյան 150 և Երևանի Հանրապետության հրապարակի շինարարության մեկնարկի 100-ամյակները ներառվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի Հոչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների 2026-2027 թթ. օրացույցում: 2025 թվականին հանդիսավորությամբ նշվել են ՀԱՖՆ 100-ամյակը, Ավետիք Իսահակյանի ծննդյան

150-ամյակը: Հայաստանը մասնակցել է Վենետիկի ճարտարապետության 19-րդ միջազգային բիեննալին: Հայաստանի տաղավար այցելել է ավելի քան 10 000 մարդ:

2025 թվականին մեկնարկել է Հայաստան-ԵՄ մշակույթի ոլորտում երկխոսությունը: Տեղի է ունեցել ՀՀ-ԵՄ համակազմակերպման ձևաչափով՝ «Մշակույթի հարցերով քաղաքականության շուրջ» խորագրով առաջին աշխատաժողովը: Հայաստանում անցկացվել են Ղազախստանի և Վրաստանի մշակույթի օրեր: Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում տեղի է ունեցել Մեսրոպ Մաշտոցի անվան փողոցի բացումը: 2025 թվականի ընթացքում կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդական քաղաքականության ոլորտներում ստորագրվել է 20 երկկողմ և բազմակողմ փաստաթուղթ այլ պետությունների ու միջազգային կառույցների հետ: 2024 թվականին համանուն ցուցանիշը կազմել է 17, 2023 թվականին՝ 14, 2022 թվականին՝ 13, 2021 թվականին՝ 14: Անցկացվել է Հայաստան-ԵՄ կրթական երկխոսությանը միտված երկու համաժողով:

Ընդունվել են «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին», «Մշակութային աճուրդների կազմակերպման մասին» ՀՀ օրենքները և աճուրդային տների լիցենզավորման կարգը:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

2025 թվականի ընթացքում շուրջ 13 հազար հա-ից ավելի ընդհանուր մակերեսով բնապահպանական և անտառային հողեր, որոնք անհատույց օգտագործման իրավունքով նախկինում տրամադրվել էին իրավաբանական անձի, կրկին հանձնվել են անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումն իրականացնող ՊՈԱԿ-ների օգտագործմանը՝ արդյունավետ և համակարգված կառավարման նպատակով: Այդ թվում՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցից հանված 5 330 հա տարածքը կրկին միացվել է արգելոցին: Ինչպես նաև հողօգտագործման պայմանագրերի լուծման արդյունքում, հիմնականում դատական ակտերով, «Սևան» ազգային պարկին վերադարձվել է 79 հեկտար տարածք:

2025 թվականին շուրջ 846 մլն ՀՀ դրամ բնապահպանական սուբվենցիա է տրամադրվել 12 ազդակիր համայնքի: «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների դիսկերի նվազեցում» ծրագրի և համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման գործընթացի շրջանակներում համաֆինանսավորվել են 87 շենքի (21 բնակելի և 66 հասարակական) էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքները:

Իրականացվել են 759,6 հա անտառվերականգնման ու անտառապատման աշխատանքներ, որը նախորդ տարվա ցուցանիշից ավելի է 422,2 հա-ով: Աճեցվել է շուրջ 1 մլն փակ արմատային համակարգով տնկանյութ, հիմնադրվել 3,4 հա տնկարան:

Գործարկվել է էկոպարեկային ծառայության Սյունիքի մարզային վարչությունը: Շարունակվել են Տավուշի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզային վարչությունների թափուր հաստիքների համալրման աշխատանքները: Վերանորոգվել են 4

տեղամասի շենքեր՝ համալրվելով համակարգչային և գույքային կահավորումներով: 24/7 ռեժիմով պահպանություն իրականացնելու նպատակով ձեռք է բերվել 78 գործառնական նշանակության ավտոմեքենա՝ կահավորված մորթյալ և հակահրդեհային համակարգերով: Արդյունքում Էկոպարեկային ծառայության կողմից արձանագրված բնապահպանական իրավախախտումների թիվն աճել է շուրջ 21%-ով, ընդ որում՝ համալրված Սյունիքի վարչության կողմից ապահովվել է շուրջ 126% աճ:

Արարատյան դաշտում լուծարվել է 8 և կոնսերվացվել 25 խորքային հոր՝ ապահովելով տարեկան շուրջ 34,5 մլն մ³ ջրախնայողություն, որը վերջին հինգ տարվա ընթացքում առավելագույն ցուցանիշն է: Արդեն իսկ արձանագրվել է դրական ազդեցություն Արարատյան արտեզյան ավազանի վերականգնման վրա:

Արարատյան դաշտի վերականգնվող ստորերկրյա ջրային ռեսուրսների ծավալը օրենքով սահմանված տարեկան 1,1 մլրդ մ³-ից նվազեցվել է 926 մլն մ³/տարի, որը բաշխվել է Արարատյան դաշտի ջրօգտագործողների միջև՝ ըստ ջրօգտագործման գերակա ուղղությունների և չափաքանակների: Ձկնաբուծական նպատակով տրված (խորքային հորերից) ջրառը կազմել է տարեկան մոտ 802 մլն մ³, նոր կարգավորումներով այն կազմելու է 509 մլ մ³:

Օրենսդրական կարգավորման արդյունքում պետական արգելոցների տարածքներից ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը կիրականցվի բացառապես այն դեպքերում, երբ ջրային ռեսուրսի օգտագործումը կենսական անհրաժեշտություն է խմելու, կենցաղային կամ ոռոգման համար, և երբ այլընտրանքային ջրային աղբյուրներ տվյալ տարածքում առկա չեն:

Սևանա լճի առափնյա գոտում տեղադրվել է ժամանակակից ավտոմատ օդերևութաբանական կայան: Արդիականացվել է ավազանի 2 հիդրոլոգիական դիտակետ:

Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացմանն ուղղված գործընթացի շրջանակներում բաց է թողնվել շուրջ 836 հազար հատ ամառային և գեղարքունի ենթատեսակների մանրածուկ՝ նախորդ տարվա շուրջ 390 հազար հատի համեմատ: Սահմանվել է սիգի արդյունագործական որսի 1 123 տոննա չափաքանակ, որը նախորդ տարվա համեմատ ավելի է 436 տոննայով: Փաստացի որսը կազմել է 1 102,8 տոննա: Վճարվել է շուրջ 72,5 մլն ՀՀ դրամ, որը նախորդ տարվա ցուցանիշից ավելի է 28,4 մլն ՀՀ դրամով: 2023 թվականի հունվարի 2-ից սահմանվել և 6-ամսյա պարբերականությամբ երկարաձգվում է սիգի ձկնկիթի արտահանման արգելքը:

Վերանայվել են կենդանական աշխարհի օբյեկտների բնօգտագործման վճարի դրույքաչափերը՝ 2026 թվականից ավելանալով մոտ 2 անգամ, իսկ սիգի 1 կգ-ի համար՝ մոտ 3 անգամ՝ սահմանելով 200 ՀՀ դրամ գործող 65 ՀՀ դրամի դիմաց:

Սևանա լճում բացահայտվել է ապօրինի ձկնորսության 18, ապօրինի խեցգետնորսության 12 և ձկնորսական կանոնների խախտման 41 դեպք:

Վայրի բնություն է բաց թողնվել բնության մեջ անհետացած համարվող ազնվացեղ եղջերուների ընդհանուր 9 առանձնյակ, և արձանագրվել է բնության մեջ առաջին ձագի ծնունդը:

Գույքագրման ենթակա 201 բնության հուշարձանից գույքագրվել է 146-ը, որից 65-ը՝ 2025 թվականի ընթացքում: Կոտայքի մարզի գույքագրված հուշարձանների համար կազմվել են անձնագրեր:

Ընդհանուր 44 418 խմ պահեստային թափուկ վառելափայտ է տրամադրվել անտառամերձ բնակավայրերի 8 441 շահառուի, որը նախորդ տարվա համեմատ ավելի է շուրջ 1 000 շահառուով:

Առաջին անգամ անօդաչու թռչող սարքերի միջոցով իրականացվել են կենսաբանական պայքարի միջոցառումներ «Հայաստան» ՊՈԱԿ-ի 9 հազար հա հիվանդություններով և վնասատուներով վարակված անտառածածկ տարածքներում:

Ոլորտի կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեությունից մուտքերը 2024 թվականի համեմատ աճել են շուրջ 185,3 մլն ՀՀ դրամով կամ 6,3%-ով, իսկ 2017 թվականի համեմատ՝ շուրջ 2,2 մլրդ ՀՀ դրամով կամ 257%-ով: Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումն իրականացնող կազմակերպությունների գծով ձեռնարկատիրական գործունեությունից մուտքերը 2024 թվականի համեմատ աճել են շուրջ 79,5 մլն ՀՀ դրամով կամ 12,5%-ով, իսկ 2017 թվականի համեմատ՝ շուրջ 431 մլն ՀՀ դրամով կամ 152%-ով:

Մթնոլորտային օդի մոնիթորինգի 2 ավտոմատ դիտակայան է տեղադրվել Երևան քաղաքում: Միջազգային չափանիշներին են համապատասխանեցվել մթնոլորտային օդի որակի գնահատման, աղտոտվածության չափման կայանների տեղադիրքերի և քանակների միասնական չափանիշները, աղտոտվածության չափման մեթոդաբանությունը, հանրությանը տեղեկություն տրամադրելու ընթացակարգերը:

«Զվարթնոց» և «Շիրակ» միջազգային օդանավակայաններում ավարտին են հասցվել բոլոր օդերևութաբանական կայանների փոխարինման աշխատանքները՝ դրանք դարձնելով տարածաշրջանում գերժամանակակից օդերևութաբանական համակարգերով հագեցած լավագույն օդանավակայանները:

COP17-ի համաժողովի պատշաճ կազմակերպման նպատակով շուրջ 5,8 մլրդ ՀՀ դրամ է հատկացվել: 2025 թվականի ընթացքում կայացած խոշոր բնապահպանական միջոցառումների ընթացքում Հայաստանի կողմից իրականացվել է 20-ից ավելի հարակից միջոցառում:

Հայաստանը դարձել է Բնության պահպանության միջազգային միության անդամ: Միջազգային բնապահպանական կազմակերպությունների աջակցությամբ իրականացվել է 39 ծրագիր՝ 132 մլն ԱՄՆ դոլար բյուջեով:

ԱԺ-ի կողմից 1-ին ընթերցմամբ հավանության է արժանացել «Կլիմայի մասին» ՀՀ առաջին օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը: Ընդունվել է «Փարիզյան համաձայնագրի ներքո ՀՀ 2026-2035 թթ. ազգային մակարդակով սահմանված հանձնառությունները և դրա իրականացման ծրագիրը»: Հաստատվել է

մթնոլորտային օդի պահպանության բնագավառում 2025-2030 թթ. համալիր միջոցառումների ծրագիրը:

Սահմանվել են թափոնների հեռացման վայրերը տնօրինողների կողմից մոնիթորինգի իրականացման պարտավորություն և տուգանք՝ աղբավայրը տնօրինողների կողմից աղբավայրի մոնիթորինգի իրականացման կարգը խախտելու համար, վտանգավոր թափոնների պահման կամ հեռացման՝ վնասագերծման, ոչնչացման, թաղման կամ այլ եղանակով տեղադրման համար նախատեսված տեխնոլոգիաներ կիրառող վտանգավոր թափոնների պոլիգոնների նախագծման, կառուցման, շահագործման և դրանց փակման և տարածքի վերականգնման պահանջները:

ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

«Gallup» կենտրոնի կողմից 2025 թվականին հրապարակված «Օրենք և կարգ» զեկույցում 140 երկրից/տարածքից «Օրենքի և կարգի» ցուցանիշը 2024 թվականի համար 84% է, ինչը 2023 թվականի համեմատ բարձր է 1 միավորով, իսկ բնակիչների՝ իրենց անվտանգ զգալու տեսանկյունից Հայաստանը գնահատվել է 85%:

«Freedom House» հետազոտական կազմակերպության «Ազատությունը համացանցում 2025» զեկույցի համաձայն՝ Հայաստանը 100 հնարավոր միավորից ստացել է 72 միավոր (2023 թվականի զեկույցի համեմատ 2 միավորով պակաս է)՝ շարունակելով մնալ համացանցի ազատության ցուցիչով «ազատ» պետությունների ցանկում:

«Լրագրողներ առանց սահմանների» միջազգային իրավապաշտպան կազմակերպության մամուլի ազատության համաթվում Հայաստանը 180 երկրի շարքում զբաղեցնում է 34-րդ հորիզոնականը՝ նախորդ տարվա համեմատ դիրքերը բարելավելով 9 հորիզոնականով: Այս համաթվով Հայաստանը շարունակում է մնալ առաջատարը հարավկովկասյան տարածաշրջանում:

Նոր թափ են ստացել նոր Սահմանադրության մշակման աշխատանքները: Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը գումարել է 6 նիստ, որոնց ընթացքում քննարկվել և որոշումներ են կայացվել Ազգային ժողովի գործառույթների, նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության, ինքնավար մարմինների, դատախազության համակարգի, Կառավարության կազմավորման և հրաժարականի վերաբերյալ մի շարք հարցերի շուրջ:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2023-2025 թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում 2025 թվականին իրականացվել են վերապատրաստումներ իրավահավասարության ապահովման, խտրականության արգելքի, ատելության խոսքի դեմ պայքարի թեմաներով դատախարակական համակարգի աշխատակիցների, ուսուցիչների, բուժաշխատողների և այլ մասնագետների համար:

Հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ դատական հայցերի համար քաղաքացիները ազատվել են պետական տուրքի վճարման պարտականությունից:

ԱԺ-ի կողմից ընդունվել է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման հարաբերությունների բարեփոխման փաթեթը:

ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

ԱԺ են ներկայացվել փաթեթներ, որոնցով առաջարկվում է նախատեսել քաղաքացիական և վարչական գործերի և բողոքների քննության հստակ ժամկետներ և գրավոր ընթացակարգեր: Նախատեսվել են նաև դատավորի փոփոխության դեպքում գործերի քննությունն ընդհատման պահից շարունակելու ընդհանուր կանոն, ինչպես նաև նոր դատավորի կողմից ապացույցների հետազոտման առավել ճկուն ընթացակարգեր: Վարչական մարմինները մինչև 300 000 ՀՀ դրամ հանրային իրավական դրամական պահանջներով կայացված դատական ակտերը Վերաքննիչ դատարանում բողոքարկելու իրավունք այլևս չեն ունենա, ինչը 20-30%-ով կթեթևացնի Վերաքննիչ վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը:

Հուլիսի 1-ից գործում է ընտանեկան որոշ գործերով պարտադիր հաշտարարությունը, և գործարկվել է հաշտարարության էլեկտրոնային e-mediation.am համակարգը: 2025 թվականի հուլիսի 1-ից մինչև տարեվերջ այդ համակարգի միջոցով քաղաքացիները ներկայացրել են հաշտարար նշանակելու վերաբերյալ ավելի քան 700 դիմում, որոնց ավելի քան 75%-ն ավարտվել է, իսկ ավարտված գործերի ավելի քան 26% դեպքերում կողմերի միջև կնքվել է հաշտության համաձայնություն: Երկրորդ կիսամյակում ընտանեկան գործերով դատարաններում ստացվել է 660 (հայցա)դիմում, որոնցից վարույթ է ընդունվել 531-ը, մինչդեռ 2024 թվականի նույն ժամանակահատվածում ստացվել է 1 476 (հայցա)դիմում, որոնցից վարույթ է ընդունվել 1 234-ը. վարույթ ընդունվածների քանակը նվազել է մոտ 57 %-ով:

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը վարել է 307 արբիտրաժային գործ, որոնցից 1-ը՝ միջազգային, և 165՝ հաշտարարության գործ, որոնցից 15-ը՝ միջազգային: Միջազգային գործերն ընդգրկում են կողմեր ԱՄՆ-ից, Գերմանիայից, Բելգիայից, Հնդկաստանից, Ղազախստանից, ՌԴ-ից, Իրանից, Վրաստանից, Էրիտրեայից, Հյուսիսային Մակեդոնիայից, Լիբանանից:

Դեռևս 2017 թվականին սահմանված և մինչև 2026 թվականը գործող՝ միակ բնակարանի իրացման համար պարտապանին վերադարձման ենթակա նվազագույն գումարը (4,9 մլն ՀՀ դրամ) վերանայվել և սահմանվել է 7,8 մլն ՀՀ դրամ:

«Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին. Փուլ II» ԵՄ-ի հետ ֆինանսական համաձայնագրի շրջանակներում ներկայացված՝ դատաիրավական և հակակոռուպցիոն ոլորտի բարեփոխումների արդյունքների վերաբերյալ ինքնագնահատման զեկույցի հիման վրա ԵՄ-ն գրանցել է

սահմանված թիրախների 100% կատարողական, և ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 5,5 մլն եվրո գումար:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Հակակոռուպցիոն կոմիտեում 2025 թվականի ընթացքում ավարտված (դատարան ուղարկված և կարճված) քրեական վարույթներով պետությանը և համայնքներին պատճառված գույքային վնասի չափը կազմել է շուրջ 8,3 մլրդ ՀՀ դրամ: Պետությանը և համայնքներին պատճառված գույքային վնասից փաստացի դրամական տեսքով վերականգնվել է շուրջ 2,2 մլրդ ՀՀ դրամ, որից շուրջ 1,5 մլրդ ՀՀ դրամ՝ ավարտված քրեական վարույթներով, շուրջ 720,7 մլն ՀՀ դրամ՝ անավարտ քրեական վարույթներով:

Քննչական կոմիտեում 2025 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քննվել է 643 քրեական վարույթ: Ավարտված քրեական վարույթներով՝ կոռուպցիոն բնույթի հանցագործություններով պետությանը և համայնքներին պատճառված վնասը կազմել է շուրջ 7,9 մլրդ ՀՀ դրամ, որից վերականգնվել է շուրջ 895 մլն ՀՀ դրամը, արգելանք է դրվել շուրջ 156 մլն ՀՀ դրամ արժողությամբ գույքի վրա: Իրավաբանական անձանց պատճառված վնասը կազմել է շուրջ 18 մլն ՀՀ դրամ, որից վերականգնվել է 79 հազար ՀՀ դրամը: Քննչական կոմիտեի վարույթում քննվել է փողերի լվացման 182 քրեական վարույթ, որից 17-ն ուղարկվել է դատարան:

2025 թվականի ընթացքում Քննչական կոմիտեում քննված՝ ավարտված և անավարտ վարույթներով պատճառված վնասից վերականգնվել է շուրջ 47,1 մլրդ ՀՀ դրամը, որից շուրջ 35,2 մլրդ ՀՀ դրամը՝ տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում քննվող վարույթներով:

Տնտեսական անվտանգության և կոռուպցիայի հակազդման ուղղությամբ կատարված աշխատանքների շրջանակներում ԱԱԾ-ի կողմից բացահայտված հանցագործությունների դեպքերով ՀՀ քննչական մարմիններում նախաձեռնվել է ընդհանուր առմամբ 232 քրեական վարույթ, որից 81-ը՝ կոռուպցիոն բնույթի: Ուսումնասիրվել են 13 պաշտոնատար անձի, ինչպես նաև նրանց մերձավոր ազգականների անվամբ հաշվառված անշարժ և շարժական գույքերի ձեռքբերման օրինականությունը, դրամական միջոցների շրջանառությունը, ինչպես նաև իրավաբանական կազմակերպություններում մասնակից հանդիսանալու հանգամանքը, որոնց արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցվել է ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն:

2025 թվականի ընթացքում Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը նախաձեռնել է 157 ուսումնասիրություն: Դատարան է ներկայացվել 42 հայցադիմում: Այդ հայցադիմումներից ներկայումս քննվում է 38-ը, որոնցով ընդհանուր պահանջվում է հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 230 անշարժ գույք, 68 շարժական գույք, 76 իրավաբանական անձանցում մասնակցություն. դրամական պահանջը կազմում է

շուրջ 31,5 մլրդ ՀՀ դրամ: 2025 թվականին ներկայացված հայցադիմումների ընդհանուր հայցագինը կազմում է շուրջ 36 մլրդ ՀՀ դրամ: 2025 թվականին կնքվել է հաշտության մեկ համաձայնություն, որի արդյունքում որպես ապօրինի ծագում ունեցող գույք՝ Հայաստանի Հանրապետության օգտին բռնագանձման է ենթակա շուրջ 87,6 մլն ՀՀ դրամ, որից արդեն բռնագանձվել է շուրջ 65,7 մլն ՀՀ դրամը:

2025 թվականին օրինական ուժի մեջ է մտել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործով առաջին վճիռը: Վճռի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքն է գրանցվել շուրջ 300,6 մլն ՀՀ դրամ (շուրջ 750 հազար ԱՄՆ դոլար) միջին շուկայական արժեքով գույքի նկատմամբ: Վերականգնված միջոցների միասնական հաշվին փոխանցվել է շուրջ 21,5 մլն ՀՀ դրամ:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ դատարաններում քննվող հայցերի թիվը 155 է, որոնց ընդհանուր հայցագինը կազմում է ավելի քան 595 մլրդ ՀՀ դրամ: Այդ հայցերով Դատախազությունը պահանջում է հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 324 շարժական, 1 463 անշարժ գույք, 440 իրավաբանական անձանցում մասնակցություն, դրամական պահանջը կազմում է շուրջ 518,4 մլրդ ՀՀ դրամ:

Դատախազության կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու բացառիկ լիազորության շրջանակներում պետության (համայնքի) սեփականության իրավունքն է վերականգնվել, ինչպես նաև պետության (համայնքի) փաստացի տիրապետման է վերադարձվել 124 գույքային միավոր՝ շուրջ 66,9 մլրդ ՀՀ դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, այդ թվում՝ մանկապարտեզներ, մշակույթի տուն, մարզադաշտ, բնության հուշարձան, պուրակներ, հողատարածքներ և դրամական միջոցներ:

«Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» միջազգային հեղինակավոր կազմակերպության հրապարակած՝ Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՀ) 2025 թվականի վարկանիշի համաձայն՝ Հայաստանը 46 միավորով զբաղեցրել է 65-րդ հորիզոնականը, որը ավելի բարձր է ԿԸՀ համաշխարհային միջին ցուցանիշից:

Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների վերաբերյալ ՏՀԶԿ Ստամբուլյան գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի առաջընթացի զեկույցով ներկայացված կատարողական 9 դաշտից 6-ում գրանցվել է էական առաջընթաց:

2025 թվականի ընթացքում իրականացվել են մեծածավալ աշխատանքներ ԵԽ-ի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) կողմից Հայաստանի գնահատման 5-րդ փուլի զեկույցով ներկայացված 22 հանձնարարականի կատարման ուղղությամբ: Հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ ԳՐԵԿՈ-ի քարտուղարությանն է ներկայացվել իրավիճակային զեկույց:

Հունիսին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի ԲՀԿ կոալիցիայի կողմից ներկայացված Թափանցիկության հանձնառությունը՝ դառնալով Կոնվենցիայի 42-րդ մասնակից պետությունը:

Հստակեցվել են պետական սեփականություն դարձող նվերների տնօրինման հետ կապված կարգավորումները, նվերների ընդունումից մինչև պետությանը փոխանցված

նվերների տնօրինման գործընթացը: Ներդրվել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգ հանրային իշխանության մարմիններում, որոշակի ոլորտներում գործունեություն իրականացնող կամ պետական բյուջեից սուբսիդիաներ կամ դրամաշնորհներ ստացած պետական և համայնքային կազմակերպություններում:

ԱԺ են ներկայացվել օրենսդրական փոփոխությունների նախագծեր, որոնցով նախատեսվում է իրականացնել բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն Կառավարության անդամների, վերջիններիս տեղակալների և խորհրդականների համար:

2025 թվականի ընթացքում իրականացվել է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի 4 նիստ: 2025 թվականին գործարկվել է Հակակոռուպցիոն մոնիթորինգի հարթակը: Հանրային իրազեկվածության բարձրացման նպատակով կազմակերպվել է «Կոռուպցիան իմ աչքերով» թեմայով տեսահոլովակների մրցույթ 10-ից 12-րդ դասարանի աշակերտների շրջանում: Ներկայացված 200 տեսահոլովակից հաղթող է ճանաչվել 4-ը:

ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն է ներկայացվել շուրջ 53 200 իրական շահառուի հայտարարագիր:

Ազդարարման համակարգում (azdararir.am) 2025 թվականի ընթացքում գրանցվել է 600 ազդարարում, իսկ ապրիլին գրանցվել է ազդարարումների ամսական ամենաբարձր ցուցանիշը՝ 75 ազդարարում:

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Միջին օրական հաշվարկով քրեակատարողական հիմնարկներում պահվել է 2 804 անձ, որոնցից 1 360-ը՝ դատապարտյալ, իսկ 1 444-ը՝ կալանավորված: 2024 թվականի համեմատությամբ այս թիվն ավելացել է 197-ով: Տարեվերջի դրությամբ վերջին հինգ տարվա մեջ առաջին անգամ դատապարտյալների թիվը 70-ով ավելի է եղել կալանավորված անձանց թվից:

Դեկտեմբերի 31-ից դադարեցվել է ՀՀ ԱՆ Դատապարտյալների հիվանդանոց քրեակատարողական հիմնարկի գործունեությունը: «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերությունում գործարկվել է հոգեբուժական բժշկական օգնության և սպասարկման բաժանմունք, որտեղ իրականացվում է քրեակատարողական հիմնարկներում պահվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նեղ մասնագիտական և որակյալ բժշկական սպասարկում: Արմավիր քրեակատարողական հիմնարկում բացվել է նաև «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ժամանակակից բուժասրբավորումներով համալրված կենտրոնը՝ 95 մահճակալով:

Քրեակատարողական ծառայողների ատեստավորմանը մասնակցել է 224 ծառայող, որից 186-ը հաղթահարել է ատեստավորման բոլոր փուլերը: Ատեստավորումը հաղթահարած քրեակատարողական ծառայողների վարձատրության չափն ավելացել է միջինը 44 %-ով:

Քրեակատարողական հիմնարկներում բարելավվել են դատապարտյալներին պահելու պայմանները: Մասնավորապես՝ վերանորոգվել է 158 օբյեկտ՝ խուց, կացարան, աշխատասենյակ, լոգասենյակ, երկարատև և կարճատև տեսակցության սենյակ և այլն (2024 թվականի 114 օբյեկտի համեմատ):

ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկում գործարկվել է գողման տարածք, որտեղ դատապարտյալների կողմից պատրաստված ձգաձողերը, սեղանները և աթոռները բաշխվել են քրեակատարողական հիմնարկներին: «Սևան», «Վանաձոր» և «Արթիկ» քրեակատարողական հիմնարկներում վերանորոգվել և հիմնվել են գողման և մետաղապլաստե դուռ-պատուհանի արտադրության նոր արտադրամաս, դասասենյակներ, ձեռք են բերվել նոր սարքավորումներ:

ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից ձեռք են բերվել անվտանգության ռենտգեն զննման 1 սարք՝ սայլակների և ուղեբեռների համար, թույլ դոզավորված ռենտգենային ալիքներով սարքեր՝ նախատեսված զննության համար, առանց շփման, ոչ իոնացնող միկրոմիլիմետրային ալիքներով ակնթարթային սկաներներ՝ թաքնված իրերի ավտոմատ հայտնաբերման համար, ձեռքի ռենտգենային ստուգման 3 սարք՝ թաքստոցներում իրերի հայտնաբերման համար:

2025 թվականին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել է 170 անձ, ինչը 32-ով ավելի է 2024 թվականի ցուցանիշից:

Ազատագրվման ձևով պատիժ կրող և կալանավորված անձանց համար իրականացվել են կրթական ծրագրեր: Մովորելու իրավունքից օգտվել է մինչև 19 տարեկան 23 անձ և 19 տարեկանից բարձր՝ 98 անձ: Իրականացվել են դասընթացներ՝ լեզուների, համակարգչային հմտությունների, արհեստագործության և այլ թեմաներով, որոնց մասնակցել է 256 անձ, որոնցից 190-ն ավարտել է դասընթացները և ստացել հավաստագիր:

Անազատության մեջ պահվող անձանց փոխադրումներն իրականացնելու նպատակով ձեռք է բերվել և մատակարարվել 4 նոր տրանսպորտային միջոց, որոնք ապահովված են վթարային ելքով, հովացման և ջեռուցման համակցված օդափոխության համակարգով, բռնակներով և ամրագոտիներով: Տրամադրվել է դատապարտյալների նոր նմուշի հանդերձանքը, իսկ հիգիենայի պարագաները դատապարտյալներին տրամադրվել են շաբաթական կտրվածքով՝ անհատական փաթեթավորմամբ:

Պրորբացիայի ծառայությունը ձեռք է բերել 759 էլեկտրոնային հսկողության սարքավորում, որի արդյունքում մատակարարվել է 459 էլեկտրոնային հսկողության սարքավորում (տնային կալանքի համար՝ 30 և վարչական հսկողության համար՝ 429), ինչպես նաև 300 վարչական հսկողության սարքավորում:

Պրորբացիայի ծառայությունում առկա 19 718 վարույթներով հաշվառված անձանցից կրկնահանգագործություն կատարել է 286 անձ (մոտ 1,4%), իսկ 2024 թվականին ծառայությունում եղած 12 579 վարույթներով հաշվառված անձանցից կրկնահանգագործություն կատարած անձանց թիվը կազմել է 193 անձ (մոտ 1,5%):

Շահառուների համար վերասոցիալականացման և վերականգնողական ծրագրերի շրջանակներում իրականացվել են 238 մշակութային, կրթական, կրոնական,

սպորտային և այլ միջոցառումներ, որոնցում ներառվել է 1 224 շահառու, իսկ մասնագիտական վերապատրաստում է անցել 36 շահառու:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Հանրային կառավարման բարեփոխումների շրջանակում Կառավարության աշխատակարգում կատարված փոփոխությամբ ներդրվել է ռազմավարական կառավարման նոր համակարգ: Այն սահմանում է ռազմավարական փաստաթղթերի հստակ աստիճանակարգություն, խմբավորում է ռազմավարական պլանավորման տասնյակ փաստաթղթերը դոկտրինի և 6 ռազմավարության ներքո: Սահմանվել է ռազմավարական կառավարման միասնական մեթոդաբանություն, ապահովվել ռազմավարական փաստաթղթերի կապը ֆինանսական պլանավորման և Կառավարության ծրագրի հետ: Հնարավորություն է ստեղծվել ներդնելու ռազմավարությունների իրականացման ու մշտադիտարկման ինստիտուցիոնալ ընթացակարգեր: Ստեղծվել է քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի ու զարգացման գործընկերների համար ինստիտուցիոնալ հնարավորություն:

Նոր աշխատակարգին համահունչ՝ Կառավարությունը 2026 թվականի հունվարի 8-ի որոշմամբ հաստատել է Հայաստանի տնտեսական և ինստիտուցիոնալ վերափոխման դոկտրինը, որը սահմանում է պետության զարգացման տեսլականը՝ խարսխված կրթության, պետականության վերաբնորոման, խաղաղության ամրապնդման օրակարգերի վրա: Դոկտրինի ներքո մեկնարկվել են նոր համակարգով նախատեսված 6 ռազմավարության մշակման աշխատանքները:

2025 թվականի ընթացքում հաստատվել է 3 ռազմավարություն և ռազմավարական ծրագիր՝ գեներային քաղաքականության, արտահանման խթանման և թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ոչ բժշկական նպատակներով գործածման և ապօրինի շրջանառության դեմ պայքարի ուղղություններով:

ԹՎԱՅԻՆԱԳՐՈՒՄ, ԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՆՏԵՐՆԵՏԻՆԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ ԵՎ ԿԱՐԿԱՆՈՒՄ ԴԱՏԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԿԱՐԿԱՆՈՒՄ ԿՈՂՄԻՑ ԻՆՏԵՐՆԵՏԻՆԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ ԵՎ ԿԱՐԿԱՆՈՒՄ ԴԱՏԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԿԱՐԿԱՆՈՒՄ

Համաշխարհային բանկի «Համաշխարհային թվային տնտեսություն» 2025 թվականի զեկույցում Հայաստանը դասվել է թվային տնտեսության շատ բարձր ցուցանիշ ունեցող երկրների խմբում: «ՏՀԶԿ/ԵՄ ՄԻԳՄԱ» նախաձեռնության կողմից իրականացված հետազոտության համաձայն՝ թվային վերափոխման բոլոր ցուցանիշներով Հայաստանն առաջ է անցել ԵՄ-ի ասոցացման և թեկնածուի կարգավիճակ ունեցող երկրների միջին ցուցանիշից:

2025 թվականին ամրապնդվել են թվային վերափոխման իրավական հիմքերը: ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են «Հանրային տեղեկությունների մասին»,

«Կիրեռանվտանգության մասին», «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» և «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքները:

Շարունակվել է թվային նույնականացման համակարգի զարգացումը: «Ես եմ» թվային նույնականացման ազգային հարթակ մուտքերի քանակը կազմել է 3 619 676, որից ID քարտով գործարքներ՝ 958 640, mID -ով գործարքներ՝ 1 982 682, և էլ. փոստով՝ 678 354: Միաժամանակ «Իմ ԱյԴի» ՓԲ ընկերությունը հավատարմագրվել է որպես էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոն:

Շարունակվել են աշխատանքները կյանքի իրադարձությունների թվայնացման ուղղությամբ, և տարեվերջին Ծառայությունների միասնական հարթակն ունեցել է ավելի քան 3 900 օգտատեր: Հարթակում ներդրվել է օգտատերերի գոհունակության գնահատման համակարգը, և գործարկվել է «Հենակետ» միասնական դիզայնի գործիքը:

«Ունենալ և վարել ավտոմեքենա» կյանքի իրադարձության շրջանակներում թվայնացվել են վարորդական վկայականներն ու հաշվառման վկայագրերը, և քաղաքացին այլևս պարտավոր չէ կրել դրանց ֆիզիկական բնօրինակները ՀՀ տարածքում երթևեկելիս: Ապահովվել է տրանսպորտային միջոցի առք ու վաճառքի, պետհամարանիշների էլեկտրոնային աճուրդի թվայնացում, և կատարվել է առք ու վաճառքի շուրջ 580 թվային գործարք:

«Բիզնեսի և սեփականության իրավունքի պաշտպանություն» կյանքի իրադարձության շրջանակներում գործարկվել են Բիզնես ռեգիստրի նոր համակարգը և էլեկտրոնային հավատարմագրման ավտոմատացման համակարգը:

Քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվությունները տրամադրվել են էլեկտրոնային «Urban.e-gov.am» համակարգի միջոցով, և մուտքագրվել է շուրջ 97 660 դիմում:

Թվայնացվել է շրջակա միջավայրի ոլորտի 12 թույլատվական փաստաթղթի տրամադրումը՝ թվայնացված ծառայությունների ընդհանուր թիվը հասցնելով 24-ի (83%): Մասնավորապես՝ սեպտեմբերի 1-ից ջրօգտագործման թույլտվության տրամադրման գործընթացն իրականացվում է բացառապես էլեկտրոնային եղանակով: 24/7 ռեժիմով գործում է փաստացի ջրօգտագործման առցանց հաշվառման հարթակը, որին միացված են շուրջ 3 200 ջրառի կետից 1 463-ը և էկոլոգիական թողքի 6 կետ: Ջրածավալների գերազանցումների, խախտումների և տվյալների դադարեցման վերաբերյալ ծանուցումները ջրօգտագործողներին ուղարկվում են ինքնաշխատ:

Ստեղծվել է ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման էլեկտրոնային շտեմարան: Գործարկվել է մթնոլորտ արտանետումների և վտանգավոր թափոնների կառավարման ոլորտի թույլատվական և հաշվետվողական ծառայությունների թվային համակարգը:

Սեպտեմբերի 1-ից գործարկվել է ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային հարթակը, որի միջոցով տրամադրվել է 145 թույլտվություն:

Իրականացվել են նոր բազմաֆունկցիոնալ Ազգային գեոպորտալի ներդրման աշխատանքները: Նոր գեոպորտալում ներկայումս արտացոլված են 30-ից ավելի թեմատիկ քարտեզագրական շերտեր, մարզերի և Երևան քաղաքի բազային քարտեզագրական շերտերը (ջրագրություն, ճանապարհային ցանց, ռելիեֆ): Ավարտվել են 780 բնակավայրի կադաստրային քարտեզների ուղղման աշխատանքները (որոնցից 280-ը՝ 2025 թվականի ընթացքում), մշակվել է ինքնաշխատ համեմատման գործիք՝ գրանցման և քարտեզագրման տվյալներում անհամապատասխանությունների հայտնաբերման նպատակով:

Իրականացվել են պետական սեփականություն հանդիսացող գույքի աճուրդային եղանակով օտարման և վարձակալության տրամադրման գործընթացի էլեկտրոնային համակարգի ամբողջությամբ բարեփոխում և գործարկում:

«**Վճարել հարկերը**» կյանքի իրադարձության շրջանակներում մշակվել է ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման համակարգի նոր դիզայնը, ստեղծվել է տվյալներն ինքնաշխատ լրացնելու հնարավորություն, և իրազեկման նպատակով կազմակերպվել է 463 միջոցառում՝ շուրջ 21 600 մասնակցով: Պարզեցվել է ՀՀ հարկային ռեզիդենտի կարգավիճակի հաստատման մասին տեղեկանքների տրամադրումը:

«**Ստանալ քաղաքացիություն և կացության իրավունք**» կյանքի իրադարձության շրջանակներում թվայնացվել են քաղաքացիության շնորհման կամ դադարի դիմումների ընդունման և գործերի վարման, փաստացի բնակության հիմքով հաշվառում ձեռք բերելու և այն փոխելու գործընթացները: Հիմնվել է միգրացիայի և քաղաքացիության ծառայության գանգերի կենտրոնը, և ներդրվել են թվային հերթագրման համակարգեր ՆԳՆ-ի մատուցած բոլոր ծառայությունների համար:

«**Աշխատանք և կարիերա**» կյանքի իրադարձության շրջանակներում ներդրվել է աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգը: 2025 թվականի հուլիսի 1-ից մինչև տարեկերջ 400-ից ավելի աշխատանքային պայմանագրեր կամավորության սկզբունքով կնքվել են համակարգի միջոցով:

«**Երեխայի ծնունդ**» կյանքի իրադարձության ներքո թվայնացվել է երեխայի ծննդի գրանցման գործընթացը: Թվայնացվել են նաև Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մյուս ծառայությունները՝ ամուսնություն, անվան փոփոխություն, մահվան գրանցում:

«**Ստանալ կրթություն**» կյանքի իրադարձության համատեքստում լավարկվել է դպրոցի ընդունելության էլեկտրոնային գործընթացը, որի արդյունքում հետագծելի է դարձել անձի կրթական ճանապարհը, հանվել է մինչև 6 փաստաթղթի ներկայացման պահանջը՝ խնայելով դրա համար ծախսվող մինչև մեկ շաբաթ ժամանակը:

«**Պահպանել առողջությունը**» կյանքի իրադարձության համատեքստում՝

- կրծքագեղձի, սիրտ-անոթային հիվանդությունների և շաքարային դիաբետի սքրինինգներին հերթագրվել հնարավոր է՝ Արմեդի հավելվածում ինքնուրույն հարցաշար լրացնելով.

- ժամանակավոր անաշխատունակության թերթիկները տրամադրվում են բացառապես թվային եղանակով.

- սեպտեմբերի 1-ից հոգեմետ դեղերի տրամադրումն իրականացվում է էլեկտրոնային դեղատոմսով. արդեն իսկ դուրս է գրվել 71 361 դեղատոմս.

- իրականացվել է նախագորակոչի տարիքի (16 - 17 տարեկան) արական սեռի ներկայացուցիչների 55%-ի և գորակոչի 18 տարեկանների 67%-ի բժշկական պատմությունների թվայնացումը.

- 1 222 ԱԱՊ բժիշկ (81,4%-ը) կիրառում է էլեկտրոնային առողջապահության ներդրված բոլոր գործիքները.

- մշակվել են արհեստական բանականության գործիքներ՝ առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի կառավարման նպատակով:

«Ունենալ տուն» կյանքի իրադարձության համատեքստում ՀՀ քաղաքացիներն աշխարհի ցանկացած վայրից կարող են էլեկտրոնային թվային ստորագրությամբ կնքել նոտարական վավերացում չպահանջող գործարքներ և դիմել իրավունքների ինքնաշխատ պետական գրանցման: Հիփոթեքի բազմակողմ, խառը պայմանագրերը կարող են կնքվել էլեկտրոնային միջավայրում: Միաժամանակ հասցեների ռեեստրը համալրվել է 100 000-ից ավելի նոր հասցեներով, ինչպես նաև ապահովվել է հասցեների ռեեստրի ինտեգրումը անշարժ գույքի գրանցման գործընթացին:

Արդարադատության համակարգին առնչվող թվային վերափոխման համատեքստում՝

- պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց ծանուցումներն այսուհետ կարող են իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ էականորեն նվազեցնելով թղթային ընթացակարգերը.

- հարկադիր կատարման վարույթի էլեկտրոնային համակարգում գրանցվել է շուրջ 7 399 անձ, գրասենյակով կամ բջջային հավելվածով կատարվել է ի սկզբանե նույնականացված տարբերակով շուրջ 260,6 մլն ՀՀ դրամի 11 911 վճարում, իսկ վճարային տերմինալներով և բանկերով կատարվել է ընդհանուր շուրջ 33,3 մլրդ ՀՀ դրամի 1 224 535 վճարում.

- գործարկվել են վարչական դատավարության էլեկտրոնային համակարգը և թեժ գիծը: Գործերի ավելի քան 70%-ը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով.

- գործարկվել է իրավական ակտերի հրապարակման միասնական համակարգի՝ «Arlis»-ի արդիականացված էլեկտրոնային հարթակը:

Մշակույթի ոլորտի թվային վերափոխման շրջանակում լավարկվել է թանգարանների էլեկտրոնային տոմսային միասնական համակարգը, և համակարգին միացել են ևս 18 թանգարանի մասնաճյուղեր՝ ընդհանուր թիվը հասցնելով 44-ի: Մասնավորի հետ համագործակցությամբ՝ 2 կազմակերպությունում փորձարկվում է թատերահամերգային կազմակերպությունների տոմսերի վաճառքի միասնական հարթակը:

Իրականացվել է ՀՀ արխիվային հավաքածուի կազմում ընդգրկված 4 266 058 արխիվային գործի պահպանություն, թվայնացվել է 429 158 փաստաթուղթ:

Մշակվել և ներդրվել է «Տեսել եմ» հարթակը և բջջային հավելվածը, որի միջոցով մարզային համայնքների բնակիչները հնարավորություն ունեն համայնքապետարանին տեղեկացնելու իրենց կողմից նկատված խնդրի մասին և տեղեկություն ստանալու դրա լուծման ընթացքի վերաբերյալ:

Մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացների արդյունավետության և թափանցիկության բարձրացման նպատակով կատարելագործվել են քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի (hartak.cso.gov.am) թվային լուծումները:

Կիրեռանվտանգության կարողությունների զարգացման շնորհիվ Հայաստանի համակարգչային միջադեպերի արձագանքման ազգային թիմը համակարգել է 82 միջադեպ և ստացել է 29 ահազանգ: 13 պետական կառույցում իրականացվել են կիրեռանվտանգության ներթափանցման թեստավորումներ 22 դոմենի համար և 4 խոցելիության գնահատում:

Կիրեռողիմակայունության ամրապնդման նպատակով իրականացվել են մասշտաբային միջոցառումներ, այդ թվում՝ Կիրեռանվտանգության հաքթոն, Սպանոսալիքների որսի դասընթաց Քարնեգի Մեյն համալսարանի հետ, Հեռահաղորդակցության միջազգային միության միջազգային կիրեռագորավարժություն, Հայաստանի առաջին ուսանողական ազգային կիրեռվարժանք, դպրոցական մրցույթ՝ «Կիրեռ-Քվեատ», «Թումո» ստեղծարար կենտրոնի հետ համատեղ 18-ից բարձր տարիքի երիտասարդների համար կիրեռանվտանգության ծրագիր՝ տարեկան շուրջ 200 մասնակցով:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Շարունակվել են վարչատարածքային բարեփոխումները. օրենսդրական փոփոխությունների արդյունքում ձևավորվել է ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքային փունջը, որում ներառվել են նախկին Վաղարշապատ և Խոյ համայնքները՝ վերջիններիս կազմում ընդգրկված 19 բնակավայրով: Այսպիսով՝ ՀՀ-ում համայնքների թվաքանակը նվազել է մինչև 70:

Համայնքների բյուջեներին հատկացվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների չափը 2026 թվականի համար նախատեսվել է 107,9 մլրդ ՀՀ դրամ, որը 9,7 մլրդ ՀՀ դրամով կամ 9,9%-ով ավելի է 2025 թվականին հատկացված 98,2 մլրդ ՀՀ դրամից և 59,9 մլրդ ՀՀ դրամով կամ 124,8%-ով ավելի է 2017 թվականին հատկացված 48 մլրդ ՀՀ դրամից:

2025 թվականին համայնքների բյուջեների փաստացի եկամուտները կազմել են շուրջ 329,1 մլրդ ՀՀ դրամ՝ գերազանցելով 2024 թվականի նույն ցուցանիշը 20,5%-ով կամ շուրջ 56,1 մլրդ ՀՀ դրամով, իսկ 2017 թվականինը՝ 2,6 անգամ կամ շուրջ 202,6 մլրդ ՀՀ դրամով:

2025 թվականին համայնքների բյուջեների փաստացի եկամուտների շուրջ 45,7%-ը ձևավորվել է սեփական եկամուտների հաշվին՝ կազմելով շուրջ 150,4 մլրդ ՀՀ դրամ,

ինչը գերազանցել է 2024 թվականի նույն ցուցանիշը 29,1%-ով կամ շուրջ 33,8 մլրդ ՀՀ դրամով, իսկ 2017 թվականինը՝ շուրջ 3,9 անգամ կամ 111.5 մլրդ ՀՀ դրամով:

Համայնքներում մասնակցային բյուջետավորման ընթացակարգերի ներդրման նպատակով 2025 թվականի պետական բյուջեում նախատեսվել է 1 մլրդ ՀՀ դրամ, որը պիլոտավորվել է 21 համայնքում: 2026 թվականին պետական բյուջեից համայնքներին մասնակցային բյուջետավորման հիմունքներով սուբվենցիաների տրամադրման գործընթացում ներգրավվել է արդեն 52 համայնք: Այդ նպատակով 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումները կրկնապատկվել են՝ կազմելով 2 մլրդ ՀՀ դրամ:

Տեղական հարկերի հավաքագրման էլեկտրոնային համակարգի ներդրման և ավտոմատացման արդյունքում 2025 թվականին կատարվել է 65,3 մլրդ ՀՀ դրամի էլեկտրոնային վճարում (վճարումների քանակը՝ ավելի քան 3,4 մլն հատ), որը 2024 թվականի 46,5 մլրդ ՀՀ դրամից ավելի է 18,8 մլրդ ՀՀ դրամով կամ 40,4%-ով:

2025 թվականին հավանության է արժանացել սուբվենցիայի 204 ծրագիր՝ շուրջ 103,5 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, որից շուրջ 54,7 մլրդ ՀՀ դրամը՝ ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորմամբ:

ՀՀ համայնքներում իրականացվել են շուրջ 61 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով սուբվենցիոն ծրագրեր, այդ թվում՝ ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 33,25 մլրդ ՀՀ դրամ, ՀՀ համայնքների համաֆինանսավորումը կազմել է 26,8 մլրդ ՀՀ դրամ, այլ ներդրողների համաֆինանսավորումը՝ 683,3 մլն ՀՀ դրամ:

Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում աշխատանքները կատարվել են հետևյալ ուղղություններով՝

- փողոցների հիմնանորոգում և ասֆալտապատում՝ շուրջ 66 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը՝ շուրջ 12,2 մլրդ ՀՀ դրամ.

- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցում և հիմնանորոգում՝ շուրջ 7,95 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը՝ շուրջ 4 մլրդ դրամ.

- ռոտզման համակարգերի կառուցում և հիմնանորոգում՝ շուրջ 5,1 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը՝ շուրջ 3,5 մլրդ ՀՀ դրամ.

- բնակավայրերի գազաֆիկացում՝ շուրջ 2,4 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը՝ շուրջ 1,4 մլրդ ՀՀ դրամ.

- նախադպրոցական հաստատությունների կառուցում, հիմնանորոգում և տարածքների բարեկարգում՝ շուրջ 6,3 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը՝ շուրջ 4,2 մլրդ ՀՀ դրամ.

- փողոցների հիմնանորոգում սալարկմամբ՝ շուրջ 3,7 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը՝ շուրջ 2,5 մլրդ ՀՀ դրամ.

- փողոցային լուսավորության համակարգերի կառուցում և հիմնանորոգում՝ շուրջ 705,6 մլն ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը՝ շուրջ 405,9 մլն ՀՀ դրամ.

- բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային տարրերի նորոգում՝ շուրջ 2,7 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը՝ շուրջ 1,26 մլրդ ՀՀ դրամ.

- հասարակական շենքերի կառուցում և հիմնանորոգում՝ շուրջ 2,23 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը՝ շուրջ 1,03 մլրդ ՀՀ դրամ.

- այգիների և պուրակների կառուցում և հիմնանորոգում՝ շուրջ 1 մլրդ ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը՝ 401,3 մլն ՀՀ դրամ.

- մեքենասարքավորումների և գույքի ձեռքբերում՝ շուրջ 865,4 մլն ՀՀ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը՝ 472,1 մլն ՀՀ դրամ:

Տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում ՀՀ բոլոր մարզերի 55 համայնքում իրականացվել է ավելի քան 150 ծրագիր:

Կառավարության որոշմամբ հաստատվել է Աղբահանության ռազմավարության կիրարկումն ապահովող 2025-2032 թթ. միջոցառումների ծրագիրը:

ՎՋԵԲ-ի հետ համագործակցությամբ ավարտվել են Հրազդան համայնքում նոր սանիտարական աղբավայրի և Մարտունի ու Աբովյան համայնքի Ակունք բնակավայրերում աղբի փոխաբեռնման կայանների կառուցապատման աշխատանքները, ձեռք են բերվել աղբավայրի և փոխաբեռնման կայանների շահագործման համար հատուկ մեքենասարքավորումներ, 28 աղբատար մեքենա, 7 000 աղբաման: Ծրագրի մեկնարկը պաշտոնապես տրվել է 2025 թվականի հուլիսի 8-ին:

Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ համագործակցությամբ և Շվեդիայի միջազգային զարգացման և համագործակցության գործակալության աջակցությամբ մշակվել է թափոնների կանխարգելման, ինչպես նաև սկզբնաղբյուրում աղբի տեսակավորման ազգային մոդել, և իրականացվում է պիլոտային ծրագիր՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում: Ծրագրի մեկնարկը տրվել է 2025 թվականի օգոստոսին:

2025 թվականին ՀՀ պետական բյուջեով հատկացվել է շուրջ 1,1 մլրդ ՀՀ դրամ սահմանամերձ 13 համայնքի 82 բնակավայրին գազի, էլեկտրաէներգիայի և ռոտոգման ջրի սակագնի մասնակի փոխհատուցման և անշարժ գույքի հարկի ամբողջական փոխհատուցման համար:

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Պետական գույքի կառավարման ոլորտում 2025 թվականի ընթացքում արձանագրվել են հետևյալ արդյունքները.

պետական գույքի կառավարումից ստացված ընդհանուր մուտքերը կազմել են շուրջ 12,3 մլրդ ՀՀ դրամ, որից համայնքային բյուջեներ փոխանցվել է շուրջ 1,1 մլրդ ՀՀ դրամ, այդ թվում՝ պետական գույքի վարձակալության գործարքներից

ստացված միջոցները նախորդ տարվա համեմատ աճել են 32,2 %-ով՝ կազմելով շուրջ 1,1 մլրդ ՀՀ դրամ:

Պետական կառավարման համակարգում, այդ թվում՝ ուժային մարմիններում, պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում տրանսպորտային միջոցների օպտիմալացման արդյունքում 2025 թվականին օտարվել է 495 միավոր տրանսպորտային միջոց, 2024 թվականին օտարվել է 206 միավոր տրանսպորտային միջոց (շուրջ 58,3%-ով ավելի): Հարկ է նշել նաև, որ 2025 թվականին տրանսպորտային միջոցների ընդհանուր թիվը կազմել է 688՝ 2017 թվականի 914-ի համեմատ:

Բաժնետիրական ընկերությունների, ՊՈԱԿ-ների և հիմնադրամների լուծարման գործընթացից ընդհանուր առմամբ ՀՀ պետական բյուջե է փոխանցվել շուրջ 21,5 մլն ՀՀ դրամ, որից շուրջ 16,08 մլն ՀՀ դրամը հարկերի և տուրքերի տեսքով, շուրջ 5,4 մլն ՀՀ դրամը լուծարումից հետո փոխանցվել է պետական բյուջե:

2025 թվականին կնքված 14 օտարման պայմանագրից 11 օտարման պայմանագրով գնորդները ստանձնել են ավելի քան 12,3 մլրդ ՀՀ դրամի ներդրում իրականացնելու պարտավորություն:

Բարելավման կարիք ունեցող մինչև տասը միավոր պետական անշարժ գույքի՝ ներդրումների իրականացման դիմաց վարձակալության տրամադրման արդյունքում օգտագործողների կողմից նախատեսվում է կատարել ընդհանուր առմամբ շուրջ 601,3 մլն ՀՀ դրամի ներդրում:

2025 թվականի հունվարի 3-ից դեկտեմբերի 30-ը ներառյալ էլեկտրոնային համակարգի միջոցով իրականացվել է 2 514 աճուրդ (210-ն անշարժ գույքի վաճառքի, 2 195-ը՝ տրանսպորտային միջոցների, բաժնետոմսերի և այլ շարժական գույքի վաճառքի, 109-ը՝ վարձակալության), կայացել է 630 աճուրդ (15-ն անշարժ գույքի վաճառքի, 542-ը՝ տրանսպորտային միջոցների և այլ շարժական գույքի վաճառքի, 73-ը՝ վարձակալության):

Կատարվել են օրենսդրական փոփոխություններ պետական մարմինների կողմից տարածքների վարձակալության ուղղությամբ: Պետական մարմինների կողմից գույքի անհատույց օգտագործումը փոխարինվել է վարձակալությամբ: Առաջիկա տարիների ընթացքում աստիճանաբար բոլոր պետական մարմինների և կազմակերպությունների և ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի միջև կնքվելու են վարձակալության պայմանագրեր:

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կատարելագործվել է մակրոտնտեսական կանխատեսումների և վերլուծությունների համակարգը՝ շարունակելով համարել դրանք ժամանակակից և առաջատար գործիքակազմերով: Մասնավորապես՝ մշակվել է մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման միասնական համակարգ, որը միտված է էապես բարձրացնելու ռազմավարական փաստաթղթերի (ՀՀ պետական բյուջեի

նախագիծ և միջնաժամկետ ծախսերի ծրագիր) մշակման գործընթացի արդյունավետությունը՝ միջնաժամկետ կանխատեսումների համատեքստում:

Գնահատվել են հարկման միջնաժամկետ հնարավորությունները՝ ապահովելով վերլուծական հիմքեր հարկային վարչարարության բարելավման և սովերի կրճատման աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Գնահատումները ցույց են տվել, որ վերջին տարիներին վարչարարության ճեղք/ՀՆԱ հարաբերակցությունը դրսևորել է շարունակական նվազման միտում՝ 2020 թվականի 6,5%-ի համեմատ 2021 թվականին կազմել է 5,6%, 2022 թվականին՝ 4,8%, 2023 թվականին՝ 4,2%, իսկ 2024 թվականին՝ 4%:

Ներդրվել է պետական պարտքի կայունության գնահատման նոր՝ SRDSF (Sovereign Risk and Debt Sustainability Framework) մոդելը՝ զուգահեռ պահպանելով նաև նախորդ՝ MAC DSA մոդելի կիրառումը: Վերջիններս ԱՄՀ և ՀԲ վերլուծական գործիքներ են, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու պետական պարտքի ռիսկերը, խոցելիության աղբյուրները և քաղաքականության անհրաժեշտ ուղղությունները, իսկ նոր գործիքը զգալիորեն ընդլայնում է ռիսկի հնարավոր աղբյուրների շրջանակը և տալիս ռիսկի մակարդակի առավել համալիր գնահատական:

2025 թվականի տարեվերջի դրությամբ պետական պարտքը կազմել է 5,5 տրլն ՀՀ դրամ կամ շուրջ 14,5 մլրդ ԱՄՆ դոլար:

Կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նախորդ տարվա համեմատ նվազել է 0,7%-ային կետով և կազմել 47,3%՝ պահպանվելով ՀՀ հարկաբյուջետային կանոններով թիրախավորվող 50%-ից ցածր մակարդակում: Պարտք/ՀՆԱ հարաբերակցությունն արտացոլում է հարկաբյուջետային քաղաքականության կայունությունը և պահպանվող դրական մակրոտնտեսական միջավայրը: Միաժամանակ շարունակվել է պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման կառուցվածքում ՀՀ դրամով փոխառությունների դերի մեծացման գործընթացը:

2025 թվականի ընթացքում ներքին փոխառու միջոցների հաշվին պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը կազմել է 297 մլրդ ՀՀ դրամ կամ փոխառու միջոցներով ֆինանսավորման 67,7%-ը, իսկ արտաքին փոխառու միջոցների հաշվին պակասուրդի զուտ ֆինանսավորումը՝ 142 մլրդ ՀՀ դրամ կամ փոխառու միջոցներով ֆինանսավորման շուրջ 32,3%-ը:

2025 թվականի տարեվերջի դրությամբ ՀՀ դրամով արտահայտված պարտքի կշիռը կազմել է 52,9%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 2,2 տոկոսային կետով: Այս պայմաններում էականորեն մեղմվել է պարտքի զգայունությունը փոխարժեքի տատանումների նկատմամբ:

Միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցության շրջանակներում ձեռք են բերվել հետևյալ պայմանավորվածությունները.

- արժույթի միջազգային հիմնադրամի պահուստային ծրագրի երկու վերանայումների իրականացում և բոլոր հենանիշերի կատարմամբ ծրագրի հաջող ամփոփում, արդյունքում՝ 128,8 մլն ՀՓԻ (մոտավորապես 175 մլն ԱՄՆ դոլար) արժողությամբ նոր՝ 36-ամսյա պահուստային ծրագրի հաստատում.

- բյուջետային աջակցության միջոցների ներգրավում 1 բյուջետային աջակցության վարկ (շուրջ 176 մլն ԱՄՆ դոլար) և 2 նպատակային ծրագրի շրջանակներում բյուջետային աջակցության ներգրավում (շուրջ 68 մլն ԱՄՆ դոլար)։
- շուրջ 900 մլն ԱՄՆ դոլար ծավալով 7 նպատակային վարկային ու շուրջ 40 մլն ԱՄՆ դոլար ծավալով 4 դրամաշնորհային համաձայնագրի կնքում։
- անդամակցություն նոր միջազգային ֆինանսական կառույցին՝ Ասիական ենթակառուցվածքային ներդրումների բանկին։
- դոնոր երկրի կարգավիճակի ձեռքբերում Միջազգային զարգացման ընկերակցությունում, ինչպես նաև Ասիական զարգացման հիմնադրամում։
- շուրջ 40 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհային միջոցների ստացում Գլոբալ արտոնյալ ֆինանսավորման գործիքի հիմնադրամից։

Կառավարության ծրագրով սահմանված տնտեսական և սոցիալական նպատակների իրագործման համար իրականացվել են մի շարք բարելավումներ հարկային օրենսդրության մեջ։

Վերանայվել են թեթև մարդատար ավտոմեքենաների ԱԱՀ-ով և շահութահարկով հարկման կարգավորումները, միատեսակ մոտեցում է սահմանվել պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում շահութահարկ վճարողների կողմից որպես ձեռք բերված, կառուցված, ստեղծված կամ մշակված ակտիվների գծով արդեն իսկ կատարված ծախսերի փոխհատուցում ստացված նպատակային դրամական միջոցների գծով եկամտի որոշման առումով, ինչպես նաև բարելավվել է պետության կողմից ֆինանսավորվող՝ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շահառու համարվող տնտեսավարող սուբյեկտների հարկային միջավայրը։

Սահմանափակվել են մասնագիտական աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը հարկման հատուկ համակարգերում իրականացնելու հնարավորությունը։

Բարելավումներ են իրականացվել ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման համակարգում։ Մասնավորապես՝ վերանայվել և ընդլայնվել են սոցիալական ծախսերի առանձին ուղղությունները, սահմանվել են հայտարարագիրը հարկային մարմնի կողմից նախալրացման և ֆիզիկական անձանց եկամուտների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, ինչպես նաև ֆիզիկական անձանց սոցիալական ծախսի փոխհատուցման պայմանները։ Ուժը կորցրած է ճանաչվել հայտարարագիրը չներկայացնելու համար վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված պատասխանատվությունը։

Կրկնակի հարկումը բացառող միջազգային համաձայնագրեր են ստորագրվել Ճապոնիայի և Հոնկոնգի հետ։

Հարկաբյուջետային ոլորտում 2021-2025 թթ. էականորեն բարելավվել է հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը. 2021 թվականին այն կազմել է 23%, 2025

թվականին՝ 24,1%: Այսինքն՝ 5-ամյա հորիզոնում բարելավումը կազմել է շուրջ 1,1 տոկոսային կետ: Էականորեն նվազել է Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը: 2021 թվականի 60,2% մակարդակի համեմատ այն նվազել է՝ 2022 թվականին կազմելով 46,7%, իսկ 2025 թվականին կազմել է 47,3%:

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի ընթացքում հարկ վճարողներին վերադարձվել է շուրջ 409,2 մլրդ ՀՀ դրամ (ներառյալ հիփոթեքի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը և սոցիալական կրեդիտները), ինչը նախորդ տարվա նույն ցուցանիշից ավելի է շուրջ 16,6 մլրդ ՀՀ դրամով կամ 4,2%-ով: Աճը հիմնականում պայմանավորված է հիփոթեքի տոկոսագումարների դիմաց վերադարձված և սոցիալական ծախսերի մասով փոխհատուցված գումարների աճով:

2025 թվականին հաշվարկային փաստաթղթերով (այդ թվում՝ ՀԴՄ կտրոններով) հարկ վճարողների կողմից հայտարարագրվել է շուրջ 16 տրլն ՀՀ դրամ շրջանառություն, մինչդեռ 2024 թվականի նույն ժամանակահատվածի նույն ցուցանիշը կազմել է 13,9 տրլն ՀՀ դրամ: Հարկ վճարողները 2024 թվականի համեմատ հայտարարագրել են 2,1 տրլն ՀՀ դրամով կամ 15,2%-ով ավելի իրացում: Բացի այդ՝ 2024 թվականի սեպտեմբերից գործող տաքսի ծառայությունների մասով 2025 թվականին հայտարարագրված գործարքների թիվը կազմել է 105,5 մլն՝ 121,7 մլրդ ՀՀ դրամ արժեքով:

2025 թվականին իրականացված 876 համալիր հարկային ստուգումների արդյունքում արձանագրվել է շուրջ 40 մլրդ ՀՀ դրամ (այդ թվում՝ ներկայացված ճշտված հաշվարկներով առաջացած լրացուցիչ հարկ)՝ նախորդ տարվա ընթացքում իրականացված 1 104 ստուգմանը արձանագրված 62 մլրդ ՀՀ դրամի (այդ թվում՝ ներկայացված ճշտված հաշվարկներով առաջացած լրացուցիչ հարկ) դիմաց:

Վերլուծությունների, կամերալ և թեմատիկ ուսումնասիրությունների արդյունքում 2025 թվականի ընթացքում պետական բյուջե հաշվեգրվել են 74,8 մլրդ ՀՀ դրամ լրացուցիչ հարկեր, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ամիսների ցուցանիշը 7,4 մլրդ ՀՀ դրամով կամ 11%-ով:

2025 թվականի հունվարի 1-ից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով առաջացած և Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան դիսկային չհամարվելու դեպքում փոխհատուցվող գումարը մուտքագրվում է հարկ վճարողի միասնական հաշվին՝ առանց ուսումնասիրության և ավտոմատ եղանակով: 2025 թվականի արդյունքներով 1 847 դեպքով հարկ վճարողների միասնական հաշվին փոխանցվել է 16,8 մլրդ ՀՀ դրամ:

2025 թվականի ընթացքում ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման շրջանակներում ներկայացվել է 182 հազար հայտարարագիր, ևս 692 հազար հայտարարագիր ձևավորվել է ՀՀ ՊԵԿ-ի կողմից: Ներկայացված

հայտարարագրերով վճարման ենթակա հարկը կազմել է 8,6 մլրդ ՀՀ դրամ, ինչը նախորդ տարվա նույն ցուցանիշից ավելի է 4 մլրդ ՀՀ դրամով կամ 89,2%-ով:

Կառավարության որոշմամբ հաստատվել է 2025 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների աջակցության ծրագիրը, որի շրջանակներում 134 տնտեսավարողի կողմից ներկայացվել են դիմումներ, որոնցից պայմաններին բավարարել են 92-ը: Ընդհանուր աջակցության ծրագրի շրջանակներում վերադարձվել է 49,7 մլն ՀՀ դրամ:

Ընդունվել են վարչարարության բարելավման վերաբերյալ մի շարք օրենսդրական փոփոխություններ՝

- նույնականացման միջոցներով դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկի ընդլայնում, այդ ապրանքների հետագծելիության ապահովման, դրոշմավորման համակարգի կատարելագործման և հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով նոր կարգավորումների սահմանում.

- նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվություն հարկային մարմնի միասնական շտեմարան չփոխանցելու կամ փաստացի փոխանցման ենթակա տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն փոխանցելու համար պատասխանատվության սահմանում.

- ՀՀ ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքների պարզեցված ընթացակարգով՝ էլեկտրոնային եղանակով տրամադրման գործընթացի սահմանում.

- հայտարարագրման համակարգի պարզեցման նպատակով եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկում (հայտարարագրում) որոշ նվազեցվող (չհարկվող) եկամուտների պարտադիր լրացման առումով նվազագույն շեմի սահմանում, ինչպես նաև հարկային մարմնի տեղեկատվական բազայում որոշ եկամուտների վերաբերյալ տվյալների առկայության դեպքում՝ ինքնաշխատ լրացման դրույթների սահմանում.

- հարկային օրենսդրությամբ կրիպտոակտիվների հարկման առանձնահատկությունների սահմանում.

- միասնական հաշվի համակարգի ներդրման նպատակով համապատասխան մաքսային վճարների գծով պարտավորությունների հաշվարկմանը և գանձմանն առնչվող կարգավորումների վերանայում:

Օրինապահ հարկ վճարողի հավաստագիր է տրամադրվել 57 տնտեսավարող սուբյեկտի (որից 1-ը՝ LSO ռեեստրում գրանցվելու համար):

2025 թվականի մայիսից գործարկվել է ապրանքների և տրանսպորտային միջոցների ինքնաշխատ բաց թողման գործիքակազմը: 2025 թվականի մայիս-դեկտեմբեր ժամանակահատվածի արդյունքներով ինքնաշխատ բաց թողման տեսակարար կշիռը կազմել է բոլոր բաց թողնված ապրանքների հայտարարագրերի 6,75%-ը: Դեկտեմբերի արդյունքներով այդ ցուցանիշը կազմել է 8,15%, 2024 թվականի ընթացքում ինքնաշխատ բաց թողման տեսակարար կշիռը կազմել է ապրանքների հայտարարագրերի ընդամենը 0,06%-ը:

2025 թվականի հունիսի 1-ից ապրանքների արտահանման գործընթացը կազմակերպվել է 24/7 ռեժիմով: Մինչ այս ոչ աշխատանքային օրերին և ժամերին արտահանման ձևակերպումները կարող էին իրականացվել միայն պետական սահմանի անցման կետերում:

2025 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ ապրանքների գնման դեպքերի («կարմիր ուղի») թվի տեսակարար կշիռը կազմել է 4,8%, որը 2024 թվականի համեմատությամբ նվազել է 1%-ային կետով, իսկ 2017 թվականի համեմատությամբ նվազել է շուրջ 5 անգամ (2017 թվականին գնման դեպքերի թվի տեսակարար կշիռը կազմել է 23%): Միաժամանակ «կանաչ ուղի» միջերեսային արտացոլմամբ ապրանքների հայտարարագրերի բացթողումը կազմել է շուրջ 73%՝ 2024 թվականի համեմատ 16,6 տոկոսային կետով ավելի:

2025 թվականի հոկտեմբերի 1-ից բեռնափոխադրող կազմակերպությունների միջոցով ֆիզիկական անձանց անվամբ ՀՀ ներմուծված անձնական օգտագործման ապրանքների մաքսային ձևակերպման ամբողջ գործընթացն իրականացվում է մեկ վայրում՝ այն ժամանակավոր պահպանման պահեստի սպասարկման սրահում, որտեղ փաստացի գտնվում են տվյալ ապրանքները:

2025 թվականին նախնական մաքսային հայտարարագրման ինստիտուտից օգտվել է 377 կազմակերպություն՝ 2024 թվականի համեմատ գրանցելով 49% աճ, ներկայացվել է 22 459 նախնական մաքսային հայտարարագիր, որը գերազանցում է 2024 թվականի նույն ցուցանիշը 21,2%-ով, ներմուծված ապրանքների քանակը 2025 թվականի ընթացքում կազմել է 1 317 916 տոննա, որը 2024 թվականի ցուցանիշը գերազանցել է 33,49%-ով:

«Թույլատվական փաստաթղթեր» (sw.gov.am) ենթահամակարգի միջոցով հայտատուների կողմից երկակի և (կամ) ռազմական նշանակության ապրանքների վերաբերյալ եզրակացություն ստանալու համար ներկայացված և ուսումնասիրված հայտերի ընդհանուր քանակը 2025 թվականի ընթացքում կազմել է 14 865 հայտ (2024 թվականի համեմատ աճել է շուրջ 67,15%-ով): Ներկայացված հայտերի հիման վրա ուսումնասիրվել է 49 891 ապրանքատեսակ:

Մաքսային մարմնի կողմից հայտերի ուսումնասիրմանն ուղղված աշխատանքների արդյունքում տնտեսավարողները տնտեսել են ժամանակ (յուրաքանչյուր հայտի մասով՝ շուրջ 2-4 աշխատանքային օր) և ֆինանսական միջոցներ՝ շուրջ 194,6 մլն ՀՀ դրամ (2024 թվականի ցուցանիշը գերազանցել է շուրջ 57,8%-ով), որից 128,7 մլն ՀՀ դրամը՝ ռազմական նշանակության ապրանքների և 65,8 մլն ՀՀ դրամ՝ երկակի նշանակության ապրանքների մասով ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում:

Սահմանային անցակետերի արդիականացման շրջանակներում՝

- ավարտվել է ՀՀ պետական սահմանի «Բագրատաշենի» ցամաքային անցման կետի ենթակառուցվածքների վերակառուցման աշխատանքների 1-ին փուլը.
- Ռենտգեն պատկերների կենտրոնացված վերլուծությունների իրականացման նպատակով ԱՄՆ Արտահանման վերահսկման և սահմանների

անվտանգության ծրագրի շրջանակում մեկնարկել են ժամանակակից մոնիթորինգային կենտրոնի ստեղծման աշխատանքները:

- ՀՀ ՊԵԿ-ի համակարգում ռադիացիոն հսկողության արդյունավետ իրականացման նպատակով ԱՄՆ-ի Էներգետիկայի դեպարտամենտի կողմից նվիրաբերվել է 7 ռադիոմետր-սպեկտրոմետր, ինչպես նաև նվիրաբերվել է 5 CT-40 մակնիշի մաքսանենգության դետեկտոր ճամպրուկ:

- «Բագրատաշեն» սահմանային անցման կետում տեղադրվել է բեռնատարների էլեկտրոնային ստացիոնար 2 կշեռք:

Մաքսային սպասարկման ոլորտում արձանագրվել են աշխատանքի արդյունավետության բարձրացման հետևյալ ցուցանիշները.

- օրական սպասարկվող բեռնատարների թվի աճը կազմել է 5%.
- ներմուծման ձևակերպումների գործընթացի տևողությունը միջինը արագացվել է շուրջ 10%-ով.
- մաքսային հսկողության ընթացքում զննման դեպքերը 2025 թվականի ընթացքում նախորդ տարվա 8% ցուցանիշից հասել են 4,9%-ի.

- 2025 թվականին մաքսային մարմինների կողմից իրականացված հսկողական միջոցառումների արդյունքում արձանագրվել է հետբացթողումային հսկողության արդյունավետության աճ՝ 2024 թվականի համեմատ 21,3%-ով: 2025 թվականին հետբացթողումային հսկողության շրջանակում ապահովվել է շուրջ 1,4 մլրդ ՀՀ դրամ (ներառյալ անբողոքարկելի չդարձած ակտերը), 2024 թվականին նույն ցուցանիշը կազմել է շուրջ 1,1 մլրդ ՀՀ դրամ: Ընդ որում՝ ներառված չեն պետական այլ գերատեսչությունների կողմից իրականացված ստուգումների արդյունքները, որոնց հաշվարկներն ու ստուգման ակտերը կազմվել է Հետբացթողումային հսկողության և ստուգումների վարչության կողմից, 2024 թվականին՝ 966 մլն ՀՀ դրամ, և 2025 թվականին՝ 218 մլն ՀՀ դրամ:

Մաքսային իրավախախտումների մասով խոշոր բացահայտումներն են՝

- շուրջ 250 տրանսպորտային միջոցների ՀՀ ապօրինի տեղափոխման դեպքերի բացահայտում՝ 1,3 մլրդ ՀՀ դրամ պետությանը հասցված վնաս.
- 38 դեպքով կեղծ վկայականների հիման վրա մաքսային վճարների արտոնությունների ստացման դեպքերի բացահայտում (մշտական բնակության քողի ներքո)՝ 228 մլն ՀՀ դրամ պետությանը հասցված վնաս.
- ՌԴ կեղծված համարանիշներով մեքենաների ներմուծման բացահայտում 72 մլն ՀՀ դրամ պետությանը հասցված վնաս.
- կեղծված լիցենզիայի հիման վրա 7 551 տոննա ցեմենտի ներմուծման բացահայտում՝ 60 մլն ՀՀ դրամ պետությանը հասցված վնաս:

Հարկային և մաքսային իրավախախտումների դեմ պայքարի շրջանակներում՝

- 561 սնանկ ճանաչելու պահանջի մասին և 630 պահանջը հաստատելու մասին դիմումներով վերականգնված գումարը կազմում է 7,3 մլրդ ՀՀ դրամ.

- վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժ նշանակելու մասին 42 332 որոշումներով փաստացի գանձվել է 697,2 մլն ՀՀ դրամ.

- կայացվել է հարկ վճարողների չկատարած հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ 122 600 որոշում՝ ընդհանուր 143,2 մլրդ ՀՀ դրամի չափով, ՀՀ ԱՆ ՀԿ ծառայություն հարկադիր կատարման են ներկայացվել 93 447 չկատարած հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ կայացված, անբողոքարկելի դարձած որոշումներ/ստուգման ակտեր՝ ընդհանուր 51,6 մլրդ ՀՀ դրամ մնացորդի չափով, իրականացված աշխատանքների արդյունքում պետական բյուջե է վերականգնվել 109,6 մլրդ ՀՀ դրամ.

- ՀՀ ՊԵԿ ՀՕՀ վարչության արձանագրությունների հիման վրա կայացվել է 717 որոշում, նշանակված տուգանքի գումար՝ 1,9 մլրդ ՀՀ դրամ, ՀՀ հարկային օրենսգրքի 422-րդ և 423-րդ հոդվածներով կայացվել է 294 որոշում՝ առաջադրված գումարը՝ 69,9 մլն ՀՀ դրամ, ՀՀ հարկային օրենսգրքի 402.1-ին և 402.2-րդ հոդվածներով կայացվել է 60 որոշում, առաջադրված գումարը՝ 256,3 մլն ՀՀ դրամ, ներկայացված աշխատանքների արդյունքում պետական բյուջե է վերականգնվել 452,7 մլն ՀՀ դրամ.

- ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված հայցադիմումներով առկա է 6 բավարարված վճիռ 400 հազար ՀՀ դրամ հայցագնով, և 1 հայց մերժվել է: ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացվել է 2 290 հայցադիմում՝ 28,7 մլրդ ՀՀ դրամ հայցագնով, որից բավարարվել է 181 հայց՝ 1,3 մլրդ ՀՀ դրամի, մերժվել է 335 հայց՝ 2,6 մլրդ ՀՀ դրամի: Շարունակվել են Հայաստան-Վրաստան սահմանին համատեղ օգտագործման ցամաքային սահմանային անցման կետի ներդրմանն ուղղված աշխատանքները, ինչպես նաև հայ-իրանական սահմանին Պարզեցված կամ Կանաչ մաքսային միջանցքի ներդրման աշխատանքները:

Մաքսային համագործակցության շրջանակներում կազմակերպվել է 12 միջազգային և տարածաշրջանային աշխատաժողով, իսկ հարկային համագործակցության մասով՝ միջազգային և տարածաշրջանային 2 աշխատաժողով:

Տրանսֆերային գնագոյացման կարգավորումների ուղղությամբ կատարված աշխատանքների շրջանակներում կնքվել է առաջին նախնական գնագոյացման համաձայնագիրը հարկ վճարողի հետ, որի արդյունքում բարելավվել է հարկային մարմին-հարկ վճարող թափանցիկ համագործակցությունը:

ՏՀԶԿ «Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի» ըստ հարցման տեղեկությունների փոխանակման ստանդարտի ներդրման գործընթացի փորձագիտական գնահատականը 2025 թվականին հաստատվել է որպես «մեծամասամբ համապատասխանում է»: ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման ստանդարտի շրջանակներում, 2025 թվականին գործընկեր երկրների հետ իրականացվել է ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ առաջին փոխանակումը:

Հարկ վճարողների տարբեր խմբերի համար անցկացվել է 90 ուսումնական միջոցառում՝ 1 865 մասնակցով:

2025 թվականի ընթացքում հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովն ուսումնասիրել է հարկ վճարողների կողմից ներկայացված 2 281 բողոք, որոնցից 33,3%-ը կամ 759 բողոք ամբողջությամբ կամ մասնակի բավարարվել է, իսկ 311-ը կարճվել է:

Հաստատվել են հարկային վարչարարության բարեփոխումների և մաքսային ծառայության առաջիկա տարիների զարգացման ռազմավարական ծրագրերը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈՒՑՈՒՄՆԵՐ

ՄԺԾԾ և բյուջետային գործընթացներում ներդրվել են բյուջետային ծախսերի առաջնահերթությունների որոշման և ըստ առաջնահերթությունների ծրագրերի դասակարգման չափորոշիչները, ինչպես նաև բազային բյուջեի գործիքակազմ:

ՄԺԾԾ փաստաթղթում թարմացվել են մակրոտնտեսական, հարկաբյուջետային և ծախսային շրջանակները. տեղեկատվությունը ներկայացվել է մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակները՝ 5-ամյա կտրվածքով (2026-2030), բյուջետային ծախսային ծրագրերը՝ 3-ամյա կտրվածքով (2026-2028)՝ ուղերձի առանձին հավելվածով:

2025 թվականի պետական բյուջեով ներդրվել է կապիտալ ծախսերի հաջորդ բյուջետային տարի տեղափոխման մեխանիզմ, որի շրջանակներում հատկացվել է 13,9 մլրդ ՀՀ դրամ՝ 2024 թվականին ստանձնած, սակայն չիրացված պայմանագրային պարտավորությունների ֆինանսավորման նպատակով:

ՀՀ ֆինանսների նախարարությունում ստեղծվել է բյուջետային ծրագրերի գնահատման ստորաբաժանումը: Մշակվել և փորձարկվել են գնահատման համակարգի մեթոդաբանական հիմնական գործիքները՝ հիմնված ՏՀԶԿ չափանիշների վրա, նախնական գնահատման է ենթարկվել շուրջ 240 բյուջետային միջոցառում:

Ժամանակակից ֆունկցիոնալ պահանջներին համապատասխան՝ էլեկտրոնային գնումների նոր համակարգի ներդրման շրջանակներում 2025 թվականի նոյեմբերին ամփոփվել են մրցույթի 2-րդ փուլի գնահատման արդյունքները: Հաղթող մասնակից ընտրված ընկերության հետ 2026 թվականի հունվարին կնքվել է պայմանագիր:

Հստակեցվել են հանրային ներդրումների կառավարման գործընթացները և պահանջները, ներդրվել են ծրագրերի պատրաստվածության գնահատման համակարգ և ՀՆԿ ծրագրերի շարունակական մշտադիտարկում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ